



# ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ

- «ՈՐԵՎԷ ՄԵԿԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՊԱՏԺՎԵԼ ՉԳՈՐԾԱԾ  
ՀԱՆՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ...»**  
ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանի  
մամուլի ասուլիսը
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՅԱՆԻ ՂԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈՐԱԿ**
- ԳԵՐԻՇԽՈՂ ԳԻՐՔԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԳՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ**  
Եվրոպական իրավունքի համատեքստում
- ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿՐԳԻ  
ՀԱՄԱՊԱՐԹԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐԸ**
- ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԱԼՍՅԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**  
Արդիականություն և իրավունք

# ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԴԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅԸ ԼՂՀ



2014 թվականի հունիսի 20-ից, եռօրյա աշխատանքային այցով  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում է գտնվել  
ՀՀ գլխավոր դատախազ Գեվորգ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ գլխավորած  
պատվիրակությունը:

Նույն օրը Հայաստանի Հանրապետության  
դատախազության պատվիրակությանն ընդունել է  
ԼՂՀ Նախագահ ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԸ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ և ԼՂՀ դատախազությունների  
համագործակցությանը վերաբերող հարցեր:



Անդրադառնալով հայկական երկու հանրապետությունների դատախազությունների փոխգործակցությանը՝ ԼՂՀ Նախագահն նշել է, որ այն ունի ձևավորված ավանդույթներ, դրսևորվում է գրեթե բոլոր ուղղություններում և, ընդհանուր առմամբ, գոհացուցիչ է՝ հավելելով, որ անհրաժեշտ է ամել հնարավորը համագործակցությունը էլ ավելի զարգացնելու ու խորացնելու համար:

ՀՀ գլխավոր դատախազ **Գևորգ Կոստանյանը** կարևորել է Հայաստանի և Արցախի դատախազությունների ջանքերի մեկտեղումը մեկ միասնական նպատակի շուրջ, այն է՝ օրինականության երաշխավորում ու արդարության հաստատում: ➡ 2

# №83

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀՐԱՏԱՐԱՎՎՈՒՄ Է 1997 ԹՎԱԿԱՆԻՑ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԷՄԻԼ ԲԱԲԱՅԱՆ - նախագահ  
ԳՈՒՐԳԵՆ ԱՄԲԱՐՅԱՆ  
ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ  
ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ  
ՎԱՅՐԱՄ ՇԱՀԻՆՅԱՆ  
ԳԱՌՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ  
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

## Գլխավոր խմբագիր՝ Գ. ԱՄԲԱՐՅԱՆ

Խմբագրության հասցեն.  
375010, ք. Երևան, Հանրապետության փ., 85  
Հեռախոս՝ 52-33-76, Ֆաքս՝ 56-76-72  
[www.genproc.am](http://www.genproc.am)  
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,  
ոճը, տառաձևերը և էջադրումը՝  
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

Հանձնված է արտադրության՝  
26.06.2014 թ.  
Ֆորմատ՝ 70 X 100 1/16  
Տպաքանակը՝ 500  
Ծավալը՝ 8 պայմ. մամուլ  
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է  
«Պոլիգրաֆ բիզնես» ՍՊԸ տպարանում  
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2014 թ.

# 2014

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.) ատենախոսությունների հիմնադրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

# ՀՀ ՂԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅԸ ԼՂՀ



(Սկիզբը՝ կազմի 2-րդ էջում)

Նման ներկայացուցչական կազմով ՀՀ դատախազության պատվիրակությունն առաջին անգամ էր Արցախում: ՀՀ գլխավոր դատախազ **Գևորգ Կոստանյանը** վստահեցրել է, որ նման այցելությունները կլինեն պարբերական: Չտարակուսելով, որ արցախյան եռօրյան արդյունավետ կլինի դատախազական կորպուսի ղեկավար կազմի համար: ՀՀ գլխավոր դատախազը համոզմունք է հայտնել, որ յուրաքանչյուրի մոտ ձևավորվելիք գիտակցությունը կփոխանցվի համակարգի բոլոր ստորաբաժանումների ներկայացուցիչներին և տեղի կունենա արժեհամակարգի փոփոխություն: Այն իմաստով, որ յուրաքանչյուր որոշում կայացնող կհասկանա, որ իր վճիռը ուղղակի ազ-

դեցություն ունի զինվորի, հետևաբար երկրի պաշտպանունակության վրա:

ԼՂՀ նախագահի հետ հանդիպումից հետո կայացել է ՀՀ և ԼՂՀ դատախազությունների համատեղ նիստը: Քննարկվել են երկու զերատեսչությունների համագործակցությանն առնչվող բազմազան հարցեր, մասնավորապես պետական շահերի պաշտպանության, կոռուպցիայի, թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտներում: Նիստի ավարտին ՀՀ գլխավոր դատախազ **Գևորգ Կոստանյանը** հուշանվեր է հանձնել ԼՂՀ գլխավոր դատախազ **Արշավիր Ղարամյանին**:



ՀՀ պաշտպանական բանակի դիրքերում

# «ՈՐԵՎԷ ՄԵԿԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՊԱՏԺՎԵԼ ՉԳՈՐԾԱԾ ՀԱՆՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ...»

## Լրագրողների հետ հանդիպման ժամանակ վստահեցրեց ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ ԿՈՍՏԱՆՅԱՆԸ

2014 թվականի հունիսի 25-ին` ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը ասուլիսի էր հրավիրել զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին: Լրագրողների հարցերին պատասխանելուց առաջ ՀՀ գլխավոր դատախազն իր ներածական խոսքում առաջին հերթին կատարեց.

### Կառուցվածքային փոփոխությունները.

Դատախազության համակարգում կատարված կառուցվածքային փոփոխությունների նպատակն այն է, որ կառուցվածքային ստորաբաժանումները մասնագիտաման ըստ դատախազական լիազորությունների, ի տարբերություն նախկինում սահմանված կարգի, որտեղ կառուցվածքային միավորները բաժանված էին ըստ հանցատեսակների: Աշխատանքի կազմակերպման այս մեխանիզմը դատախազին հնարավորություն է տալիս մասնագիտամալու ոչ թե ըստ հանցագործության բնույթի, այլ ըստ դատախազական լիազորության:

### Կադրային քաղաքականություն.

Դատախազության համակարգի գործունեությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա` կաշառքի բացարձակ վերացում, մասնագիտական բարձր գիտելիքներ, աշխատանքի նկատմամբ պրոֆեսիոնալ մոտեցում, անվերապահ ապաքաղաքականացվածություն:

Վերջին ինը ամիսների կադրային փոփոխությունների արդյունքում դատախազության համակարգից դուրս է եկել 80-ից ավելի դատախազ, որոնց մի մասի գործունեությունն անհամատեղելի է եղել առաջադրված աշխատանքային չափորոշիչներին: Հմակարգից դուրս են եկել նաև պրոֆեսիոնալ և ազնիվ դատախազներ, ովքեր դրա համար ունեցել են սոցիալական, նյութական կամ անձնական պատճառներ:

Կադրային փոփոխությունների, կամ համակարգում սերնդափոխության անհրաժեշտությունն ակնհայտ էր: Արդյունքում, դատախազության համակարգը համալրվել է նոր, երիտասարդ, գիտական մտածելակերպ ունեցող և գիտական ասպարեզում իրենց դրսևո-



րած մասնագետներով /20-ից ավելի գիտությունների թեկնածու/: Փոխվել է դատախազության համակարգի գրեթե 1/3-ը: Սերնդափոխությունը և նոր մտածելակերպը ինքնին կհանգեցնի նաև դատախազի նոր կերպարի ձևավորմանը:

### Կոռուպցիայի դեմ պայքար.

Կոռուպցիայի դեմ անողոք պայքարը ևս դատախազության գործունեության գլխավոր սկզբունքներից է: Կաշառքի սխեման հետևյալն էր` կաշառքի պայմաններում, իրավապահ բլոկում հատկապես, ըստ էության գոհ են լինում բոլոր կողմերը, օրինակ` մեղադրյալը կամ կասկածյալը իր բոլոր բարեկամներով, տուժողը, որովհետև մինչև կաշառքի սխեմայի աշխատելը, տուժողի հետ որոշակի հարցեր են համաձայնեցվում, կաշառակեր ոստիկանը, քննիչը, դատախազը, դատավորը` իրենց հարազատներով: Սա մարդկանց մի ստվար խումբ է, որտեղ, որպես կանոն, բոլորը գոհ են, քանի որ հասնում են ցանկալի արդյունքի: Կաշառքի սխեմայի բացակայության պայ-

մաններում, որքան էլ տարօրինակ թվա, դժգոհությունները բավական շատ են լինում, քանի որ վերոնշյալ անձանցից որևէ մեկը չի հասնում իր համար ցանկալի և, ըստ էության, ապօրինի ակնկալիքին:

**«Օրենքի առաջ բոլորը հավասար են».**

Սա դատախազության գործունեություն հիմնարար սկզբունքն է: Վերջին ամիսներին կատարված լուրջ և ծավալուն աշխատանքների արդյունքում, այսօր արդեն, կարող ենք փաստել, որ որևէ մեկը չի կարող պատժվել իր չկատարած հանցանքի համար, և մյուս կողմից, հանցավոր արարք գործած յուրաքանչյուր անձ կստանա իր գործած հանցանքին համարժեք պատիժ: Այդ են վկայում նաև վերջին շրջանում կայացված արդարացման

դատավճիռները, մեղադրանքի, խափանման միջոցների փոփոխությունները, ինչը երբեմն հանրությանը ներկայացվում և բնութագրվում է որպես դատախազի աշխատանքի թերացում, այնինչ արդարացման դատավճիռների, մեղադրանքի և խափանման միջոցների փոփոխման վերջին ամիսներին արձանագրված դեպքերի հիմքում հիմնականում դատախազի պրոֆեսիոնալ և անկողմնակալ մոտեցումն է:

Ասուլիսի ավարտին ԳԳ գլխավոր դատախազը պատասխանեց լրագրողների բազմաթիվ հարցերին:

**Ասուլիսն ամբողջությամբ կարող եք դիտել 1in.am լրատվական կայքի հղումով (<https://www.youtube.com/watch?v=HAwR2XkNBBA&feature=youtu.be>)**

# **ՆԱԽԱՔՆՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ ՔՐԵՈՐԵՆ ՊԱՏԺԵԼԻ Է**

**«Ղ գլխավոր դատախազությունը, կարևորելով քրեական գործերի քննության ընթացքում կողմերի իրավունքների պաշտպանությունը և օրինականության նկատմամբ հսկողությունը, հիշեցնում է, որ այդ իրավունքների լիարժեք ապահովման կարևոր նախապայման է նախնական քննության տվյալների գաղտնիության ապահովումը:**

Նախաքննական գաղտնիք հանդիսացող տվյալների հրապարակումը կարող է վնասել կողմերի օրինական շահերին ու իրավունքներին, խոչընդոտել քրեական գործի քննությանը, հանցագործության բացահայտմանը:

ԳԳ գլխավոր դատախազությունը հիշեցնում է. հանգամանքների բերումով նախնական քննության տվյալների տիրապետող սուբյեկտների համար առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության, վերոնշյալ տվյալների հրապարակումը առաջացնում է քրեական պատասխանատվություն՝ ԳԳ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով:

Նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելու համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքն ապահովելու, ինչպես նաև գործի հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտման,

ծեռք բերվելիք տվյալների հավաստիության վրա՝ քննությամբ ստուգման ենթակա հանգամանքների հրապարակման բացասական ազդեցությունը կանխելու նպատակով, ԳԳ գլխավոր դատախազի հանձնարարությամբ, հսկողություն իրականացնող դատախազները, զանգվածային լրատվության միջոցներում նախնական քննության ընթացքում ձեռք բերված ապացույցների կամ ստուգման ենթակա հանգամանքների վերաբերյալ հրապարակումների յուրաքանչյուր դեպքում, ձեռնարկելու են օրենքով սահմանված քրեադատավարական ներգործության միջոցներ, ապահովելու այդ տվյալների՝ լրատվության միջոցին հայտնի դառնալու աղբյուրի, հանգամանքների պարզումը և այդ կապակցությամբ անհրաժեշտ քննչական ու դատավարական գործողությունների իրականացումը: Մեղավորները կպատժվեն օրենքով սահմանված կարգով:

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

*ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ ԿՈՍՏԱՆՅԱՆՆ ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Քեթի ԼիՉԻՆ: Հանդիպմանը մասնակցել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Էմիլ ԲԱԲԱՅԱՆԸ և ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական կապերի բաժնի պետ Նելլի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ:*



ՀՀ գլխավոր դատախազը դեսպանին ներկայացրել է ՀՀ դատախազության գործունեության առաջնահերթությունները, իրականացվելիք բարեփոխումները: Դեսպան Լիչը պատրաստակամություն է հայտնել առավել զարգացնել փոխգործակցությունը ՀՀ գլխավոր դատախազության հետ, ի նպաստ Հայաստանում ժողովրդավարության և իրավունքի գերակայության ամրա-

պնդման: ՀՀ գլխավոր դատախազը վստահեցրել է, որ իրավապահ համակարգի գործունեությունն ուղղված է ապահովվելու ՀՀ քաղաքացիների և ՀՀ-ում գտնվող անձանց իրավունքներն ու ազատությունները, օրինական շահերը, և ամրապնդելու հանրության վստահությունը պետական համակարգի նկատմամբ՝ որպես յուրաքանչյուրի իրավունքների երաշխավոր:

## ԱՍԷ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԻ ԴԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազությունում կայացել է աշխատանքային այցով ՀՀ-ում գտնվող Արաբական Միացյալ Էմիրությունների իրավապահ մարմինների ներկայացուցիչների պատվիրակության ընդունելություն: Համդիպման ընթացքում քննարկվել են Հայաս-

տանի Հանրապետության և Արաբական Միացյալ Էմիրությունների իրավապահ մարմինների միջև համագործակցությանն առնչվող հարցեր: Հստակեցվել են կոնկրետ քրեական գործերով փոխգործակցության առանձնահատկությունները: ՀՀ գլխավոր դատախազի



տեղակալ **Էմիլ Բաբայանը**, կարևորելով Արաբական Միացյալ Էմիրությունների գործընկերների հետ փոխադարձ վստահության և պրոֆեսիոնալիզմի վրա հիմնված արդյունավետ համագործակցությունը, ընդգծել է, որ Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում ստեղծված են բոլոր նախապայմանները՝ համագործակցության առավել զարգացման համար:

# ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՀՀ ՉԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ



Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի և Շուշիի ազատագրման օրվա առթիվ ՀՀ գլխավոր դատախազությունում 2014թ. մայիսի 8-ին տեղի է ունեցել երկրորդ աշխարհամարտի մասնակից, ՀՀ դատախազության նախկին աշխատակիցների պարգևատրման պաշտոնական արարողություն:

1941-1945 թթ. Հայրենական Մեծ պատերազմում հայրենիքի պաշտպանության գործում ներդրած ավանդի, ՀՀ դատախազության մարմիններում երկարամյա անբասիր ու արդյունավետ աշխատանքի համար, ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ դատախազության վետերաններ **Եղիշե Ամիրխանյանը**, **Միհրան Գրիգորյա-**





նը, Վարդգես Հարությունյանը, Սուրեն Հովհաննիսյանը, Պապին Մարուխյանը պարզևատրվել են հուշանվերներով:

Պարգևները վետերաններին է հանձնել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ **Արամ Թամազյանը**՝ շնորհակալություն հայտնելով վաստակաշատ վետերաններին հայրենիքին մատուցած անզնահատելի ծառայությունների համար: Պարգևատրման արարողությանը մասնակցել են ՀՀ դատախազության կոլեգիայի անդամները:



**ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ**  
**ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ**  
**ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Դավիթ Մանուկի ՄԵԼՔՈՆՅԱՆԸ նշանակվել է գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ:

Արդարադատության առաջին դասի խորհրդական Գարիկ Սերյոժայի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ նշանակվել է Սևանի կայազորի զինվորական դատախազ:

Հարություն Դերենիկի ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆԸ նշանակվել է ՀՀ գլխավոր դատախազի օգնական:

**ԿՈՐՈՒՄՏ**

**ԱՐՍԵՆ ԲԵԳԻՆՅԱՆ**

ՀՀ գլխավոր դատախազությունը խորապես վշտացած է ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Արսեն Բեգինյանի (1972-2014) անժամանակ մահվան կապակցությամբ և իր ցավակցությունն է հայտնում նրա հարազատներին, մտերիմներին ու ընկերներին բանիմաց իրավաբանի, սկզբունքային դատախազի, սրտացավ ընկերոջ ու պայծառ մարդու անդառնալի կորստի առիթով:

# ԱԿՆՀԱՅՏ ԱՆԱՐԴԱՐ ԴԱՏԱՎՃԻՌ, ՎՃԻՌ ԿԱՄ ԴԱՏԱԿԱՆ ԱՅԼ ԱԿՏ ԿԱՅԱՃՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԱՏԱՎՈՐԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՆԵՂԻՐՆԵՐՆ ՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

## ՄԻԵՐ ՀԱԿՈՐՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի դատախազ, իրավաբանական գիտությունների թեկնածու

*Ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ աշխարհի մի շարք այլ պետությունների (Ռուսաստան, Ուկրաինա, Դազախաստան, Էստոնիա և այլն) քրեաիրավական նորմերը պատասխանատվություն են սահմանում անարդար դատական ակտ կայացնելու համար: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 352-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում դատավորի կողմից շահադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու համար: Նույն հոդվածի 2-3-րդ մասերը քրեական պատասխանատվություն են սահմանում նույն արարքի համար, որը, համապատասխանաբար՝ անզգուշույթյամբ ու դիտավորությամբ առաջացրել է ծանր հետևանքներ:*

Օրենսդրական մեծ կարգավորումից հետոն է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 352-րդ հոդվածը հանդիսանում է արդարադատություն իրականացնող մարմինների կամ դատական իշխանության կողմից կողմից արդարադատության իրականացման ոլորտում կատարվող իրավախախտումների համար պետության կողմից սահմանված պատասխանատվության մասնավոր դրսևորումներից մեկը, որն էլ իր հերթին հանդիսանում է ընդհանուր իրավաբանական պատասխանատվության<sup>1</sup> տարատեսակ: Արդարադատություն իրականացնող մարմինների կամ դատական իշխանության կողմից հանդիսանում է սոցիալական և իրավաբանական պատասխանատվության տարատեսակ, քանի որ դրսևորվում է մարդկային կյանքի առանձնահատուկ ոլորտներում և կապված է հատուկ սուբյեկտների՝ դատավորների, մասնագիտական գործունեության հետ: Դատական իշխանության կողմից կատարված իրավախախտության անկախության հետ, քանի որ գործող օրենսդրական կարգավորման պայմաններում դատավորներն անձեռնմխելի են, իսկ դատավորների գործունեության նկատմամբ օրենքով չնախատեսված ցանկացած միջամտություն անթույլատրելի է: Թեև «դատական պատասխանատվություն», «դատական անձեռնմխելիություն» և

նական պատասխանատվության տարատեսակ, քանի որ դրսևորվում է մարդկային կյանքի առանձնահատուկ ոլորտներում և կապված է հատուկ սուբյեկտների՝ դատավորների, մասնագիտական գործունեության հետ: Դատական իշխանության կողմից կատարված իրավախախտության անկախության հետ, քանի որ գործող օրենսդրական կարգավորման պայմաններում դատավորներն անձեռնմխելի են, իսկ դատավորների գործունեության նկատմամբ օրենքով չնախատեսված ցանկացած միջամտություն անթույլատրելի է: Թեև «դատական պատասխանատվություն», «դատական անձեռնմխելիություն» և

<sup>1</sup> Ընդհանուր տեսական մոտեցման համաձայն՝ իրավաբանական պատասխանատվությունն իրավախախտում կատարած անձի նկատմամբ իրավասու սուբյեկտի կողմից օրենքով սահմանված կարգով նշանակված հարկադրանքի միջոց է, որը բովանդակում է իրավախախտում կատարած անձի իրավունքների և ազատությունների սահմանափակում: Տե՛ս **Шабуров А.С.**, «Понятие социальной ответственности. В кн. Теория государства и права. Учебник для вузов. Издание 2-е, измененное и переработанное». — Под. ред. проф. **В. М. Корельского** и проф. **В. Д. Первалова**, էջ 434-435:

«դատական իշխանության անկախություն» իրավական հասկացությունները տարբեր են, սակայն դրանք միմյանց հետ փոխկապակցված են, քանի որ դատական պատասխանատվությունը վրա է հասնում միայն դատական անձեռնմխելիության սահմաններից դուրս և չի ունենում դատական իշխանության անկախության դեմ:

«Դատական անձեռնմխելիություն» հասկացության բովանդակությունը ներառում է երկու տարրեր, մասնավորապես՝ անձեռնմխելիությունը դատավորներին ազատում է իրավաբանական պատասխանատվության առանձին դրսևորումներից և անձեռնմխելիությունը պարունակում է դատավորներին պատասխանատվության ենթարկելու բարդացված իրավական ընթացակարգեր<sup>2</sup>:

«Դատական իշխանության անկախություն» հասկացության բովանդակությունը նշանակում է դատարանի գործառնական, կառուցակարգային, նյութական և սոցիալական անկախության երաշխավորում: Այդ երաշխիքները պետք է լինեն հստակ, կայուն, հակակշռված ու պաշտպանված որևէ ներազդեցությունից: Այդ նկատառումով է, որ մնան երաշխիքներն ամրագրվում են բացառապես սահմանադրություններով ու օրենքներով<sup>3</sup>:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով դատավորի անձեռնմխելիության հիմնարար երաշխիքներին ու դրանց սահմաններին, **Ա.Սաղաթեյանի** վերաբերյալ թիվ ԳԴ5/0022/01/10 գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ «(...) **դատավորի կարգավիճակը ներառում է հետևյալ հիմնադրույթները՝**

**ա) դատավորի կարգավիճակը պետք է լինի այնպիսին, որպեսզի լիարժեք երաշխավորվի նրա իրավասությունը, անկախությունը և անաչառությունը, նպաստի նրա նկատմամբ հանրության վստահության ձևավորմանը,**

**բ) դատավորի կարգավիճակին առնչվող դրույթները պետք է ամրագրված լինեն տվյալ երկրի Սահմանադրությամբ կամ նվազագույնը՝ օրենքներով,**

**գ) պետությունները պարտավոր են դա-**

**տարանի անկախության սկզբունքի ապահովման համար նախատեսել երաշխիքների գործուն համակարգ, որը պետք է պայմաններ ստեղծի, որպեսզի դատարաններն իրենց հանձնված գործերը քննեն անաչառ, փաստերի հիման վրա և օրենքին համապատասխան, առանց որևէ սահմանափակման՝ ամեն կերպ բացառելով որևէ ոչ իրավաչափ ազդեցության, հարկադրանքի, սպառնալիքի, ուղղակի կամ անուղղակի ճնշման կամ միջամտության հնարավորություն՝ անկախ այն բանից, թե ում կողմից և ինչ պատճառով է դա կատարվում,**

**դ) դատավորների կարգավիճակի, նրանց նշանակման կամ լիազորությունների դադարեցման հարցեր քննարկող ցանկացած մարմին պետք է օժտված լինի անհրաժեշտ անկախությամբ, իսկ դրա կազմում պետք է ապահովված լինի դատավորների առնվազն 50 տոկոս մասնակցություն,**

**ե) յուրաքանչյուր դատավոր, որը գտնում է, որ լիազորություններն իրականացնելիս խախտվել են իր իրավունքները, պետք է ունենա այդպիսի անկախ մարմնի դիմելու հնարավորություն,**

**զ) դատավորի պատասխանատվության համար համաձայնություն տվող կառույցներում պետք է ապահովվի կազմի առնվազն 50 տոկոս մրցութային հիմունքներով ընտրված դատավորների մասնակցություն,**

**է) անօրինական դատական ակտի կամ դատավորի վարքագծի հետևանքով պատճառված վնասը պետք է հատուցվի պետության կողմից:**

Դատավորների անկախության չափանիշներին է անդրադարձել Սարգուսի իրավունքների եվրոպական դատարանը, որի նախադեպային նշանակության իրավական դիրքորոշումների համաձայն՝ դատարանի անկախության համար կարևոր նշանակություն ունեն հետևյալ համգամանքները.

**ա) դատավորների նշանակման իրավասություն ունեցող սուբյեկտը և նշանակման ընթացակարգը,**

<sup>2</sup> Տե՛ս **Понкратова Д. В.**, “Институт ответственности судей как средство повышения качества отправления правосудия” - [http://conf.sfu-kras.ru/sites/mn2011/thesis/s18/s18\\_15.pdf](http://conf.sfu-kras.ru/sites/mn2011/thesis/s18/s18_15.pdf):

<sup>3</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ» **Գ.Հարությունյանի և Ա.Վաղարշյանի**-եր: «Իրավունք», 2010, էջ 925:

բ) դատավորի պաշտոնավարման տևողությունը,  
գ) դատարանի վրա արտաքին ներգործությունը և ճնշումները չեզոքացնելու կամ էապես նվազեցնելու նորմատիվ և ինստիտուցիոնալ երաշխիքների առկայությունը (տե՛ս Capmbell and Fell v The United Kingdom, 1984թ., գանգատներ թիվ 7819/77, 7878/77, կետ 78):

Դատարանի անկախության սկզբունքի վերաբերյալ բազմակողմանի մեկնաբանություններ է տվել նաև Եվրոպայի խորհրդի համակարգում գործող Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը, որը, հիմնավորելով դատական իշխանության անկախության սկզբունքը խստորեն պահպանելու անհրաժեշտությունը, շեշտել է, որ դա անհրաժեշտ պահանջ է՝ իրավունքի գերակայությունն ապահովելու և արդար դատավարություն երաշխավորելու համար: Ըստ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ դատավորների անկախության արտոնությունը կոչված է ապահովել ոչ թե նրանց սեփական շահերը, այլ իրավունքի գերակայության շահը, արդարադատություն որոնողների ու ակնկալողների շահերը (տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ, Կարծիք թիվ 1(2001), 2001թ. նոյեմբերի 23, կետ 10)<sup>4</sup>:

Վերոգրյալն ամփոփելով՝ կարելի է արձանագրել, որ դատական պատասխանատվության յուրաքանչյուր դրսևորում պետք է ապահովի անհրաժեշտ հավասարակշռություն դատական իշխանության անկախության և դատավորների անձեռնմխելիության, ինչպես նաև՝ դատական պաշտպանության իրավունքի անարգել ու արդյունավետ իրականացման միջև:

Տվյալ պարագայում հարց է ծագում, թե որքանով է ԳԳ քրեական օրենսգրքի 352-րդ հոդվածն ապահովում այդ հավասարակշռությունը, մասնավորապես՝ դրա տեսական մեկնաբանության ու գործնական կիրառման պարագայում: Ընդհանուր տեսական մոտեցման համաձայն՝ այս հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու մեջ: Դատավճիռը և վճիռը այն ակտերն են, որոնք առաջին ատյանի դատարանի կողմից կայացվում են գործն ըստ էության լուծելիս: ԳԳ քրեական օրենսգրքի 352-րդ հոդվածի իմաստով այլ դա-

տական ակտեր են համարվում առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող այն դատավարական փաստաթղթերը, որոնք էականորեն ազդում են գործի լուծման վրա կամ շոշափում են անձի կարևոր իրավունքներն ու ազատությունները: Այդպիսիք կարող են լինել խափանման միջոցի ընտրության կամ դրա վերացման, դատավճռի կատարման հետաձգումը կամ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշումը վերացնելու և մի քանի այլ հարցերի վերաբերյալ որոշումները: ԳԳ քրեական օրենսգրքի 352-րդ հոդվածը նկատի ունի նաև վերաքննիչ և վճռաբեկ ատյանների կողմից կայացվող որոշումները: Միևնույն ժամանակ, դատական այն ակտերը, որոնք չեն ազդում գործն ըստ էության լուծելու վրա և միայն կազմակերպական հարցեր են լուծում (դատական միստը հետաձգելու մասին որոշումը, միստն անցկացնելու կարգի վերաբերյալ որոշումը և այլն) այս հոդվածի իմաստով դատական ակտ չեն հանդիսանում:

Անարդար է համարվում այն դատական ակտը, որը կայացվում է նյութական և դատավարական իրավունքի նորմերի պահանջների կոպիտ խախտմամբ: Այդպիսին կհամարվի, օրինակ, անմեղ անձի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը, հանցագործության մեջ մեղավոր անձին արդարացնող դատավճիռը, արարքի սխալ իրավաբանական որակումը, ակնհայտ մեղմ կամ խիստ պատժի նշանակումը, քաղաքացիական գործերով այնպիսի վճիռը, որով անհիմն լրիվ կամ մաս-նակիորեն բավարարվել կամ հակառակը՝ չի բավարարվել հայցը, գործի նյութերի միակողմանի և ոչ լրիվ ուսումնասիրությունը, եզրակացությունների հակասությունը գործի փաստական հանգամանքներին: Հարկ է նշել սակայն, որ դատավարական նորմերի ոչ բոլոր, նույնիսկ կոպիտ խախտումներն են, որ պետք է որակվեն որպես ակնհայտ անարդար դատավճռի, վճռի կամ այլ ակտի կայացում: Եթե այդպիսի խախտումները (օրինակ՝ բացակայում է միստի արձանագրությունը, խախտվում է ամբաստանյալի պաշտպանության իրավունքը և այլն) չեն հանգեցրել վերը նշված հետևանքների (մեղավորի արդարացում, անմեղի դատապարտում և այլն), ապա այս հանցակազմը բացակայում է:

Վերաքննիչ կամ վճռաբեկ դատական ատյանների կայացրած ակտերը համարվում են անարդար, եթե դրանցով առաջին ատյանի դատարանի ակտերը անհիմն թողնվում են անփո-

<sup>4</sup> Տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=73489>

փոխ կամ հակառակը՝ անհիմն փոփոխվում են, որի պատճառով դատական ակտը դառնում է անարդար:

**Բննարկվող հանցակազմը ձևական է.** հանցագործությունն ավարտված է համարվում դատական ակտը հրապարակելու պահից:

**Հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ.** հանցավորը գիտակցում է, որ անարդար դատական ակտ է կայացնում, և ցանկանում է դա: Այդ մասին է վկայում հողվածի դիսպոզիցիայում «ակնհայտ» հասկացության օգտագործումը. կայացված դատավճռի կամ դատական այլ ակտի անարդարացիությունը պետք է գիտակցվի այդ դատական ակտը կայացնողի կողմից: Եթե անարդար դատավճիռը կամ դատական այլ ակտը սխալի արդյունք է, ապա համապատասխան հատկանիշների առկայության դեպքում արարքը կարող է որակվել որպես պաշտոնեական անփութություն:

**Հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանդիսանում հանցագործության շարժառիթը.** հանցագործությունն առկա է միայն այն դեպքում, եթե կատարվում է շահադիտական կամ այլ անձնական դրդումներով: Շահադիտական դրդումները կարող են դրսևորվել բազմազան ձևերով: Մասնավորապես, հանցավորը, անմեղ անձին դատապարտելով, ցանկանում է վերջինիս բացակայությամբ տիրանալ նրա գույքին, կամ անարդար դատական ակտը կայացնում է կաշառքի դիմաց: Եթե արարքը զուգորդվում է կաշառք ստանալու հետ, ապա արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ: Այլ անձնական դրդումները նույնպես կարող են բազմազան դրսևորումներ ունենալ՝ խանդ, վրեժ և այլն:

**Հանցագործության սուբյեկտը հատուկ է.** այդպիսին են հանդիսանում միայն դատավորները<sup>5</sup>:

Թեև առաջին հայացքից նման մեկնաբանությունը, որը տարածված է նաև ռուսաստանցի հեղինակների աշխատություններում, ամբողջությամբ ընդգրկվում է քրեական իրավունքի տրամաբանության մեջ, սակայն այն դատական իշխանության անկախության ու դատավորի անձեռնմխելիության ինստիտուտների լույսի ներքո դիտարկելու դեպքում ծագում է այն

հարցը, թե բացի դատական իշխանության մարմիններից որևէ այլ պետական մարմին արդյոք իրավատու է այնպիսի իրավական գնահատական տալ դատական ակտին, որը դատավորի համար կարող է հանգեցնել որոշակի բացասական իրավական հետևանքների, և եթե այլ մարմինները կարող են նման գնահատական տալ, ապա նման իրավակարգավորումն արդյոք չի հակասում դատական իշխանության անկախության ու անձեռնմխելիության սկզբունքներին:

Այս հարցի լուծումը մեր օրենսդիրը տվել է ՀՀ դատական օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասում, որի համաձայն՝ դատավորի կողմից շահադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու փաստի առթիվ քրեական հետապնդում չի կարող հարուցվել, եթե այդ ակտը վերադաս դատարանի կողմից բեկանված չէ: Այս դրույթը նախատեսված է ՀՀ դատական օրենսգրքի՝ դատական իշխանության գործունեության սկզբունքները սահմանող գլխում, մասնավորապես՝ դատավորի անձեռնմխելիության հոդվածում: Վերջինս ՀՀ դատարանակազմության հիմքում ընկած նորմատիվ իրավական ակտերում առաջին անգամ նախատեսվել է 2007 թվականին, երբ ընդունվել և գործողության մեջ է դրվել ՀՀ դատական օրենսգրքը, իսկ նախքան ՀՀ դատական օրենսգրքի ուժի մեջ մտնելը «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՕ-230 օրենքը (ուժը կորցրել է 2007 թվականի մայիսի 18-ին) նման դրույթ չի պարունակել:

Օրենսդրի այս մոտեցումն ամբողջովին արդարացված է, քանի որ հակառակ պարագայում առկա է տեսական հնարավորություն, որ դատավորի կողմից կայացված յուրաքանչյուր դատական ակտից հետո նրա նկատմամբ կարող է հարուցվել քրեական հետապնդում: Այսինքն, սա այն մեխանիզմն է, որը կոչված է հավասարակշռություն մտցնելու ՀՀ քրեական օրենսգրքի 352-րդ հոդվածով դատավորի համար նախատեսված քրեական պատասխանատվության ու դատավորի անկախության և անձեռնմխելիության ինստիտուտների միջև:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ քրեական հետապնդումը բացառող այս հանգամանքը Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունում ներմուծվել է միայն 2011

<sup>5</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (6-րդ հրատարակություն)՝ փոփոխություններով և լրացումներով)»./Ս.Առաքելյան, Ա.Գաբուզյան, Հ. Խաչիկյան, Գ.Ղազինյան, Ն.Մաղաքյան, Ա.Մարգարյան, Տ.Սիմոնյան, Վ.Քոչարյան. – Երևանի պետ. համալսարան. – Եր.: Երևանի համալս. հրատ., 2012, էջեր 905-907:

թվականին ՌԴ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա: Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը, անդրադառնալով ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 144-145-րդ և 148-րդ հոդվածների և «Ռուսաստանի Դաշնությունում դատավորների կարգավիճակի մասին» ՌԴ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասի մեկնաբանությամբ, իր 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 23-Ո որոշմամբ դրանք հակասահմանադրական է ճանաչել այն մասով, որ վերջիններս թույլատրում են դատավորի նկատմամբ քրեական գործի հարուցում ՌԴ քրեական օրենսգրքի 305-րդ (ակնհայտ անարդար դատավճռի, որոշման կամ այլ դատական ակտի կայացում) հոդվածով այն դեպքում, երբ համապատասխան դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ և քրեադատավարական օրենքով սահմանված կարգով փոփոխության չի ենթարկվել: Իր որոշման պատճառաբանական մասում սահմանադրական դատարանը կրկին հաստատել է նախկինում կայացրած իր որոշումները, որտեղ հստակ նշել է, որ դատական ակտերի վերանայման որևէ այլ՝ ոչ դատավարական ընթացակարգ սկզբունքորեն անթույլատրելի է, քանի որ դա նշանակում է արդարատության մարմինների դատական ակտերի փոխարինում վարչական ակտերով, որը հանդիսանում է դատական իշխանության ինքնուրույնության և բացառիկության երաշխիքներից հետընթաց<sup>6</sup>: Հատկանշական է նաև գործի այն փաստական հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել այս որոշման կայացման համար: Մասնավորապես՝ 2010 թվականին ՌԴ դատախազության քննչական կոմիտեի նախագահի պարտականությունների ժամանակավոր պաշտոնակատարի կողմից ՌԴ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածով քրեական հետապնդում է հարուցվել Դոնի Ռուստովի կայազորի զինվորական դատարանի նախագահի նկատմամբ: Քրեական հետապնդում հարուցելու որոշման մեջ նշվում է, որ դատավորը, երբ քննել է ՌԴ պաշտպանության նախարարության թռչակառուների քաղաքացիական հայցն ընդդեմ Դոնի Ռուստովի զինվորական կոմիսարիատի՝ չվճարված թռչակների բռնագանձման պահանջի մասին, թույլ է տվել ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջների խախտումներ, մասնավորապես՝ գործը քննել է քաղաքացիական գործի ընդդատության կանոնների խախտումներով, դատավարության մասնակիցներին դատական նիստի վայրի ու ժամի մասին չի ծանուցել, կող-

մերի բացակայության պայմաններում քաղաքացիական հայցը բավարարելու մասին որոշում է կայացրել, դատական նիստի արձանագրությունում և դատական ակտում ակնհայտ կեղծ տվյալներ է ներառել: Նման խախտումներ տեղ են գտել նույն դատավորի կողմից քննված նաև այլ գործերով կայացված դատական ակտերում և հետագայում վերացվել են վերադաս ատյանի կողմից, սակայն երբևէ նրան քրեական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարց չի ծագել: Հատկանշական է նաև այն, որ այդ քրեական գործի հարուցման համար հիմք հանդիսացած դատական ակտը վերադասության կարգով բողոքարկվելուց հետո չի բեկանվել ու մնացել է անփոփոխ՝ մտնելով օրինական ուժի մեջ, սակայն դա արգելք չի հանդիսացել քրեական հետապնդման հարուցման համար: Քննարկելով ներկայացված դիմումը՝ ՌԴ սահմանադրական դատարանը գտել է, որ օրինական ուժի մեջ մտած, չբեկանված ու չփոփոխված դատական ակտը չի կարող ճանաչվել ակնհայտ անարդար, քանի որ եթե առկա չէ վերադաս ատյանի կողմից այդ դատական ակտի անօրինականության ու անարդարության՝ օրենքով սահմանված ընթացակարգով հաստատում, ապա գործում է վերոհիշյալ դատական ակտի արդարության կանխավարկածը:

Առաջին հայացքից ՌԴ սահմանադրական դատարանի այս որոշումը կարծես թե ապահովում է այն հավասարակշռությունը, որն անհրաժեշտ է դատավորի անկախության ու անձեռնմխելիության և պատասխանատվության ինստիտուտների միջև, սակայն մյուս կողմից հարց է ծագում, թե որ դեպքում է դատավորի բեկանված դիտավորյալ սխալը հանգեցնում քրեական հետապնդման հարուցման կամ որ դիտավորյալ սխալը որևէ պատասխանատվության չի հանգեցնում, այլ կերպ ասած՝ վերադաս ատյանը բեկանելով ստորադաս ատյանի դատական ակտը որ դեպքում պետք է դիմի այս հոդվածով քրեական հետապնդում հարուցելու համար կամ արդյոք քրեական հետապնդման մարմինները պարտավոր են բոլոր բեկանված դատական ակտերով պարզել այս հանցակազմի հատկանիշների առկայության հարցը, թե՛ ոչ: Այս անորոշությունն ավելի ակնառու է դառնում այն դեպքում, երբ ուսումնասիրում ենք ՌԴ սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման պատճառաբանական մասի եզրափակիչ հատվածը, որտեղ դատարանը նշում է, որ որոշմամբ արտահայտած իր դիրքորոշումը չի բա-

<sup>6</sup> St'u file:///D:/My%20Documents/Downloads/KSRFDecision75997.pdf

ցառում հնարավորությունը, որ ներկայացված հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ քրեական հետապնդման մարմինները կատարեն համապատասխան գործողություններ այն հարակից հանցակազմերով, որոնք որպես կանոն ուղեկցում են ՌԴ քրեական օրենսգրքի 305-րդ (ակնհայտ անարդար դատավճռի, որոշման կամ այլ դատական ատի կայացում) հողվածին, օրինակ՝ խարդախություն, պաշտոնեական լիազորությունների չարաշահում, կաշառք ստանալ և այլն:

Կարծում եմ, որ նման կարգավորման պարագայում մի իրավիճակ է ստեղծվում, որի պայմաններում քրեական հետապնդման մարմինը կարող է շրջանցել սահմանված արգելքը՝ բեկանված դատական ակտի պարտադիր առկայությունը, և զնահատական տալ դատավորի գործողություններին ու դատական ակտի օրինաչափությանը ոչ թե ակնհայտ անարդար դատական ակտ կայացնելու հանցակազմի շրջանակներում, այլ՝ օրինակ՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հանցակազմի շրջանակներում, որի պայմաններում նման արգելքի սահմանումն ամբողջովին իմաստագրվելու է: Մյուս կողմից, նման իրավակարգավորում սահմանելով, օրենսդիրն, ըստ էության, բացառել է, օրինակ՝ ԶԶ վճռաբեկ դատարանի դատավորներին այս հողվածով քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը, քանի որ ԶԶ վճռաբեկ դատարանը հանդիսանում է բարձրագույն ատյան և նրա որոշումները վերադասության կարգով վերանայման ենթակա չեն, հրապարկման պահից էլ մտնում են օրինական ուժի մեջ: ԶԶ վճռաբեկ դատարանի որոշումների վերանայման միակ եղանակը դրանց վերանայումն է նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով, սակայն այդ դեպքում էլ Վճռաբեկ դատարանն ինքն է վերանայում իր որոշումը: Այսինքն, ստեղծվում է մի իրավիճակ, որի պայմաններում դատական համակարգի բարձրագույն ատյանները բացարձակ անձեռնմխելիություն են ստանում ակնհայտ անարդար դատական ակտ կայացնելու համար սահմանված քրեական պատասխանատվությունից և այս հանցակազմը նրանց համար գործնականում դառնում է անկիրառելի: Զարկ է նշել, որ այս հողվածի գործնական կիրառելիության ուսումնասիրության դեպքում էլ կարող ենք արձա-

նագրել, որ այն, ըստ էության, չգործող նորմ է, քանի որ սկսած 2003 թվականից միայն 2 քրեական գործ է քննվել այս հողվածով, որոնցից մեկով քրեական գործով վարույթը կարճվել է՝ անձի արարքում հանցակազմի բացակայության հիմքով, իսկ մյուսով քրեական գործով վարույթը կասեցված է:

Վերոգրյալն ամփոփելով՝ կարելի է արձանագրել, որ ԶԶ քրեական օրենսգրքի 352-րդ հողվածը չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին ու, ըստ էության, չգործող նորմ է, քանի որ **նախ**՝ գործող

*«... Արդարադատություն  
իրականացնող մարմինների  
համար դատական  
պատասխանատվությունը  
հանդիսանում է սոցիալական  
և իրավաբանական  
պատասխանատվության  
տարատեսակ...»*

իրավակարգավորման պայմաններում գործնականում այն ոչ բոլոր դատավորների նկատմամբ է կիրառելի՝ տարբերակված մոտեցում դրսևորելով տարբեր ատյանների դատավորների նկատմամբ, **երկրորդ**՝ այս դրույթը պարունակում է տեսական հնարավորություն պետական այլ մարմինների կողմից դատական իշխանության գործունեությանը միջամտելու համար, իսկ ԶԶ դատական օրենսգրքում սահմանված արգելքն էլ հնարավոր է շրջանցել, հետևաբար՝ կասկածի տակ է դրվում դատական իշխանության անկախությունը, և **երրորդ**՝ այս նորմը գործնական կիրառություն երբևէ չի ստացել: Նման պայմաններում կարծում եմ, որ այս դրույթի՝ ԶԶ քրեական օրենսգրքում հետագա գոյությունն իմաստագուրկ է և գործող իրավակարգավորման պայմաններում, հավանաբար՝ հակասահմանադրական:

Զարկ է նշել, որ նմանատիպ դրույթների վերացման միտումը նկատվում է նաև միջազգային փաստաթղթերում: Այսպես, հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված Միավորված Ազգերի Կազմակերպության 7-րդ կոնգրեսի կողմից ընդունված՝ դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքների<sup>7</sup> հավել-

<sup>7</sup> Տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=18504>

վածի 3-4-րդ կետերը սահմանում են, որ դատական մարմինները տիրապետում են դատական բնույթի բոլոր հարցերի իրավասությանը և բացառիկ իրավունք ունեն որոշելու, թե իրենց հանձնված գործը մտնում է արդյոք իրենց՝ օրենքով սահմանված իրավասության մեջ, իսկ արդարադատության իրականացման ընթացքում ապօրինի կան չարտոնված միջամտություններ տեղ չպետք է գտնեն, և դատարանների կայացրած դատական որոշումները վերանայման ենթակա չեն: Այդ սկզբունքը չի խանգարում դատական մարմինների կայացրած որոշումների դատական վերանայումը կամ դատավճռի մեղմացումը օրենքին համապատասխան իրականացնելուն:

«Դատավորների կարգավիճակի մասին» խարտիայի<sup>8</sup> 1.3-րդ, 5.1-րդ և 7.1-րդ կետերի համաձայն՝ ցանկացած որոշման կապակցությամբ, որը վնասում է դատավորի ընտրությանը, նշանակմանը, լիազորությունների իրականացմանը կամ դադարեցմանը, կարգավիճակը նախատեսում է օրենսդիր և գործադիր իշխանության անկախ ատյանի միջամտություն, որի անդամների նվազագույնը գ-ը դատավորներ են, ովքեր ընտրվել են մշտական հիմունքներով և ապահովում են նրանց ամենալայն ներկայացուցչությունը:

Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 1994 թվականի հոկտեմբերի 13-ին ընդունված «Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» թիվ (94)12<sup>9</sup> և 2010 թվականի նոյեմբերի 17-ին ընդունված «Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ (2010)12<sup>10</sup> հանձնարարականների համաձայն դատավորներն աշխատանքից կարող են ազատվել հանցագործությունների կատարման և կարգապահական կանոնների լուրջ խախտումների համար, ինչպես նաև՝ գործը լուծելու համար դատավորի կողմից օրենքի

մեկնաբանությունը, փաստական հանգամանքների և ապացույցների գնահատումը չի կարող հանգեցնել քրեական պատասխանատվության, բացառությամբ չարամտությամբ գործելու դեպքերի: Միևնույն ժամանակ, թիվ (2010)12 հանձնարարականը սահմանում է նաև, որ դատավորները չպետք է անձամբ հաշվետու լինեն, եթե նրանց որոշումները վերացվել են կամ փոփոխվել են վերանայման արդյունքում:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (այսուհետ նաև՝ ԵԴԽԽ) կողմից 2010 թվականի նոյեմբերի 17-ին ընդունված «Դատավորների ազատությունների մեծ խարտիա (Հիմնարար սկզբունքներ)»<sup>11</sup> կարծիքի 20-րդ կետի համաձայն՝ դատավորները քրեական պատասխանատվության կարող են ենթարկվել իրենց լիազորություններից դուրս կատարված հանցագործությունների համար: Դատավորների նկատմամբ քրեական պատասխանատվություն չի կարող սահմանվել իրենց գործառույթներն իրականացնելիս թույլ տրված անզգույշ սխալների կամ բացթողումների համար:

ԵԴԽԽ կողմից 2002 թվականի նոյեմբերի 19-ին ընդունված «Դատավորների մասնագիտական վարքագիծը կարգավորող սկզբունքների և կանոնների մասին» թիվ 3 կարծիքի 52-54-րդ կետերի համաձայն, մասնավորապես՝ (...) դատավորները, ովքեր իրենց պաշտոնական լիազորությունների իրականացման ժամանակ կատարում են արարքներ, որոնք ամեն դեպքում դիտարկվում են որպես հանցավոր (օրինակ՝ կաշառք ստանալ), չեն կարող հղում կատարել իրենց անձեռնմխելիությանը, ի տարբերություն սովորական քրեական դատավարության դեպքի: Հարցումների պատասխանները ցույց են տալիս, որ որոշ պետություններում նույնիսկ անզգույշ դատական սխալները կարող են ճանաչվել հանցագործություններ: Այսպես, **Շվեդիայում** և **Ավստրիայում** դատավոր-

<sup>8</sup> Տե՛ս [http://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/round4/European-Charter-on-Statute-of-Judges\\_EN.pdf](http://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/round4/European-Charter-on-Statute-of-Judges_EN.pdf)

<sup>9</sup> Տե՛ս [https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=Rec\(94\)12&Language=lanEnglish&Ver=original&Site=COE&BackColorInternet=C3C3C3&BackColorIntranet=EDB021&BackColorLogged=F5D383](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=Rec(94)12&Language=lanEnglish&Ver=original&Site=COE&BackColorInternet=C3C3C3&BackColorIntranet=EDB021&BackColorLogged=F5D383)

<sup>10</sup> Տե՛ս [https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=CM/Rec\(2010\)12&Language=lanEnglish&Ver=original&Site=COE&BackColorInternet=C3C3C3&BackColorIntranet=EDB021&BackColorLogged=F5D383](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=CM/Rec(2010)12&Language=lanEnglish&Ver=original&Site=COE&BackColorInternet=C3C3C3&BackColorIntranet=EDB021&BackColorLogged=F5D383)

<sup>11</sup> Տե՛ս Magna carta of judges (Fundamental principles) - [https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=CCJE-MC\(2010\)3&Language=lanEnglish&Ver=original&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=CCJE-MC(2010)3&Language=lanEnglish&Ver=original&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864)



ները (հավասարեցված լինելով այլ պետական ծառայողներին) կարող են պատժվել (օրինակ՝ տուգանք) մի քանի դեպքերում կոպիտ անփութության համար (օրինակ՝ կալանքի կիրառման կամ չափազանց երկար ժամանակով անձին բանտում պահելու համար):

Այնուհանդերձ, քանի դեռ ընթացիկ պրակտիկան դատավորների նկատմամբ անբողջությամբ չի բացառել քրեական պատասխանատվությունն իրենց պաշտոնական լիազորությունների իրականացման ընթացքում անզգույշ սխալների համար, ԵԴԽՆ-ն գտնում է, որ նման պատասխանատվության նախատեսումն ընդունելի է կամ խրախուսման արժանի: Դատավորը չպետք է հարկադրված լինի գործել գունարային պատժի կամ ազատագրվման սպառնալիքի ներքո, քանի որ նման սպառնալիքի առկայությունը, թեկուզ՝ ենթագիտակցորեն, կարող է ազդել նրա որոշման վրա:

Դատարանի որոշումից դժգոհ կողմի նախաձեռնությամբ երկարատև քրեական գործի բացումը դատավորի նկատմամբ տարածված երևույթ է մի քանի եվրոպական պետություններում: ԵԴԽՆ-ն կարծում է, որ այն երկրներում, որտեղ անհատը կարող է պահանջել նախաձեռնել քրեական վարույթ դատավորի կողմից իր պաշտոնական լիազորությունների կատարման կապակցությամբ, պետք է լինի նման քրեական քննության կամ դատական գործընթացի կանխման կամ դադարեցման մեխանիզմ այն դեպքերում, երբ բացակայում են դատավորին քրեական պատասխանատվության ենթարկելու համապատասխան հիմքերը:

Իրավունքի միջոցով հանուն ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովի (Վեներտիկի հանձնաժողով) կողմից 2010 թվականի մարտի 16-ին ընդունված «Դատական իշխանության անկախության մասին (Մաս 1. Դատավորների անկախության մասին)» զեկույցի<sup>12</sup> 61-րդ կետում սահմանվում է, որ (...) անվիճելի է, որ դատավորները պետք է պաշտպանված լինեն անհամաչափ արտաքին ազդեցությունից: Այդ նպատակի համար նրանք պետք է օժտված լինեն ֆունկցիոնալ, բացառապես ֆունկցիոնալ անձեռնմխելիությամբ (անձեռնմխելիություն այն գործողությունների համար քրեական

հետապնդումից, որոնք կատարվել են իրենց լիազորությունների իրականացման ընթացքում, բացառությամբ դիտավորյալ հանցագործություններից, օրինակ՝ կաշառք ստանալը):

Ինչ վերաբերում է միջազգային փորձին, ապա այստեղ մոտեցումները բավականին տարբեր են, քանի որ մի շարք պետություններում (**Ադրբեջան, Իսլանդիա, Լեհաստան, Պորտուգալիա** (մասամբ), **Ռուսաստան, Ուկրաինա, Ղազախստան, Էստոնիա, Թուրքմենստան, Ուզբեկստան**) դատավորները նմանատիպ արարքի համար կարող են ենթարկվել քրեական պատասխանատվության, որոշ պետություններում (**Անդորրա, Բելգիա, Գերմանիա, Իտալիա, Լիտվա, Լիխտենշտեյն, Լյուքսեմբուրգ, Մալթա, Յոլանդիա, Նորվեգիա, Ռումինիա, Սլովենիա, Տապոնիա**) դատավորները քրեական պատասխանատվության ենթակա են միայն ընդհանուր բնույթի և կոռուպցիոն հանցագործությունների, իսկ մի շարք պետություններում (**Իռլանդիա, Կիպրոս, Մոլդովա, Միացյալ Թագավորություն** (մասամբ՝ միայն բարձրագույն ատյանների դատավորները)) դատավորներն ընդհանրապես քրեական պատասխանատվության ենթակա չեն:

Անփոփելի վերոգրյալը՝ կարելի է միանշանակ արձանագրել, որ քննարկվող բնագավառում պետությունների օրենսդրությունները մեկ միասնական մոտեցում չունեն, սակայն այս բնագավառում միջազգային իրավունքի ընդհանուր զարգացումն այն միտումն ունի, որ բացառի դատավորների քրեական պատասխանատվությունը նրանց լիազորությունների իրականացման ընթացքում թույլ տրված իրավախախտումների համար՝ քրեական պատասխանատվություն սահմանելով միայն կոռուպցիոն և ընդհանուր բնույթի հանցագործությունների համար:

Կարծում են, որ այս մոտեցումը գործող զարգացման մակարդակում մենք նույնպես պետք է որդեգրենք՝ ՀՀ քրեական օրենսգրքից բացառելով այս դրույթը, քանի որ դա, ըստ էության, չգործող նոր է ու անընդհատ կարող է որպես սպառնալիք օգտագործվել դատական իշխանության վրա ներազդելու համար:

<sup>12</sup> Տե՛ս [http://www.venice.coe.int/webforms/documents/CDL-AD\(2010\)004.aspx](http://www.venice.coe.int/webforms/documents/CDL-AD(2010)004.aspx)

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅԵՅԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՆՐԶԱՆՈՒՄ

Արևիստ ԶՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու

*Փոխակերպվող հասարակության զարգացման համար (այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության) օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում վերստին իմաստավորել և իրավաբանորեն ամրագրել ժողովրդավարության հիմնական կանխադրույթները, այդ թվում՝ մարդու իրավունքները՝ որպես սոցիալական բարձրագույն արժեքներ, ինչպես նաև ստեղծագործաբար յուրացնել անցյալի իրավաբաղաքական մտքի նվաճումները՝ նոր հասարակարգի և պետաիրավական վերնաշենքի ձևավորման գործում: Մեզանում, ընդհանուր առմամբ, շարունակում է գերիշխել այն մտայնությունը, համաձայն որի մարդու իրավունքները միայն վերացական գաղափարներ և մարդկային բանականության փայլատակումներ են, իսկ գործնական-կիրառական հարթությունում՝ մարդու իրավունքները դեռևս լիարժեք չեն ընկալվում, առավել ևս՝ գործում:*

Այս առումով հսկայական անելիք ունի ազգային իրավագիտական միտքը և պրակտիկան: Խնդրո հարցում կարելի է նշել որոշակի առաջընթաց: Մասնավորապես, մեր պետության Սահմանադրության մեջ ամրագրվել է, որ **«Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»**: Չնայած այս դրույթը, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ սահմանադրական այլ դրույթները նշանակալի առաջընթաց քայլ են, սակայն ոչ վերջնական կամ ավարտուն, քանզի կարևորագույնը այդ դրույթների իրագործման կառուցակարգերի ապահովումն է:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ամրագրում է պետության պարտականությունը. **«Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային**

**իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:**

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» (հոդված 3):

Մարդու իրավունքների գերակայությունը արմատական, հիմնարար նշանակություն ունի ամեն մի երկրի ներպետական իրավունքի և օրենսդրության համար:

Օրենսդրական կարգավորման նպատակը մարդու իրավունքների կենսագործումն է: Մարդու իրավունքները օրենքների ոգին են, հիմք են հանդիսանում օրենքների ստեղծման համար և նախորդում են դրանց բովանդակությունը:

Արդի աշխարհում մարդու իրավունքները համընդհանուր են: Դա նշանակում է, որ մարդու իրավունքներն արտատարածքային են ու վերազգային:<sup>1</sup>

Մարդու իրավունքները բացարձակա-

<sup>1</sup> Головистикова А.Н., Грудцина Л.Ю., Права человека. М. 2006. с. 81.

պես պայմանավորված չեն քաղաքակրթական, պետատարածքային, կրոնական, ազգային առանձնահատկություններով: Պետությունները և ժողովուրդներն ունեն առանձնահատկություններ, սակայն ամենուր էլ առկա է ընդհանուրը՝ **մարդը**:

Չենց դա էլ համարվում է մարդու իրավունքների համընդհանրության հիմքը, նախադրյալը և պատճառը:

Մարդու իրավունքները համապարփակ սոցիալ-իրավական կատեգորիա է, որն, առաջին հերթին, բխում է նրա կենսաբանական և սոցիալական էությունից:<sup>2</sup> Այդ համապարփակությունն իր իրավական ամրագրումն է ստացել միջազգային իրավական փաստաթղթերում, ազգային իրավական համակարգերում և միջազգային հարաբերությունների պրակտիկայում:

Մարդու իրավունքների համընդհանրությունն ունի մարդաբանական հիմքեր: Մարդը երկրագնդի ցանկացած մասում ցանկացած քաղաքակրթության մեջ եղել և մնում է նույն էակը՝ **մարդ**: Չենց այս հանգամանքն էլ հիմք է տալիս եզրակացնելու մարդու իրավունքների համընդհանուր բնույթի մասին: Անձը, անկախ իր գտնվելու վայրից և քաղաքակրթության տիպից, օժտված է որոշակի բնական և անօտարելի իրավունքներով (կյանքի իրավունք, անձեռնմխելիության և ազատության իրավունք, ընտանիք կազմելու իրավունք), որոնք համընդհանուր և համապարփակ են, քանզի առանց իրավունքների այդ նվազագույնի մարդը կդադարի մարդ լինելուց: Չետևաբար, մարդն առանց իրավունքների, իսկ իրավունքն առանց մարդու իրավունքների, անհնարին և անհեթեթություն է: Մարդն այն սկզբնաղբյուրն է, որի վրա կառուցվում են մարդու իրավունքների ազգային և միջազգային համակարգերը, հետևաբար դրանց ընդհանրություններն ու օրինաչափություններն անխուսափելի են:

Մարդու իրավունքների համընդհանրությունն ունի գաղափարական հիմքեր: Արդի աշխարհում մարդկային քաղաքակրթության զարգացման աշխարհայացքային հիմ-

քը ընդհանուր մարդասիրական գաղափարներն ու արժեքներն են:<sup>3</sup>

Մարդասիրությունն իբրև գաղափար ազդարարում է, որ մարդու իրավունքներն անհատը ձեռք է բերում ծննդյան պահից, որի համար պետք չէ ոչ քաղաքացիություն և ոչ էլ այլ փաստ:

Ուրեմն մարդու իրավունքների համընդհանրությունն ունի գաղափարական ընդհանրություն՝ ի դեմս մարդասիրական փիլիսոփայության: Մարդու իրավունքները, բացի մարդու բնույթով պայմանավորված լինելուց, ամենահամընդհանուր գաղափարներն են, որ կարող են միավորել աշխարհի՝ իրարից տարբեր բոլոր մարդկանց, ժողովուրդներին, պետություններին ու քաղաքակրթություններին:

Մարդու իրավունքների համընդհանրությունն ունի միջազգային իրավական հիմքեր:

Մարդու իրավունքների միջազգայնացման համար հիմք են մարդու իրավունքների համընդհանրության մարդաբանական և գաղափարական հիմքերը:

**«Մարդու իրավունքները մարդկության ընդհանուր լեզուն են»:** Ընդունելով և սովորելով այդ լեզուն՝ աշխարհի բոլոր ժողովուրդները կարող են հասկանալ իրար, համագործակցել՝ կերտելով սեփական բարգավաճ ու ներդաշնակ հայրենիքը:

Մարդու իրավունքների միջազգային չափորոշիչները համընդհանուր և համապարտադիր իմպերատիվներ են և միջազգային հանրության անդամ-պետությունները պարտավոր են ճանաչել ու պահպանել այդ նորմերը:<sup>4</sup>

Պետություններն, առավել ևս իրենց իրավական և ժողովրդավարական համարողները, պարտավոր են ոչ միայն փոխակերպել միջազգային իրավական նորմերը ազգային իրավական համակարգում, այլև անմիջականորեն գործադրել իրենց կողմից վավերացրած կամ հաստատած միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի դրույթները: Այսպես, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն **«Միջազգային**

<sup>2</sup> Головистикова А. Н., Грудцина Л. Ю., Права человека. М. 2006. с. 64.

<sup>3</sup> Мутагиров Д. З., Права и свободы человека: Теория и практика. М. 2006. с. 64-84.

<sup>4</sup> Глухарева Л.И., Права человека в современном мире. М., 2003, с. 208-209.

**պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը»:**

Մարդու իրավունքների իրական պատճառությունը սկզբնավորվեց երկրագնդի առաջին սահմանադրական ակտերի ընդունմամբ: Դրանից հետո մինչև XX դարի սկիզբը տեղի ունեցավ մարդու իրավունքների համընդհանրացում, այսինքն տարածում աշխարհի այլ երկրներում: Մարդու իրավունքների համընդհանրացումը համատարածվածությունից բացի նշանակում է նաև առանձին երկրների ազգային իրավական համակարգերի ներդաշնակեցում և միասնականացում:<sup>5</sup>

Բացի այդ, պետությունների սերտ համագործակցությունը նպաստեց, որ առանձին երկրներ ընդօրինակեին մյուս պետությունների՝ մարդու իրավունքներին վերաբերող օրենքները և փորձը:

XX դարի առաջին կեսերից սկսվում է մարդու իրավունքների համընդհանրացման նոր փուլ, որն անվանում են միջազգայնացում, այսինքն մարդու իրավունքների ամրագրումը պետությունների կնքած միջազգային պայմանագրերում:

Նման զարգացման պատճառներից էին երկրորդ աշխարհամարտի մարդկային աղետը, գաղութային համակարգերի քայքայումը, որոնք նպաստեցին միջազգային համագործակցության ընդլայնմանը, այդ թվում՝ ՄԱԿ-ի ստեղծմանը:

Պետությունների համագործակցությունը նպաստեց միջազգային իրավունքի արագ զարգացմանը, իսկ մարդու իրավունքները դարձան միջազգային աշխարհայացքի մի մասը:

Դրա արդյունքը մարդու իրավունքներին նվիրված միջազգային պայմանագրերի կնքումն էր: Ուստի, միջազգային իրավունքում որպես իրողություն առկա է նրա ոլորտներից մեկը՝ **«միջազգային մարդասիրա-**

**կան իրավունքը»:** Այդ իրավունքը նորմերի և սկզբունքների համակցություն է, որոնք որոշում են միջազգային հանրության համար միասնական մարդու իրավունքները և սահմանում են պետությունների պարտավորությունը՝ ամրագրել ու երաշխավորել դրանք: Միջազգային մարդասիրական իրավունքի ձևավորմամբ սկսվեց դրա հետագարձ ներգործությունն ազգային իրավական համակարգերի վրա:

Մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների վրա են խարսխված նաև մարդու իրավունքների սահմանադրական սկզբունքները Հայաստանում:

Պետությունը պատասխանատու է իր իշխանության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի իրավունքների երաշխավորված պաշտպանության համար: Մարդու և ժողովրդի բնական և անօտարելի իրավունքների և ազատությունների կենսագործման փաստացի արդյունքը նրանց արժանապատիվ, բարեկեցիկ ու անվտանգ կյանքն է, որի ապահովմանը պետք է ուղղված լինի ժողովրդավարական պետության ամբողջ գործունեությունը:

Ո՛չ մարդուն և ո՛չ էլ ժողովրդին պետք չէ այն պետությունը, որն առավելագույն բարենպաստ պայմաններ չի ստեղծում իրենց այդօրինակ կյանքի համար:

Ժողովրդավարության այս սկզբունքի սահմանադրական ամրագրումը բացառիկ պարզություն է մտցնում մարդ-պետության և ազգ (ժողովուրդ)-պետություն հարաբերություններում, կանխորոշում է ժողովրդավարական, իրավական պետության գործունեության բովանդակությունը:

Ինչպես գիտենք, պետականության հիմնադրումը ինքնանպատակ չէ: Մարդիկ և ժողովուրդները (ազգերը) իրենց պետությունները հիմնադրում, դրանց մարմիններին և պաշտոնատար անձանց իշխանական լիազորություններով օժտում են՝ նպատակ ունենալով նրանց միջոցով և նրանց օգնությամբ ապահովել իրենց արժանապատիվ, բարեկեցիկ և անվտանգ կյանքը:

Պետության նպատակը մարդն է ու նրա իրավունքները: Մարդու իրավունքների գե-

<sup>5</sup> Глухарева Л.И., Права человека в современном мире. М., 2003, с. 151-169.

րակայությունը արմատապես ներագրում է նաև պետության բնույթի վրա: Դա նշանակում է, որ պետությունը հասարակական դաշինքի արդյունքում ստեղծված կազմակերպություն է, որի առաքելությունը մարդու իրավունքների անօտարելիության ու անքակտելիության երաշխավորումն է, հասարակական կարգուկանոնի ու խաղաղության հաստատումը:<sup>6</sup>

Միջազգային դաշնագրերն ու հռչակագրերը նպաստում են, որպեսզի «մարդը նպատակ է, այլ ոչ միջոց» սկզբունքը ներթափանցի նաև ազգային օրենսդրությունների մեջ: Սակայն ինչպես պատմության, այնպես էլ արդիականության մեջ բազում են այս սկզբունքի մերժման օրինակները, իսկ որոշ երկրներում նման մերժումը դարձել է ներքին և արտաքին քաղաքականության անկյունաքար:

Մարդը միջոց չէ պետության համար, այլ նպատակ:

Հանրաճանաչ սկզբունքներում և միջազգային իրավունքի նորմերում ամրագրված մարդու իրավունքները կախված չեն պետության սոցիալ-տնտեսական կարգից, նրա զարգացման մակարդակից, պատմական և այլ առանձնահատկություններից: Դրանք պետք է տրամադրվեն բոլոր մարդկանց և երաշխավորվեն երկրի Սահմանադրությամբ ու օրենսդրությամբ: Ճանաչելով մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային նորմերը՝ պետությունը պարտավորություն է ստանձնում ոչ միայն միջազգային հանրության, այլև իր իրավասության ներքո գտնվող բոլոր մարդկանց առջև:

Յուրաքանչյուր մարդ կարող է պետությունից պահանջել պահպանել իր ցանկացած իրավունք, որը, թեև ամրագրված չէ ազգային օրենսդրության մեջ, սակայն ստանձնված է պետության կողմից որպես միջազգային պարտավորություն:

Այդ նպատակով քաղաքացին կարող է օգտագործել ոչ միայն իր իրավունքների պաշտպանության ազգային մեխանիզմները, այլև դիմել միջազգային իրավապաշտպան մարմինների օգնությանը: Այսպես, ՀՀ

Սահմանադրության 18-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է, որ «Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին»:

Պետությունը պատասխանատու է իր իշխանության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի իրավունքների երաշխավորված պաշտպանության համար: «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» մեջ, որը հավանության է արժանացել ՀՀ Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի 2007թ. հունվարի 26-ի նիստում,<sup>7</sup> որպես ազգային անվտանգության ռազմավարության իրագործման հիմնական երաշխիքներ են նաև.

- պետական կառավարման համակարգի արդյունավետությունը,
- իրավունքի գերակայության ապահովումը,
- ժողովրդավարական արժեքների արմատավորումը,
- դատական իշխանության անաչառությունն ու անկախությունը,
- սոցիալական արդարության ապահովումը,
- մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովումը:

Նույն փաստաթղթում նշված է, որ իրավապահպանության բնագավառի ռազմավարական բարեփոխումները պետք է ուղղված լինեն «մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովմանը, հակաիրավական ոտնձգություններից պետության, հասարակության և անհատի պաշտպանությանը»:<sup>8</sup>

Մարդու իրավունքները ոչ միայն սահմանափակում են պետական ամենագոր իշխա-

<sup>6</sup> Головистикова А. Н., Грудцина Л. Ю., Права человека. М., 2006, с. 81-82.

<sup>7</sup> «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», N 11 (535), 2007թ., էջ 10-28:

<sup>8</sup> «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», N 11 (535), 2007թ., էջ 16:

նությունը որոշակի սահմաններում և գործունեության ոլորտներում, այլև կանխորոշում են պետության իրավաստեղծ և իրավապահպան գործունեությունը, նրա սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական զարգացման հիմնական ուղղությունները: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ հայ սահմանադրական իրավունքի տեսության և պրակտիկայի պատմության մեջ առաջին անգամ սահմանադրական մակարդակով ամրագրված են պետության հիմնական խնդիրները՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում, որոնք ուղղված են մարդու համար ավելի բարեկեցիկ և արժանապատիվ կենսամակարդակի ապահովմանը. «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են՝

1. պաշտպանել և հովանավորել ընտանիքը, մայրությունը և մանկությունը.
2. նպաստել բնակչության զբաղվածությանը և աշխատանքի պայմանների բարելավմանը.
3. խթանել բնակարանային շինարարությունը, նպաստել յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը.
4. իրականացնել բնակչության առողջության պահպանման ծրագրեր, նպաստել արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը.
5. նպաստել երիտասարդության մասնակցությանը երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին.
6. խթանել ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը.
7. իրականացնել հաշմանդամության կանխարգելման և բուժման ծրագրեր, խթանել հաշմանդամների մասնակցությունը հասարակական կյանքին.
8. նպաստել անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացմանը.
9. նպաստել գիտության և մշակութային զարգացմանը.
10. իրականացնել ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն.
11. նպաստել ազգային և համա-

**մարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը.**

**12. ապահովել տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակը:**  
**Պետությունը պարտավոր է իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել սույն հոդվածում ամրագրված խնդիրների իրականացման համար»:** (ՀՀ *Սահմանադրության 48 հոդված*)

Իրենց հերթին մարդու իրավունքները պետք է նպաստեն և աջակցեն հասարակության բարոյական կատարելագործմանը, օրինականության և իրավակարգի պահպանմանը, սոցիալական համերաշխության ամրապնդմանը, առանց որի անհնար է հասարակության բնականոն գործունեությունը և առաջընթացի ապահովումը:

Մարդու հիմնական իրավունքները կոչված են ապահովել անհատի տարատեսակ շահերը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Անհատական ազատությունն իրականացնելիս դրանք անհատին ազատ ընտրության հնարավորություն են ընձեռում և միաժամանակ որոշում են այդ ազատության սահմանները:

Չպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ ոչ մի հասարակություն չի կարող մարդուն անսահման ազատություն տրամադրել, քանի որ դա կհանգեցնեք անհատական շահերի անվերջ բախումների:

Ազատությունը չի կարող բացարձակ և անսահմանափակ լինել, քանզի այն բնութագրական է յուրաքանչյուր մարդկային էակին, որոնք ապրում են հասարակության մեջ: Հետևաբար, ազատության բնական սահմանափակումը բխում է յուրաքանչյուրի շահերից: Ազատության փոխադարձ ծանաչումը ինքնին ենթադրում է դրա մի մասից հրաժարում՝ հանուն բոլորին հավասար ծավալի ազատության հնարավորության:

Բոլորը հավասարապես օգտվում են իրավունքներից ու ազատություններից, իսկ եթե որևէ մեկի իրավունքները խախտվում են մեկ այլ անձի կողմից չարաշահումների հետևանքով, ապա պետությունը նրան հնարավորություն է ընձեռում պաշտպանել այդ իրավունքները օրենքով չարգելված բոլոր միջոցներով:

Ինչպես նշում է ակադեմիկոս Վ. Ս. Ներսեսյանցը, **«Իրավական հավասարությունն ազատների հավասարությունն է, հավասարությունն ազատության մեջ՝ ան-**

հատների ազատության ընդհանուր մասշտաբն ու հավասար չափը: Իրավունքը խոստում և գործում է նման հավասարության լեզվով ու միջոցներով և դրա շնորհիվ հանդես է գալիս որպես մարդկանց համատեղ կյանքում ազատության կեցության արտահայտման ու իրականացման համընդհանուր և անհրաժեշտ ձև: Այս իմաստով, կարելի է ասել, իրավունքն ազատության մաթեմատիկան է»:<sup>9</sup>

Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության վերաբերյալ կարևորագույն փաստաթղթեր հանդիսացան 1948թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը»՝ «որպես առաջադրանք, որի կատարմանը պետք է ձգտեն բոլոր ազգերը և պետությունները», ինչպես նաև Ցեղասպանության ոճրագործության կանխման և դրա համար պատժի մասին 1948թ. դաշնագիրը, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1965թ. դաշնագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. ընդունված միջազգային դաշնագիրը և դրան կից արձանագրությունը, ինչպես նաև Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966թ. դաշնագիրը, 1975թ. ԵԱՀԽ եզրափակիչ ակտը և մարդու իրավունքների վերաբերյալ տարածաշրջանային մյուս կազմակերպությունների ընդունած փաստաթղթերը:

Ներկայումս մարդու իրավունքների պաշտպանությունը ճանաչված է որպես միջազգային իրավունքի **jus cogens** (հիմնական) սկզբունք: Սա նշանակում է, որ պետությունները, անկախ իրենց զարգացման մակարդակից, քաղաքական, տնտեսական և սոցիալական կառուցվածքից, պարտավոր են ստանձնել միասնական համընդգրկուն միջազգային իրավական պարտականություններ՝ ի շահ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, և դրանք ապահովել յուրաքանչյուրի համար՝ անկախ սեռից, ազգությունից, ռասայից, դավանանքից կամ այլ հատկանիշներից:

Մարդու հիմնական իրավունքների և ազատությունների հիմնահարցն այսօր նաև Հայաստանում ձեռք է բերել առանձնակի

նշանակություն ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումներով:

Մեզանում մարդու իրավունքների ապահովման բնագավառում որոշակի ձեռքբերումների հետ մեկտեղ (ընդլայնվել են մարդու իրավունքների դատական պաշտպանության հնարավորությունները, օրենսդրոն են ընդունված են մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային չափորոշիչները, ընդունված է ՀՀ օրենք «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» և այլն) երկրում բազմաթիվ են մարդու իրավունքների և ազատությունների խախտումները, ինչը հասարակության մեջ ստեղծում է լարվածություն, իսկ մարդկանց հոգիներում՝ անվստահություն ու հուսալքում:

Մարդու իրավունքները հանդիսանում են ավանդականից դեպի արդի մշակույթ անցում կատարող հասարակությունների պարտադիր տարր:

Մարդու իրավունքները դարձան արդիականացման իրականացման պարտադիր պայման: Արդիականացումը հիմնվում է մասնավոր սեփականության, ժողովրդավարության, անհատի ինքնորոշման առկայության վրա՝ հենվելով անհատի անձնական, գույքային, քաղաքական ինքնուրույնության վրա, իսկ առանց մարդկանց ինքնավար կեցությունը և ստեղծագործ նախաձեռնությունը խրախուսող մարդու իրավունքների՝ դա անհնար է իրականացնել: Մարդու իրավունքները միտված են տարածվել ժամանակակից ողջ աշխարհում և կրում են համապարփակ բնույթ:

Մարդու իրավունքները համամոլորակային հումանիստական մշակույթի մի մասն են, դա հումանիստար հասկացություն է, որը համակողմանի հարգանք է սերմանում մարդկային արժանապատվության հանդեպ: Մարդու իրավունքները կարևոր դեր են խաղում հասարակական հարաբերությունների հումանիզացման, բարքերի մեղմացման, միմյանց հանդեպ մարդկանց հանդուրժողականությունը մեծացնելու գործում:

Մարդու իրավունքների գաղափարի շնորհիվ հասարակական գիտակցությունն ու պրակտիկան սկսեցին թեև դանդաղ, բայց զարգանալ բռնությունից դեպի մարդկայնություն:

Մարդու իրավունքների խնդիրն է մարդու

<sup>9</sup> Ներսեսյանց Վ. Ս. Իրավունքի և պետության տեսություն: Բուհական դասագիրք: Թարգմ. խմբ. Վլ. Նազարյան, Երևան, 2001, էջ 36:

մեջ վերականգնել մարդկայինը, ազատել նրան ստրկությունից և ինքնատարումից, շրջել դեպի իրեն և ինքնաճանաչում: Մարդու իրավունքները մարդու «մարդկայնացման» գործընթացն է: Մարդու իրավունքների շնորհիվ իրավական համակարգերը մարդկայնանում են, հումանիզացվում ու ժողովրդավարացվում, շրջվում են դեպի մարդը՝ օգնելով նրանց լուծել իրենց հրատապ հիմնախնդիրները:

Իրավունքը, որը ներառում է մարդու

իրավունքների պաշտպանությունը, սկսում է ներկայացնել ոչ միայն իշխանության, այլև անհատի շահերը և դադարում է լինել բացառապես պետության մենաշնորհ:

Մարդու իրավունքներով «լեցուն» հումանիստական իրավունքը նյութեղենացնում է ոչ թե կամայական բովանդակությամբ ձևական իրավունքը, այլև անձի պահպանվող ինքնակառավարումը սոցիալականության կազմակերպված համակարգում:

## ПРОБЛЕМА ВСЕОБЪЕМЛЕМОСТИ ОНЦЕПЦИИ ПРАВ ЧЕЛОВЕКА НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

**Արևատ օԳԱՆԵՏՅԱՆ**

Կ. Յ. Ո.

### РЕЗЮМЕ

Цель настоящей статьи – еще раз констатировать приоритетную роль прав человека в системе прав, имея в виду их основополагающее значение для внутри государственного права и законодательства любого государства.

Цель законодательного регулирования реализация прав человека. Права человека это дух законов и являются основой для их создания, предопределяя их содержание.

У государств и народов свои особенности, но единое повсеместно-это человек.

В этом и заключаются основы, предпосылки и причины всеобъемлемости его прав.

Государство несет ответственность за гарантированную защиту прав каждой находящейся под его эгидой личности. Фактический результат реализации естественных и неотчуждаемых прав и свобод человека и гражданина – их достойная, обеспеченная и безопасная жизнь, к обеспечению которой должна быть направлена вся деятельность демократического государства; ни гражданину, ни народу ненужно государство не обеспечивающее ему необходимые условия для подобного образа жизни.

## THE PROBLEM OF UNIVERSALITY OF HUMAN RIGHTS IN CONCEPT CONTEMPORARY CONDITIONS

**Arevhat HOVHANNISYAN**

### SUMMARY

The aim of this article is to certify one more time the prior role of human rights in law systems, meaning the fundamental importance of them for interstate law of any state.

The aim of law-regulation is the realization of human rights. Human rights are the spirit of the laws and the basis of their creation, predetermining their contents.

State and nations have their own peculiarities but there is something general between them- it's the human being. And this is the very basis, reason and cause of the universality of his rights.

State is responsible for the guaranteed protection of the rights of its citizens. The actual result of the realization of natural and inalienable rights and freedoms of the man and nations is their worthy and safe life, so the whole activity of any democratic state must be directed to this main aim-to ensure these high-mentioned conditions for such a desired mode of life.

**Քանալի բառեր** - Մարդ և քաղաքացի, իրավունքներ և ազատություններ, մարդասիրություն, համընդհանրություն, գերակայություն



# ԴԱՏԱՐԱՆԸ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

## Մեծ Բրիտանիայի օրինակով

### Վաղարշակ ՂԱԶԱՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու

*Ընդունված է համարել, որ անգլիական ընդհանուր իրավունքի պատմությունը սկսվում է 1066 թ.-ին, երբ նորմանդացի կոմս Վիլհելմը Նվաճողի զորքը Հասթինգի մոտ կռվում պարտության մատնեց անգլոսաքսերի զորքերին: Նորմանդական ներխուժման արդյունքում իշխանության նախկին ինստիտուտները քայքայվեցին, ինչն օգնեց իշխանության հստակ ուղղահայացի ստեղծմանը, որը գլխավորեցին նոր դինաստիայի թագավորները: 20 տարի անց Վիլհելմն իրեն հռչակեց Անգլիայի հողերի գերագույն սեփականատեր և բոլոր հողատերերից պահանջեց իրեն հավատարմության երդում տալ<sup>1</sup>:*

Կառավարման համակարգում հատուկ տեղ էր զբաղեցնում Թագավորական կուրիան /Curia regis/, որն օժտված էր բազմաթիվ գործառնություններով. հարկերի գանձարան մուտք գործելու հսկողություն, պետական գործերի վարույթ, առավել խճճված վեճերի ու ծանր հանցագործությունների դատաքննություն:

Չետագայում դրա կազմից սկսեցին առանձնանալ դատական ատյանները: Սկզբից ձևավորվեց Գանձարանի դատարանը, որն օժտված էր հպատակների ու թագավորի միջև ֆինանսական վեճերի լուծման իրավունքով: Ավելի ուշ ձևավորվեց Ընդհանուր վարույթների դատարանը, որը հիմնականում քննում էր հողային վեճերը, որոնք առաջանում էին հպատակների միջև ու չէին շոշափում թագի շահերը: Թագավորական կուրիայի հիման վրա ձևավորված էր որոշ ատյանը դարձավ Թագավորական աթոռի դատարանը: Նրան տրամադրված էին ավելի լայն իրավասություններ՝ ինչպես քաղաքացիական, այն-

պես էլ քրեական դատավարության ոլորտում<sup>2</sup>:

Դատական համակարգի մեջ էին մտնում նաև տեղական դատարանները՝ կոմսությունների, բարոնների, եկեղեցական, առևտրային և այլ դատարանները: Սակայն դրանց դերն աստիճանաբար թուլանում էր թագավորական դատարանների իրավասության ընդլայնմանը զուգընթաց:

Թագավորական դատարանին դիմելն ուղեկցվում էր բյուրոկրատական բազմաթիվ ձևականություններով: Որպես կանոն, մասնավոր անձինք պետք է դիմեին Լորդ-կանցլերին՝ միջնորդությամբ, որպեսզի գործը քննվի թագավորական դատարանի կողմից: Լորդ-կանցլերը դատական հարկը գանձելուց հետո հրաման էր արձակում գործը դատարան ուղղելու մասին: Առանձին գործերով թույլատրվում էին անմիջական դիմում համապատասխան դատական ատյանին<sup>3</sup>:

Սկզբում գործերը քննվում էին Լոնդոնում: Չետագայում անրագրվեց թագավոր-

<sup>1</sup> Մանրամասն տես **Романов А.К.** Право и правовая система Великобритании. М., 2010.

<sup>2</sup> Ավելի մանրամասն տես **Уолкер Р.** Английская судебная система. М., 1980. С. 30 - 32:

<sup>3</sup> Տես **Давид Р.** Основные правовые системы современности. М., 1988. С. 264.

րական դատավորներին թագավորության այլ տարածքներ գործուղելու փորձը, որտեղ նրանք անցկացնում էին դատական նիստեր /սահզներ/: Էդուարդ առաջինի ժամանակներից այդպիսի դատական նիստերը անցկացվում էին տարեկան երեք-չորս անգամից ոչ պակաս:

Ձևավորվել էր դատական գործերի քննության չափազանց բարդ մի ընթացակարգ: Անդրադառնալով այս թեմային, **Կ. Ցվայգարտն** ու **Յ. Քետսը** գրում են. **«Շատ կարևոր էր, որպեսզի հայցվորը վարույթի սկզբից առաջ մտածի, թե հայցադիմումի որ տեսակն է առավելապես համապատասխանում իր գործի հանգամանքներին ու կարող է օգնել այն շահելուն: Սակայն այդպիսի ընտրությունը ոչ միայն կարևոր էր, այլև՝ բարդ. կարևոր էր, քանի որ կարգադրության տեսակի սխալ ընտրությունը հղի էր բողոքի դիտարկման մերժումով, բարդ՝ քանի որ կարգադրությունների տեսակների թիվն ավելի ու ավելի մեծանում էր, ուստի ավելի ու ավելի դժվար էր դառնում դրանց տարբերակելը, քանի որ յուրաքանչյուր ֆորմուլյարը համապատասխանում էր գործի խիստ որոշակի հանգամանքներին»<sup>4</sup>:**

Ասվածը բացատրում է այն թե ինչու մինչև XIX դ. անգլիացի իրավաբանների համար **«կարևոր չէր մտածել այն մասին, թե որ որոշումն է արդար, այլ իրենց ուշադրությունը կենտրոնացնել հայցերի կոնկրետ տեսակներով տարբեր ընթացակարգային, վերին աստիճանի ձևականացված գործողությունների վրա»<sup>5</sup>:**

Այդպես էր ձևավորվում հատուկ իրավական ավանդույթը, որն իր նմանակը չուներ ո՛չ բարբարոսական, ո՛չ ավանդական հռոմեական, ո՛չ հուդախիտական, ո՛չ էլ իսլամական իրավունքում<sup>6</sup>:

Թագավորական ընտանիքների անդամների միջև հաճախակի տարածայնություններ էին առաջանում: Որպես հետևանք,

ձևավորվում էին դատական նոր ատյաններ:

XIV դարի կեսերին սկսեց ձևավորվել առավելապես բարդ գործերի համատեղ քննության փորձը՝ ընդհանուր նիստում, որին մասնակցում էին թագավորական երեք դատարանների դատավորները, իսկ հետագայում նաև Լորդ-կանցլերի դատարանի դատավորները: Սկզբնապես այդպիսի նիստերը ոչ պաշտոնական են եղել: Սակայն XV դ.-ի դրությամբ դրանք ճանաչվել են ինքնուրույն դատական ատյան, որը կոչվեց Գանձարանային պալատ, քանի որ դրա նիստերն անցկացվում էին Գանձարանային պալատի տարածքում: Գանձարանային պալատում քննվում էին ինչպես քաղաքացիական /մինչև XVII դ./, այնպես էլ քրեական /մինչև XIX դ./ գործեր:

Գանձարանային պալատի շրջանակներում 1585 թ.-ին ստեղծվեց ևս մի վերաքննիչ դատարան, որը քննում էր բողոքները:

Թագավորական գահի դատարանը քննում էր Ընդհանուր վարույթների դատարանի որոշումների դեմ բողոքները: Իսկ Գանձարանային պալատի դատարանը, որը հիմնադրվել էր 1585 թ.-ին, բողոքներ էր ընդունում Թագավորական գահի դատարանի որոշումների դեմ<sup>7</sup>: Թագավորական գահի դատարանի որոշումները կարող էին բողոքարկվել նաև Լորդերի պալատ, որը ժամանակի ընթացքում դարձավ Գերագույն դատական ատյան:

Դատական վերանայման նշված համակարգը իր գոյությունը պահպանեց մինչև 1830 թ., երբ ստեղծվեց նոր՝ բոլոր երեք դատարանների համար ընդհանուր վերաքննիչ ատյան, որը նույնպես ստացավ **«Գանձարանային պալատի դատարան»** անվանումը: Սակայն այն գործեց միայն 45 տարի: 1875 թ.-ին դրա գործառույթները անցան Վերաքննիչ դատարանին:

XIV դ.-ին սկսեց ձևավորվել դատական համակարգի մի նոր ստորին օղակ՝ **հաշտարար դատավորները**: Սկզբնապես

<sup>4</sup> Цвайгарт К., Кетц Х. Введение в сравнительное правоведение в сфере частного права. М., 1995. С.279-280.

<sup>5</sup> Давид Р. Основные правовые системы современности. М., 1988. С. 266.

<sup>6</sup> Stu. Glenn P. Legal Traditions of the World. Sustainable Diversity in Law. N.Y., 2007. P. 230.

<sup>7</sup> Մանրամասն տես. Կոլեր P. Նշված աշխ. էջ 32, 33:

նրանք նշանակվում էին հասարակական կարգուկանոն հաստատելու գործում շերիֆներին աջակցություն ցուցաբերելու համար և կոչվում էին **խաղաղության պահապաններ** /custodes pacis/: Դատական գործառնություններն նրանց են անցել XIV դ. սկզբին: Նրանց իրավասության մեջ էր մտնում ոչ միայն քաղաքացիական, այլև բազմաթիվ քրեական գործերի քննությունը, այդ թվում նաև մահապատժով պատժվող: 1496 թ.-ից հաշտարար դատավորները, որոնց մեծ մասը չունեին իրավաբանական կրթություն, իրավունք էին ստացել նստաշրջանների արանքում աննշան քրեական գործեր քննելու՝ ավելի պարզեցված, «վճարային» կարգով, առանց ատենակալների մասնակցության:

Նշված դատարանները մտնում էին ընդհանուր իրավասության դատարանների համակարգի մեջ, որոնք գործում էին նախադեպերի՝ նմանատիպ գործերով նախկինում կայացրած որոշումների հիման վրա:

Որպես կանոն, ընդհանուր իրավասության դատարաններում վարույթները ձգձգվում էին ամիսներով, անգամ՝ տարիներով: Վարույթի այդպիսի առանձնահատկությունը փրկարար էր այն ժամանակների քրեական օրենսդրության ծայրաստիճան խստության պայմաններում: Չէ որ հանցագործությունների մեծ մասի համար նշանակվում էր մահապատիժ և դատապարտյալների գույքի բռնագրավում:

Իրավունքների ու ազատությունների որոշակի երաշխիքներ էր տալիս **երդվալ ատենակալների դատարանը**: XIV դ.-ից ծանր քրեական հանցագործությունների համար պատասխանատվության կանչելու համար պահանջվում էր մեծ ժյուրիի /grand jury/ համաձայնությունը, որի կազմի մեջ մտնում էին կոմսության 24 ազատ հողատերեր: Նրանց գործառնությունների կազմում, մինչև 1934 թվականը, եղել է մեղադրական դատավճիռների հաստատումը:

VII դ. վերջից բազմաթիվ քաղաքացիական գործերի դատաքննությունը սկսեց իրականացվել 12 ատենակալների մասնակցությամբ, ովքեր գնահատում էին փաստերը, այլ ոչ թե կիրառվող իրավունքը: Ատենակալների դատարանը սկսեց օգտագործվել նաև քրեական գործերի դատաքննության ժամանակ:

Մինչև 1670թ. ատենակալները կարող էին ենթարկվել պատասխանատվության՝ տույժի կամ բանտարկության տեսքով, եթե դատավորը սխալ էր համարում նրանց կողմից կայացրած վճիռը:

Դատավարության նշված առանձնահատկությունները հաճախակի հարուցում էին թագավորական իշխանության դժգոհությունը: Միջոցներ էին ձեռնարկվել՝ զուգահեռ դատական համակարգեր ստեղծելու նպատակով: Մասնավորապես, ձևավորվել էր **Աստղային պալատի դատարանը**, որը բաղկացած էր Գաղտնի խորհրդի անդամներից, Լորդ-կանցլերից, Լորդ-գանձապահից, Լորդ-կնիքի պահապանից և ընդհանուր իրավասության դատավորներից: Նրա իրավասության մեջ էին մտնում առևտրական և եկեղեցական իրավունքի հարցերը, որոնցից շատերը միևնույն ժամանակ մնում էին ընդհանուր իրավասության դատարանի վարույթում, ինչն նրանց միջև սուր տարածայնությունների տեղիք էր տալիս: Բացի այդ, Աստղային պալատի դատարանը քննում էր աննշան հանցագործություններ, հիմնականում պետական կառավարման ոլորտում խախտումների հետ կապված: Հիմնականում այն եղել է ինկվիզիցիոն, այլ ոչ թե մրցակցային: Աստղային պալատի դատարանը երկար կյանք չունեցավ: Անգլիական հեղափոխության ժամանակ այն վերացվեց:

Այլ ճակատագիր է ունեցել **Լորդ-կանցլերի դատարանը**, որը ձևավորվել էր XV դ. երկրորդ կեսին՝ դատական պաշտպանության մերժման կամ ընդհանուր իրավասության դատարաններում անարդար վճռի կիրառման մասին միջնորդությունների քննության ընթացքում:

Այսպիսով Լորդ-կանցլերի դատարանի և ընդհանուր իրավասության դատարանների իրավասությունները խաչվում էին, ինչը նրանց միջև հաճախակի ծագող բախումների առիթ էր դառնում: Սակայն, հաճախակի ընդհանուր իրավունքի դատավորները ճանաչում էին Լորդ-կանցլերի որոշումների հիմնավորվածությունը<sup>8</sup>:

Կանոնական իրավունքը երկար ժամանակ համատեղ գոյություն ուներ ընդհանուր իրավունքի և արդարության իրավունքի հետ և մեծապես նախանշում էր դրանց զարգացումը:

<sup>8</sup> Մեջք. ըստ **Уолкер Р.** Նշված աշխ. էջ 71.

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լիանա ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ Սահմանադրական դատարանի  
աշխատակազմի գլխավոր մասնագետ

*Միջազգային իրավունքը, որպես ինքնուրույն, բարդ և ազգային իրավունքում կարևոր տեղ ունեցող համակարգ, ստեղծվում է պետությունների և միջպետական կազմակերպությունների կողմից՝ համաձայնության ձևաապարհով, որի կարգավորման առարկան են միջպետական և այլ միջազգային հարաբերությունները, ինչպես նաև ներպետական իրավահարաբերությունների առանձին ոլորտները:*

*Միջազգային իրավունքի գործառնական դերակատարությունը հնարավոր է արդյունավետ երաշխավորել միայն պետության ներքին իրավունքի հետ սերտ համագործակցության միջոցով, իսկ ազգային իրավական համակարգի բնականոն գործունեությունը մեծապես պայմանավորված է միջազգային իրավունքի հետ համագործակցությամբ: Առանձին դեպքերում, ներառված լինելով պետության իրավական համակարգում՝ միջազգային իրավական նորմերը գործում են որպես այդ համակարգի մաս և ապահովվում են հենց այդ համակարգին բնորոշ գործիքակազմի միջոցով: Այդ մասին է վկայում ինչպես, օրինակ՝ ՀՀ Հիմնական օրենքի՝ Սահմանադրության 6-րդ հոդվածում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ «... Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են...», այնպես էլ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը, ըստ որի՝ «...ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն է»:*

Միջազգային իրավական և ներպետական իրավական համակարգերը փոխկապակցված են և գտնվում են մշտական փոխներգործության մեջ, ինչը նպաստում է նշված համակարգերի նույնաբնույթ իրավադրույթների սոցիալական արժեքի առավել բացահայտմանը և դրանց արդյունավետ իրացմանը:

Ավելին, ներկայումս ազգային իրավունքի նորմի կիրառումը՝ զուգակցված միջազգային իրավունքի հետ, նոր որակի իրավական ռե-

սուրս է, որն արմատական ազդեցություն է թողնում ցանկացած հարաբերության իրավակարգավորման վրա, անկախ նրանից՝ դա վերաբերում է տնտեսական կամ սոցիալական կյանքին, թե անձի քրեաարդարադատական իրավունքների երաշխավորմանը<sup>1</sup>:

Արդի փուլում պետությունները կամ սահմանադրական մակարդակով ճանաչել են միջազգային իրավունքի կարևորագույն դերը պետական կյանքի կազմակերպման հարցում,

<sup>1</sup> Տե՛ս՝ Վլադիմիր Գովհաննիսյան: Քրեական արդարադատության սկզբունքները միջազգային իրավունքում. Եվոլյուցիան և իմպլեմենտացիայի առանձնահատկությունները: Եր.: Տիգրան Սեծ, 2011, էջ 312:

կան միջազգային հիմնարար իրավադրույթներն առանց որևէ վկայակոչման փոխակերպվել են սահմանադրական նորմերի ու սկզբունքների: Սա անհրաժեշտ պայման է, քանի որ առանց սանկցիայի առկայության միջազգային իրավունքը երբեք չի կարող ինքնուրույն «ներխուժել» որևէ ինքնիշխան պետության իրավական համակարգ կամ իրացվել այդ պետությունում<sup>2</sup>:

Անդրադառնալով ազգային իրավունքի վրա միջազգային իրավունքի ազդեցության հիմնախնդրին, չպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ միջազգային իրավունքի իրացումը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում մեծ չափով պայմանավորված է նաև տվյալ պետության իրավական համակարգի առանձնահատկությամբ, պետության, նրա պաշտոնատար անձանց մոտեցումներով, ինչպես նաև երկրի Հիմնական օրենքում արտացոլված լինելու հանգամանքով, քանի որ հենց Հիմնական օրենքում է ամրագրված այն արժեհամակարգը, որն անմիջականորեն շոշափում է մարդու իրավունքները և շահերը: Ասվածի մասին վկայում են բազմաթիվ երկրների Սահմանադրություններ և բացառություն չէ նաև ՀՀ Սահմանադրությունը<sup>3</sup>:

Ինչպես արդեն նշվեց, այն արժեքների համակարգը, որն անմիջականորեն շոշափում է մարդու իրավունքները և շահերը, իրենց ամրագրումն են ստացել բոլոր երկրների Սահմանադրություններում, և որպես օրինակ բերվեց ՀՀ Սահմանադրությունը: Սակայն, այլ երկրների Սահմանադրությունները նույնպես բացառություն չեն:

Պետությունների՝ միջազգային իրավական պարտավորությունների բարեխիղճ կատարման առնչությամբ բավականին հետաքրքիր է ամերիկացի պրոֆեսոր **Լ. Հենկինայի** կարծիքը: Նա գտնում է, որ **«Միջազգային իրավունքը հանդիսանում է պետության իրավունքն ինչպես գործադիր մարմնի, այնպես էլ և դատարանների համար: Այն պետք է բարեխիղճորեն իրականացվի գործադիր մարմնի և կիրառվի դատարանների կողմից: Դրա իրականացումից հրաժարվելու իրավունքը՝ կա և պետք է լինի խիստ սահմանափակ»**<sup>4</sup>: Այսինքն, ասվածից կարելի է զալ այն եզրահանգման, որ միջազգային իրավունքը լինելով ներպետական իրավական համակարգի բաղ-

կացուցիչ մաս, իր ուրույն տեղն զբաղեցնելով այդ համակարգում և լինելով ինքնուրույն համակարգ ենթակա է կիրառման երկրի բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից, առանց որևէ սահմանափակումների: Եվ քանի որ, միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերն ու սկզբունքներն իրենց ամրագրումն են ստացել պետությունների Սահմանադրություններում, իսկ Սահմանադրության՝ որպես յուրաքանչյուր երկրի Հիմնական օրենքի պահպանումը պարտադիր պայման է հանդիսանում յուրաքանչյուր մարմնի համար, լինի այն գործադիր, օրենսդիր և թե դատական, հետևաբար, օրենսդիր մարմինը չի կարող ընդունել Սահմանադրությանը և մարդու հիմնական իրավունքներին վնասող և մարդու վիճակը վատթարացնող օրենքներ: Գործադիր իշխանությունն իր գործունեությունն իրականացնելիս պետք է կաշկանդված լինի մարդու և քաղաքացու իրավունքներով և ազատություններով, իսկ դատական իշխանությունը պետք է հանդիսանա, այդ իրավունքները և ազատությունները պաշտպանող ամենակարևոր մարմին:

Պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարման հիմնախնդրին է ուղղված հատկապես Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. կոնվենցիան, որի «Ներքին իրավունքը և պայմանագրերի պահպանումը» վերտառությամբ 27-րդ հոդվածում հստակ ամրագրված է, որ **«Մասնակիցը չի կարող վկայակոչել իր ներքին իրավունքի դրույթը որպես իր կողմից պայմանագրի չկատարման արդարացում»**:

Միջազգային իրավական պարտավորությունների իրականացումն ընդունված է կապել **«իմպլեմենտացիա»** տերմինի հետ: Միջազգային իրավունքի իմպլեմենտացիան իրականացվում է ինչպես միջպետական, այնպես էլ ներպետական մակարդակում: Ներպետական իրավունքում միջազգային իրավունքի իմպլեմենտացիան ուղղված է նրան, որպեսզի պետությունն իր լիազոր մարմինների միջոցով ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները և գործողություններն իր միջազգային պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար, քանի որ պետության մարմինների այդ համապատասխան գործողություններից կախված կլինի միջազգային իրավական նորմերի իրա-

<sup>2</sup> Տես՝ նույն տեղում, էջեր 303-304:

<sup>3</sup> Տես՝ ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհ. խմբագրությամբ՝ **Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի**: - Եր.: «Իրավունք», 2010, էջ 66:

<sup>4</sup> Տես՝ **Лукашук И. И.** Конституции государств и международное право.-М.: Спарк, 1998. с. 15.

կանացման արդյունավետությունը, իրավունքի գերակայության ապահովումը՝ դրանով իսկ ամրապնդելով իրավական պետության գաղափարը<sup>5</sup>: Այս առնչությամբ բուլղարացի գիտնական **Պ. Ռադոյնովը** պնդում է, որ՝ պետության պարտավորությունը և պատասխանատվությունն ապահովել միջազգային իրավունքի նորմերի ներպետական իրացումը կրում է պոզիտիվ-իրավական բնույթ<sup>6</sup>:

Անդրադառնալով ներպետական իրավունքի վրա միջազգային իրավունքի ազդեցությանը, ռուս հայտնի իրավաբան **Տ. Մորշչակովան** սահմանադրական արդարադատությանը նվիրված միջազգային կոնֆերանսներից մեկում ներկայացված իր զեկույցում նշել է, որ համեմատական իրավագիտությունում և միջազգային իրավունքում արդեն շատ վաղուց միջազգային իրավունքը դիտվում է որպես հատուկ տեսակի նյութական սահմանադրական իրավունք, և, եթե առաջնորդվենք նրանով, որ միջազգային իրավունքը՝ մարդու իրավունքի և ազատության ոլորտում իր էությանը իրենից ներկայացնում է նյութական սահմանադրական իրավունք, հետևաբար, այս դեպքում սահմանադրական իրավունքների և ազատությունների միջև պաշտպանության կապը, այդ թվում՝ սահմանադրական արդարադատության և միջազգային իրավունքի օգնությամբ, ձեռք է բերում որոշակի լրացուցիչ հայեցակետ<sup>7</sup>: Նշելով, որ ՌԴ Սահմանադրությունը ճանաչում է միջազգային իրավունքի գերակայությունը ներքին օրենքի նկատմամբ, որ Ռուսաստանի Դաշնությունում ճանաչվում և երաշխավորվում են մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները՝ միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին համապատասխան: Յեղիական ընդգծում է. «**Այսպիսով, Ռուսաստանի Դաշնությունը ճանաչում և երաշխավորում է մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները՝ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքներին ու նորմերին համապատասխան և այդ սկզբունքները և նորմերը դիտում է որ-**

**պես սահմանադրական կարգավորման հիմք»<sup>8</sup>**: Ավելին, հեղինակը նաև գտնում է, որ սահմանադրական արդարադատության դերն իրավունքների և ազատությունների ապահովման հարցում կանխորոշված է նրանով, որ ՌԴ Սահմանադրության մեջ ամրագրված՝ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ցանկը նույնական է, ամբողջությամբ համապատասխանում է եվրոպական հանրության և համաշխարհային հանրության կողմից որպես այդպիսին ճանաչված իրավունքներին, որոնք ենթակա են պաշտպանության ինչպես ազգային, այնպես էլ վերազգային մակարդակով: Այդ պատճառով, երբ սահմանադրությամբ նախատեսված որեւէ իրավունքի կամ ազատության խախտման մասին հարց է ծագում, ապա Սահմանադրական դատարանը, ելնելով նրանից, որ ազգային և վերազգային օրենսդրությունում ու միջազգային իրավունքում երաշխավորված իրավունքների և ազատությունների հիմքերն փաստացի նույնական են, պաշտպանում է այդ իրավունքները և ազատությունները՝ լայնորեն օգտագործելով հենց միջազգային իրավական մոտեցումները<sup>9</sup>: Եվ այստեղ հիմնական շեշտը դրվում է այն հանգամանքի վրա, որ միջազգային իրավական նորմի բովանդակությունն է որոշում նրա նշանակությունը՝ Ռուսաստանի Դաշնության ներքին իրավակիրառ գործընթացում, այլ ոչ թե վերջինիս ձևական իրավական ուժը, դրա պարտադիր լինելը կամ ձևականորեն համընդհանուր ճանաչված լինելը<sup>10</sup>:

Որպես կանոն, միջազգային իրավունքի գործնական իրացումը ներպետական մակարդակով կատարվում է նորմատիվ և ինստիտուցիոնալ տարաբնույթ գործիքակազմի միջոցով, որտեղ հսկայական դերակատարություն ունեն նաև պետությունների սահմանադրական դատարանները, որոնց՝ միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա ձևավորված իրավական դիրքորոշումները մեծ նշանակություն ունեն քրեական արդարադատության հարցերով միասնական իրավակիրառական արակտիկայի ձևավորման և զարգացման համար<sup>11</sup>, և,

<sup>5</sup> Stu՝ **Օ. Тиунов.** Решения конституционного суда РФ и международное право. <http://www.lawmix.ru/comm/5708>.

<sup>6</sup> Stu՝ **Лукашук И. И.** Конституции государств и международное право.-М.: Спарк, 1998. с. 16.

<sup>7</sup> Stu՝ Конституционное Правосудие. Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии. Выпуск 4(14)2001-1(15)2002. стр. 115.

<sup>8</sup> Stu՝ նույն տեղը, էջեր 115-116:

<sup>9</sup> Stu՝ նույն տեղը, էջ 117:

<sup>10</sup> Stu՝ նույն տեղը, էջ 120:

<sup>11</sup> Stu՝ **Վլադիմիր Յովիանցիսյան:** Քրեական արդարադատության սկզբունքները միջազգային իրավունքում. էվոլյուցիան և ինվենտնացիայի առանձնահատկությունները: Եր.: Տիգրան Մեծ, 2011, էջ 331:

որոնց հիմնական խնդիրն է հետևել օրենսդրական ակտերի սահմանադրականության, միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցերին, որի ակնհայտ վկայությունն է օրինակ ԳՅ Սահմանադրության 6-րդ հոդվածը, համաձայն որի՝ **Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն, օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին, Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:**

Շնորհիվ սահմանադրական դատարանների կողմից միջազգային իրավունքի կիրառման մարդու իրավունքների պաշտպանությունը ձեռք բերեց դինամիկ բնույթ, և նրա էությունը, մի կողմից, կոնկրետ իրավիճակներում միջազգային իրավունքի շարունակական և հետևողական կիրառումն է ազգային իրավունքի նորմերի բովանդակության խորքային արժեքները վեր հանելու նպատակով, մյուս կողմից՝ որոշումներ և վճիռներ ընդունելու միջոցով խոտան օրենքների հաղթահարումը և իրավունքի գերակայության ապահովումը<sup>12</sup>:

Ինչպես արդեն նշվեց, մարդու իրավունքների վերաբերյալ նորմերը սահմանադրությունների հիմք են կազմում, և այդ իրավունքների երաշխավորմանը, ապահովմանն ու պաշտպանությանն առնչվող նորմերն ու սկզբունքներն ամրագրված են տարբեր միջազգային փաստաթղթերում: Մարդու իրավունքների պաշտպանությունն առավելապես երաշխավորված է, եթե մարդն իր խախտված իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունք ունի, այսինքն՝ արդարադատության իրավունքը մարդու իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիք է դառնում: Ավելին, անգամ, եթե մարդու և քաղաքացու իրավունքներն ամբողջական արտացոլում չեն գտել Սահմանադրության մեջ, չեն կարող նրանից օտարվելով՝ դառնալ պետական կառավարման գործառույթ: Եթե այդ իրավունքները ճա-

նաչվում և ամրագրվում են Սահմանադրության մեջ, եթե Սահմանադրությամբ են որոշարկվում դրանց սահմանափակման շրջանակները, և եթե այդ իրավունքները կարող են նաև ոտնահարվել ոչ միայն տարաբնույթ գործողությունների ու անգործության, այլև «քաղաքական համաձայնության արդյունք հանդիսացող» օրենքների կամ այլ նորմատիվ ակտերի միջոցով, ապա այդ իրավունքների պաշտպանությունը երաշխավորված կլինի միայն ու միայն այն դեպքում, երբ մարդն օժտված է նաև սահմանադրական արդարադատության իրավունքով<sup>13</sup>, քանի որ, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը միշտ եղել է և կլինի սահմանադրական արդարադատության իրականացման առաջնային ուղղությունը:

Միջազգային իրավունքը, որպես սահմանադրական արդարադատության նորմատիվ իրավական հիմք, պահանջում է ցանկացած իրավահարաբերությունում նպաստել իրավունքի գերակայության և մարդու իրավունքների առաջնայնության սկզբունքի ճանաչմանը, որը, իր հերթին, ծառայում է այնպիսի գերակա նպատակի իրականացմանը, ինչպիսին պետական մարմինների կողմից իշխանության անսահմանափակ օգտագործման հնարավորության սահմանափակումն է<sup>14</sup>: Ի տարբերություն մյուս դատարանների, որոնք հիմնականում գործ ունեն փաստական հանգամանքների գնահատման հետ, սահմանադրական դատարանների քննության առարկան մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորման ընդհանուր հարցերն են: Սա է պատճառը, որ սահմանադրական դատարաններն իրենց իրավակիրառական պրակտիկայում ավելի հաճախ են հենվում միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին, քան մյուս դատարանները<sup>15</sup>, քանի որ, սահմանադրական դատարանները հանդես են գալիս նաև որպես փոխհամաձայնության և հաշտության մարմին, որպես քաղաքական կյանքում ու հասարակության և պետության ներսում կայունության երաշխիք, որպես սահմանադրական արժեքների պահապան<sup>16</sup>:

<sup>12</sup> Տես՝ նույն տեղը, էջ 332:

<sup>13</sup> Տես՝ նույն տեղը, էջեր 68-69:

<sup>14</sup> Տես՝ **Վլադիմիր Գովիանինյան**: Քրեական արդարադատության սկզբունքները միջազգային իրավունքում. էվոլյուցիան և իմպլեմենտացիայի առանձնահատկությունները: Եր.: Տիգրան Մեծ, 2011, էջ 333:

<sup>15</sup> Տես՝ նույն տեղը, էջեր 333-334:

<sup>16</sup> Տես՝ **Витрук Н. В.** Конституционное правосудие. Судебно-конституционное право и процесс: учеб. пособие /Н. В. Витрук. - 3-е изд., перераб. и доп. - М.: Норма: ИНФРА -М, 2010. - с. 176.

Հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ սահմանադրական դատարաններն իրենց որոշումներում բազմաթիվ հղումներ են կատարում միջազգային իրավական նորմերին: Այս հանգամանքը, հնարավոր է այդքան մեծ նշանակություն չունենար, եթե հաշվի չառնեինք հենց սահմանադրական դատարանների որոշումների իրավական ուժը, ընդգծելով նաև, որ սահմանադրական դատարանի կողմից միջազգային իրավական նորմի կիրառման իրավական հետևանքներն անմիջականորեն կապված են այն փաստի հետ, որ սահմանադրական դատարանի որոշումներն ունեն պարտադիր ուժ<sup>17</sup>: Բացի դրանից, սահմանադրական արդարադատության իրականացման մեխանիզմում ավելի ծանրակշիռ նշանակություն է ձեռք բերում ընդունված որոշումների իրացվելիությունը, հատկապես, դրանց կատարման պարտադիրությունը պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար և ծառայող անձանց կողմից, և ընդհանրապես, պետության բոլոր քաղաքացիների կողմից<sup>18</sup>:

Սկստի ունենալով, որ միջազգային իրավունքը մեծ ազդեցություն ունի սահմանադրական արդարադատության ինչպես ուղղվածության, այնպես էլ դատարանների իրավական դիրքորոշումների ձևավորման վրա, տարածված է այն կարծիքը, որ սահմանադրական դատարանները պետք է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան դիտարկեն իբրև «սահմանադրական կարգի» բաղկացուցիչ մաս<sup>19</sup>:

Սահմանադրական դատարանները միջազգային իրավունքի վրա հենվելու անհրաժեշտությունը սովորաբար իրացնում են իրենց որոշման պատճառաբանական մասում՝ բացահայտելով միջազգային իրավունքի նորմի և վիճարկվող օրենքի միջև գոյություն ունեցող հակասությունը կամ ընդհանրությունը, մեկնաբանելով և հիմնավորելով, թե իրավակարգավորման տեսանկյունից որոնք են միջազգային իրավունքի նորմերի կիրառման անհրաժեշտությունն ու իրավաչափությունը, թե միջազգային իրավունքի նորմին հակասող ազգային օրենքի կիրառումն ինչպիսի բացասական

հետևանքների կարող է հանգեցնել<sup>20</sup>:

Սահմանադրական արդարադատության առաջնային խնդիրը հանցագործությունն արագ բացահայտելուն և մեղավորին պատժելուն նպաստելը չէ, դրա համար կան համապատասխան իրավասու մարմիններ: Սահմանադրական արդարադատության առաջնային խնդիրը մեղադրյալի, տուժողի և քրեական դատավարության մյուս մասնակիցների միջազգային կոնվենցիոն ու սահմանադրական իրավունքների և ազատությունների երաշխավորումն է: Սա կարևոր առաքելություն է, քանի որ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հիմքում ընկած ցանկացած իրավական համակարգի իրական պատկերը որոշվում է ոչ այնքան միջազգային պայմանագրերով և դրանց՝ ազգային օրենսդրությամբ նախատեսված քանակով, այլ այդ պայմանագրերի իրացման հուսալի դատական կառուցակարգի գոյությամբ<sup>21</sup>:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից, կարելի է եզրակացնել, որ միջազգային իրավունքի գործառույթներն առավել արդյունավետ որակ կապահովեն, եթե իրականացվեն պետության ներքին իրավունքի հետ համագործակցության մեջ գտնվելու միջոցով: Միաժամանակ պետք է ընդգծենք, որ ազգային իրավական համակարգի բնականոն գործունեությունը կախված է միջազգային իրավունքից, և որ այդ համագործակցության շնորհիվ է տեղի ունենում կարևոր փոփոխություններ ներքին իրավունքում, մասնավորապես՝ մարդու իրավունքներին առնչվող բնագավառում, որոնք, հանդիսանալով պետությունների սահմանադրությունների հիմքը, ենթակա են պաշտպանության սահմանադրական դատարանների՝ որպես սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների կողմից, քանի որ, վերջիններս՝ սահմանադրական դատարանները, հանդիսանում են և պետք է հանդիսանան Սահմանադրությունը, Սահմանադրության գերակայությունը՝ որպես Հիմնական օրենքի, և նրա անմիջականորեն գործունեությունն ապահովող և պաշտպանող գլխավոր մարմին:

<sup>17</sup> Stu` Конституционное правосудие. Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии. Выпуск 4(14)2001-1(15)2002. стр. 121.

<sup>18</sup> Stu` Конституционное правосудие. Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии. Выпуск 3(29)2005. стр. 37.

<sup>19</sup> Stu` **Վլադիմիր Հովհաննիսյան**: Քրեական արդարադատության սկզբունքները միջազգային իրավունքում. Էվոլյուցիան և ինսլանենտացիայի առանձնահատկությունները: Եր.: Տիգրան Մեծ, 2011, էջ 334:

<sup>20</sup> Stu` նույն տեղը, էջեր 336-337:

<sup>21</sup> Stu` նույն տեղը, էջեր 357-358:



# ԳԵՐԻՇԽՈՂ ԳԻՐՔԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

## համեմատական վերլուծություն

Ստելլա ՂՈՒՇՉՅԱՆ

Նոտարի օգնական

Մրցակցային իրավունքն այսօր հանդիսանում է ԵՄ իրավական համակարգի առավել դինամիկ զարգացում ապրող ոլորտներից մեկը, ինչը մեծապես կապված է ԵՄ ներքին շուկայի զարգացման և ընդլայնման հետ: Մրցակցության սահմանափակմանը կամ արգելմանն ուղղված ցանկացած գործողություն համարվում է հակամրցակցային: Սակայն, նշենք, որ ԵՄ-ն, առաջնորդվելով հանրային շահերի պահպանմամբ, կարող է սահմանափակել մրցակցային քաղաքականությունը: Մասնավորապես գոյություն ունեն այսպես ասած ընդհանուր և անհատական բացառություններ<sup>1</sup>, որոնք որոշակի հանգամանքերի բերումով, թոյլ են տալիս սահմանափակել մրցակցությունը: Ելնելով վերոգրյալի անհրաժեշտությունից՝ թիվ 1983/84 Կանոնակարգում նշվում է, որ որոշակի ապրանքների արտադրությունը կամ տարածումը կոնկրետ տարածքներում պատկանում է կոնկրետ անձանց և ձեռք բերողներն էլ պարտավորվում են միայն վերջիններիս հետ կնքել համապատասխան պայմանագրեր<sup>2</sup>: Իսկ ահա, Կանոնակարգ թիվ 1984/84-ը կարծես հակասում է ստորև նշվածին՝ ամրագրելով նորմեր, համաձայն որոնց, ձեռքբերողն էլ իր հերթին է իրավասու ձեռք բերված ապրանքն իրացնել երրորդ անձանց՝ միաժամանակ ուղղակի մրցակցության մեջ չմտնելով սկզբնական մատակարարի հետ: Կապված վերոհիշյալի հետ՝ նշենք, որ երկու կանոնակարգերը միմյանց էականորեն հակասում են, ուստի առավել նպատակահարմար կլիներ վերանայել Կանոնակարգ թիվ 1984/84-ը:

Հիշյալ ոլորտում կարևոր նշանակություն ունեն Եվրոպական համաձայնագրով ու Եվրոպական միության արդարադատության դատարանը: Այսպես, Համաձայնագրով ձևավորում է օրենսդրական նախաձեռնությունների մեծամասնությունը, ներկայանում որպես միջնորդ ԵՄ և անդամ պետությունների միջև՝ մրցակցային կանոնները խախտելու դեպքում ընդունելով որոշումներ, նշանակե-

լով տուգանքներ և այլն: Իրավակիրառ գործունեության մեջ մեծ է նաև Եվրոպական միության արդարադատության դատարանի դերը, որը մեկնաբանում է առաջնային և երկրորդային օրենսդրությունը, վերահսկում օրենքի պահպանումը:<sup>3</sup> Դատարանի հիմնական գործառույթներն են՝ իրավունքի կյանքի կոչումը, ԵՄ ամբողջ տարածքում ԵՄ իրավունքի միատեսակ մեկնաբանումն ու

<sup>1</sup> Մասնավորապես, առաջիններն ամրագրված են ԵՄ իրավական ակտերում, իսկ երկրորդները կիրառվում են կոնկրետ, որոշակի դեպքերում:

<sup>2</sup> Տե՛ս Կանոնակարգեր թիվ 1983/84 և 1984/84՝ ընդունված 1984թ.:

<sup>3</sup> Տե՛ս Право Европейского Союза: сборник документов / сост. П.Н. Бирюков. Воронеж: Воронежский государственный университет, 2001, էջ 137:

կիրառման ապահովումը<sup>4</sup> և այլն: Սակայն, համաձայն 1989թ. դեկտեմբերի 21-ին ընդունված 4064/89 Միաձուլման մասին Կանոնակարգի՝ այն դեպքում, երբ մրցակցային քաղաքականության վերաբերյալ գործերը վերաբերում են կոնկրետ ազգային կամ պետական շահերին, ապա որոշ դեպքերում կարող է կարգավորվել այլ ենթատեքստով, ինչը գտնում ենք, որ այդքան էլ ճիշտ մոտեցում չէ:

Դատարանն ու Հանձնաժողովը մրցակցային քաղաքականության շրջանակներում հիմնականում «բախվում են» մրցակցային քաղաքականության և մտավոր սեփականության կարգավորմանն ուղղված հավասարակշռության ապահովվման և պահպանման հարցին, ինչն էլ ԵՄ ինստիտուտների հիմնական «առաջադրանքներից» մեկն է հանդիսանում: Չնայած այն հանգամանքին, որ մրցակցային քաղաքականությունը և մտավոր սեփականությունը միևնույն նպատակներն են հետապնդում, դրանց նկատմամբ միաժամանակ կիրառվում են տարբեր մեթոդներ. մասնավորապես, եթե մրցակցային իրավունքն ուղղված է կասեցնելու ձեռնարկությունների կողմից իրենց արտադրանքը կամ ապրանքանշանն օգտագործելու միջոցով հակամրցակցային գործունեության իրականացումը, ապա մտավոր սեփականության իրավանորմերը մտավոր սեփականության իրավատիրոջ համար ստեղծում են բացառիկ իրավունքներ, ինչն էլ հաճախ օգտագործվում է գերիշխող դիրք զբաղեցնող կազմակերպության կողմից՝ ի շահ իրեն: Հենց այս ենթատեքստում էլ կարևորվում գերիշխող դիրքը կանխող միջոցառումների իրականացումը:

Խախտման դրսևորումների տեսակներն ամրագրված են Լիսաբոնի պայմանագրի 102-րդ հոդվածում /նախկին՝ Եվրոպական Ընկերակցության հիմնադիր պայմանագրերի 82-րդ հոդված/. գերիշխող դիրք զբաղեցնող կազմակերպության կողմից գնային քաղաքականության փոփոխությունը հանդիսանում է սույն հոդվածով նախատեսված գերիշխող դիրքի չարաշահման դրսևորում:

Գերիշխող դիրքի չարաշահումը հիմնականում արտահայտվում է գները արհեսատկանորեն բարձրացնելով կամ իջեցնելով: Արգելվում է այնպիսի գնային քաղաքականության որդեգրումը, որն իր մեջ ներառում է մրցակցին շուկայից դուրս մղելու հարկադրանք՝ պարտադրելով անարդարացի գներ, անարդարացի առևտրային պայմաններ, արտադրության, շուկաների և տեխնիկական զարգացման սահմանափակում՝ ի վնաս սպառողների, ոչ միանման պայմանների կիրառումը այլ նաև առևտրային կողմերի հետ միանման գործարքների նկատմամբ՝ այդպիսով նրանց համար ստեղծելով մրցակցային անբարենպաստ պայմաններ, պայմանագրի մյուս կողմին պայմանագրի կնքման ժամանակ լրացուցիչ պարտավարություններ պարտադրելը, որոնք իրենց բնույթով կամ առևտրային սովորույթի համաձայն կապ չունեն այդ պայմանագրի առարկայի հետ<sup>5</sup>: Սակայն այս ցանկը սպառիչ չէ և կոնկրետ գործի շրջանակներում Հանձնաժողովի կամ Դատարանի կողմից արարքը կարող է որակվել որպես չարաշահում: Փաստորեն, Լիսաբոնի պայմանագրի 102-րդ հոդվածը արգելում է գերիշխող դիրքի չարաշահման ցանկացած դրսևորում՝ միաժամանակ հստակ չսահմանազատելով գերիշխող դիրք և գերիշխող դիրքի չարաշահում հասկացությունները:

Պայմանավորված այն հանգամանքով, որ Լիսաբոնի պայմանագրի ընդունումը սույն ոլորտում էական փոփոխություններ չնտրեց՝ չհաշված որոշակի անշան տերմինաբանական փոփոխությունները, ոլորտի կարգավորման և գործունեության ոլորտում «ճկունությունն» ապահովելու նպատակից ելնելով, ընդունվեցին մի շարք Կանոնակարգեր՝ թիվ 330/2010, թիվ 461/2010 Կանոնակարգերը և այլն: Մասնավորապես, երբ կազմակերպությունը ճանաչվում է շուկայում գերիշխող դիրք ունեցող, այնուհետև քննարկվում է այն հարցը, թե արդյոք նրա վարքագիծը խախտում է մրցակցության կանոնները, թե՞ ոչ: Ըստ էության, Գերիշխող դիրքի չարաշահումը բնութագրվում

<sup>4</sup> Տե՛ս Alison Jones, Brenda Surfin. EC Competition law. Text, Cases and Materials. Sec.Ed. Oxford University Press. 2004. P. 187.

<sup>5</sup> Տե՛ս Լիսաբոնի պայմանագրի (կոնսոլիդացված տարբերակ), հոդված 102-րդ:

է այնպիսի գործողությունների կատարմամբ, որոնք տարբերվում են տնտեսվարող սուբյեկտների կողմից բնականոն մրցակցության պայմաններում կատարվող գործողություններից՝ հանգեցնելով նորմալ մրցակցության ապահովման բարդեցմանը և խոչընդոտելով մրցակցության զարգացմանը: Խախտման հիմնական ձև է հանդիսանում կազմակերպության գնային քաղաքականության փոփոխությունը, ինչը կարող է դրսևորվել անարդար առուվաճառքի գների պարտադրմամբ՝ չափազանցեցված գներ սահմանելով<sup>6</sup>: Գերիշխող դիրքի այլ դրսևորում է հանդիսանում հարստահարիչ գների սահմանումը: Այս դեպքում ստեղծվում են այնպիսի մրցակցային պայմաններ, որոնց առկայությամբ առավել թույլ կազմակերպությունները չեն կարող մրցակցել, ինչի արդյունքում էլ նրանք «հարկադրաբար» դուրս են մղվում մրցակցային դաշտից, որից հետո գնային մակարդակները կարող են կրկին բարձրացվել<sup>7</sup>: Չարաշահման դրսևորում է նաև գների

հանդիսանում, ինչը՝ որպես առաջնահերթ նպատակ, ամրագրված է նաև ՀՀ-ԵՄ Եվրոպական Հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրում: Համաձայն ծրագրի՝ ՀՀ-ին պետք է նպաստել մրցակցային միջավայրի կատարելագործման հարցում՝ միաժամանակ ընդլայնելով ՏՄՊՊՀ-ի ընդհանուր լիազորությունները: Մասնավորապես, ծրագրում ամրագրված նպատակներն են Հայաստանի մրցակցային և պետական օժանդակության վերահսկողության օրենսդրության համապատասխանեցում ԵՄ ստանդարտներին, Հանձնաժողով

*«... Ներկայումս մրցակցային իրավունքը հանդիսանում է իրավական համակարգի առավել դինամիկ զարգացում ապրող ոլորտներից մեկը, ինչը մեծապես կապված է Եվրոպական միության ներքին շուկայի զարգացման և ընդլայնման հետ...»*

խտրականությունը, երբ ապրանքները վաճառվում և զնվում են այնպիսի գներով, որոնք կապ չունեն արժեքների տարբերությունների հետ: Այս պարագայում, գների խտրականությունը կարող է հարթել այն իրավիճակը, երբ նույն ապրանքը վաճառվում է տարբեր՝ իրական արժեքի հետ կապ չունեցող գներով, և որտեղ ապրանքները վաճառվում են նույն գնով, եթե նույնիսկ կան իրական արժեքի տարբերություններ և այլն: Այսպիսով, կարող ենք վստահորեն պնդել, որ գերիշխող դիրքի չարաշահումը հիմնականում արտահայտվում է գները արհեստականորեն բարձրացնելով կամ իջեցնելով:

Չարաշահում է նաև գների խտրականությունը, երբ ապրանքները վաճառվում և զնվում են այնպիսի գներով, որոնք կապ չունեն արժեքների տարբերությունների հետ: Այս պարագայում, գների խտրականությունը կարող է հարթել այն իրավիճակը, երբ նույն ապրանքը վաճառվում է տարբեր՝ իրական արժեքի հետ կապ չունեցող գներով, և որտեղ ապրանքները վաճառվում են նույն գնով, եթե նույնիսկ կան իրական արժեքի տարբերություններ և այլն: Այսպիսով, կարող ենք վստահորեն պնդել, որ գերիշխող դիրքի չարաշահումը հիմնականում արտահայտվում է գները արհեստականորեն բարձրացնելով կամ իջեցնելով:

ՀՀ համար ևս մրցակցությունը և պետական օժանդակության վերահսկողությունը կարգավորող քաղաքականության զարգացումն առաջնահերթ խնդիրներից մեկն է

վի վարչական ստանդարտների հզորացում՝ արժանահավատ որոշումներ կայացնելու և դրանք պատշաճ իրականացնելու նպատակով, ինչպես նաև՝ մրցակցության և պետական օժանդակության սկզբունքների մասին հանրությանն իրազեկում և այլն: Ծրագիրը նախատեսում է նաև մրցակցության և պետական օժանդակության ոլորտում միջազգային համագործակցության ընդլայնում, մրցակցությանը և պետական օժանդակությանն առնչվող խնդիրների վերաբերյալ հանրության շրջանակներում քարոզչության իրականացում: Ներկայումս ՀՀ-ն տնտեսական մրցակցության խթանման առումով, ընդլայնում և զարգացնում է հարաբերությունները միջազգային կազմակերպությունների հետ, ինչը կարևորվում է միջազգային տնտեսական մրցակցության քաղաքականության կիրառման և ռազմավարության

<sup>6</sup> St'u Case C-62/86(1991) ECR I-3359: (1993) 5 CMLR 215  
<sup>7</sup> St'u United Brands, Case 27/64

զարգացման առումով: ՀՀ-ում մրցակցային իրավահավասար գարգացնելու և նրա դերն առավել ամրապնդելու նպատակով, շարունակվում է «Մրցակցային և պետական օժանդակության օրենսդրության կիրարկման հզորացումը Հայաստանում» ԵՄ Տվինգ ծրագրի շրջանակներում:

ՀՀ-ում մրցակցային իրավահարաբերություններին ուղղված հիմնական նորմատիվ իրավական ակտը 2000 թվականին ընդունված «Տնտեսական մրցակցության պաշտպանության» մասին ՀՀ օրենքն է: Նշված օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված են գերիշխող դիրքի չարաչափան դրսևորումները. մասնավորապես, իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված, խտրական գների սահմանումը կամ կիրառումը, օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրումը, այլ տնտեսվարող սուբյեկտի առևտրի կամ արտադրության արդիականացման կամ ներդրումների սահմանափակումը, ի վնաս սպառողի շահերի ապրանքների ներկրման կամ արտադրության չհիմնավորված կրճատումը կամ ապրանքները պահելու, փչացնելու, ոչնչացնելու միջոցով ապրանքային շուկայում պակասորդի ստեղծումը կամ պահպանումը, այլ տնտեսվարող սուբյեկտների կամ սպառողների նկատմամբ խտրական պայմանների կիրառումը, պայմանագրի կողմին, ներառյալ առևտրի օբյեկտներին, լրացուցիչ պարտավորությունների պարտադրումը, որոնք իրենց բնույթով կամ իրականացման տե-

սանկյունից չեն առնչվում պայմանագրի բուն առարկայի հետ, տնտեսվարող սուբյեկտների վերակազմակերպման կամ տնտեսական կապերի խզման պարտադրումը, այլ տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելուն խոչընդոտելու (շուկա մուտք գործելը սահմանափակելու) կամ շուկայից նրան դուրս մղելու գործողությունը կամ վարքագիծը, որի հետևանքով այլ տնտեսվարող սուբյեկտը մուտք չի գործել շուկա կամ դուրս է մղվել շուկայից կամ կատարել է լրացուցիչ ծախսեր՝ շուկայից դուրս չմղվելու համար, այնպիսի պայմանների առաջարկը կամ կիրառումը, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել մրցակցային անհավասար պայմաններ այն դեպքում, երբ համանման պայմաններ չեն առաջարկվել տվյալ ապրանքային շուկայում գործող մյուս տնտեսվարող սուբյեկտներին, իրացման կամ ձեռքբերման գների գեղչերի կամ արտոնությունների սահմանումը, փոփոխումը կամ պահպանումը, եթե դրանք նպատակաուղղված են մրցակցության սահմանափակմանը: Հարկ ենք համարում նշել, որ նույն օրենքի համաձայն սահմանվում է պատասխանատվություն՝ գերիշխող դիրքի չարաչափաների դեպքում<sup>8</sup>: Սույն օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում մրցակցային իրավահարաբերությունների նկատմամբ հսկողություն է իրականացնում տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Պետական հանձնաժողով)<sup>9</sup> և ՀՀ վճռաբեկ դատարանը<sup>10</sup>: Հանձնաժողովը շարունակում է

<sup>8</sup> Տե՛ս «Տնտեսական մրցակցության պաշտպանության» մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդված, 3-րդ մաս:

<sup>9</sup> մասնավորապես, սույն ոլորտում տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի «առաքելություններից» է վերահսկողության իրականացումը տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ, օրենսդրության խախտման դեպքերի քննարկումը և համապատասխան որոշումների ընդունումը, մշակում է օրենսդրության խախտումները կանխող միջոցառումներ, իրականացնում է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության կիրառման փորձը՝ ներկայացնելով առաջարկություններ ոլորտի կարգավորման վերաբերյալ: Հարկ եղած դեպքում իրավասու է նաև դիմել դատարան՝ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպքերի կապակցությամբ և այլ գործառույթներ: Բացի այդ՝ հանձնաժողովի միջազգային համագործակցությունն ուղղված է իր իրավասության շրջանակներում միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարումը, համանման կառույցների հետ փորձի փոխանակում, առաջավոր փորձի ներդրում և այլն:

<sup>10</sup> Վճռաբեկ դատարանը հանդիսանալով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովող բարձրագույն ատյան, մեծ դեր ունի մրցակցային հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի մեկնաբանման հարցում:

իր աշխատանքները երկկողմ և բազմակողմ հարաբերությունների զարգացման ուղղությամբ: Ուստի, կարող ենք փաստել, որ այս համատեքստում, ԵՄ և ՀՀ իրավահամակարգերում մոտարկումն իրականացվել է:

Երբեմն թե՛ մեծածախ, թե՛ մանրածախ շուկայում կարող է գերիշխող լինել միևնույն ձեռնարկությունը՝ միևնույն արտադրանքի համար մի շուկայում առաջարկելով բարձր, իսկ մեկ այլ շուկայում առավել ցածր գին<sup>11</sup>: Այս իրավիճակն առկա է այն դեպքերում, երբ մեկ այլ երկրում գոյություն ունեցող ձեռնարկությունը ուժեղ մրցակցություն է իրականացնում: Նման վարքագծով, փաստորեն, խախտվում են գոյություն ունեցող իրավական պահանջները: Մրցակցության չարաշահման դեպքերի կանխման առավել ուրույն մեխանիզմ մշակվեց, որն էլ հետզհետե առավել կատարելագործվեց հայտնի՝ «Մայքրոսոֆթ» ընկերության գործից հետո, որով, մասնավորապես, սահմանվեց, որ այսուհետև գերիշխող կազմակերպությունները պարտավոր են տեխնիկական տեղեկատվություն տրամադրել հնարավոր մրցակիցներին, մասնավորապես, այն դեպքերում, երբ դա կախված է տեխնիկական գործունեության հետ<sup>12</sup>:

Չենց այս դեպքում կարող ենք խոսել մրցակցության և մտավոր սեփականության միջև պահպանվող հավասարակշռության մասին:

Այսպիսով, վերլուծելով բազմաթիվ միջազգայնագետների կարծիքը, ինչպես նաև ԵՄ դատարանի՝ տարիների ընթացքում ձևավորված նախադեպային իրավունքը, փորձենք ամփոփել մեր դիտարկումը:

Առհասարակ, արտաքին հարաբերությունների ոլորտում, ԵՄ-ն կարևորագույն դեր և նշանակություն ունի: ԵՄ ստեղծման պահից ի վեր, որպես առաջնային նպատակ հանդիսացել է Եվրոպայի ժողովրդների և ազգերի միավորումը: Սակայն, քանի որ ԵՄ-ն ընդլայնվում էր և միաժամանակ մեծ պատասխանատվություն էր վերցրել իր վրա, պետք է որոշեր նաև իր փոխհարաբերու-

թյուններն աշխարհի մնացյալ երկրների հետ: Հաղթահարելով առևտրային խոչընդոտները, զարգացնելով աղքատ շրջանները և բերելով խաղաղ համագործակցություն իր սահմաններում՝ ԵՄ-ն համագործակցում է ոչ միայն իր անդամ պետությունների, այլ նաև՝ երրորդ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ՝ միաժամանակ յուրաքանչյուրին ընձեռնելով առավելություններ բաց շուկայում, փոխկապակցված տնտեսական աճ և կայունություն՝ զարգացնելով միասնական արտաքին և անվտանգության քաղաքականությունը այնպես, որ այն կարողանա գործել որպես կայունության, համագործակցության և փոխըմբռնման ուժ ողջ աշխարհում: Ներկայացվող հոդվածում, անդրադարձ կատարվեց մր-

**«... Գերիշխող դիրքի չարաշահումը հիմնականում արտահայտվում է գները արհեստականորեն բարձրացնելով կամ իջեցնելով...»**

ցակցության հետ կապված խնդիրների ինչպես ԵՄ, այնպես էլ ՀՀ իրավական համակարգում՝ գալով եզրակացության, որ այնուամենայնիվ, ԵՄ ինստիտուցիոնալ համակարգը կարևորագույն լծակ է հանդիսանում ազգային օրենսդրությունների խթանման գործում: Ինչպես ԵՄ, այնպես էլ ՀՀ օրենսդրությամբ բացակայում է գերիշխող դիրք և մենաշնորհի հասկացությունների միջև առկա տարբերությունների հստակ ամրագրումը, ուստի, ելնելով կատարված ուսումնասիրություններից, հարկ ենք համարում նշել, որ գերիշխող դիրք ասելով՝ պետք է հասկանալ տնտեսվարող մի սուբյեկտի առավել հզոր լինելու ունակությունը մյուսի համեմատ, իսկ մենաշնորհ ասելով՝ պետք է հասկանալ տվյալ տնտեսական ոլորտում համապատասխան ձեռնարկության «միակն

<sup>11</sup> Տե՛ս Goyder, “EC competition law”, fourth edition, 2003, chpt. 14

<sup>12</sup> Տե՛ս Microsoft v Commission (Case T-201/04) // European Court Reports. – 2007. – P. II-3601.

ու եզակին» լինելու ունակությունը, մինչդեռ ՀՀ «Տնտեսական մրցակցության մասին» օրենքն ամրագրում է մենաշնորհը՝ որպես ձեռնարկության այնպիսի որակ, որը որպես իրացնող չունի մրցակից: Առաջարկում ենք այս բացը լրացնել և առավել հստակ սահմանազատել այս երկու հասկացությունները:

ՀՀ օրենսդրությամբ առկա ձեռնարկությունների գործունեությունը կարգավորող նորմերը մեծամասամբ համընկնում են ԵՄ իրավական համակարգում առկա դրույթների հետ: Ուստի, հաշվի առնելով ՀՀ մրցակցային ոլորտի զարգացումները, գտնում ենք, որ գրեթե առկա են բոլոր նախադրյալները պնդելու համար, որ հեռու չէ այն ժամանակը, երբ ՀՀ-ն ևս կբախվի ԵՄ մրցակցային իրավունքում առկա խնդիրների հետ, ինչի կապակցությամբ էլ կարևոր նշանակություն կունենա ԵՄ հանձնաժողովի և դատա-

Գոյություն ունի ընդունված տեսակետ, համաձայն որի ձեռնարկության կողմից մեկ անգամ գերիշխող համարվելու դեպքում, բավականին հաճախ նրա վրա կենտրոնանում է ոլորտը կարգավորող մարմինը՝ իրականացնելով համապատասխան ուսումնասիրություններ, որը բացասաբար է անդրադառնում վերջինիս գործունեության վրա, ինչպես ուսումնասիրության ընթացքում, այնպես էլ դրանից հետո, սակայն, մենք համաձայն չենք այս տեսակետի հետ, քանի որ կատարվող ուսումնասիրությունները դժվար թե բացասաբար ազդեն վերջինիս գործարար գործունեության վրա: Ընդակառակը, նմանատիպ ուսումնասիրությունները համապատասխան ձեռնարկությանը հնարավորինս զերծ կպահեն գերիշխող դիրքի ցանկացած չարաշահումից, բավականին դյուրին կլինի այդպիսի վարքագծի դրսևորման բացահայտումն ու շուտափույթ կանխումը:

**«...Գերիշխող դիրքի չարաշահումը բնութագրվում է այնպիսի գործողությունների կատարմամբ, որոնք տարբերվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից բնականոն մրցակցության պայմաններում կատարվող գործողություններից...»**

Մեր խորին համոզմամբ, թե՛ ԵՄ-ում, թե՛ ՀՀ-ում պետք է առավել ազատականացվի ֆրանչայզինգի պայմանագրերի կնքումը և կիրառումը՝ շեշտադրելով ենթաօրինակության պայմանագրերի կնքման վրա, քանի որ ենթաօրինակության պայմանագրով նախատեսված որոշակի արգելքները կամ սահմանա-

կան պրակտիկայի խորը ուսումնասիրությունը և հնարավոր կիրառությունը ՀՀ իրավական համակարգում: Արդյունքը կհանդիսանա առավել կատարյալ օրենսդրության մշակումն ու կիրառությունը: Տնտեսության զարգացումը մեծապես կախված է նաև ձեռնարկությունների ակտիվ գործունեությունից, ուստի նրանց նկատմամբ կիրառվող սահմանափակումները կարող են նույնիսկ բացասաբար անդրադառնալ, քանի որ կարող է դրսևորվել նաև մտավոր սեփականության նկատմամբ սահմանափակման կիրառմամբ: Այստեղ կարևոր նշանակություն է ձեռք բերում գերիշխող դիրքի և մտավոր սեփականության միջև հավասարակշռության մեխանիզմի կիրառման մշակումը: ԵՄ դատարանը և հանձնաժողովը հայտնվում են բավականին դժվարին կացության մեջ, քանի որ որոշ դեպքերում առավել խիստ որոշումը սահմանափակում է տնտեսավարող սուբյեկտի բացառիկ իրավունքների իրականացումը:

փակումները կարող են խոչընդոտել մրցակցության բնականոն ընթացքին: Իհարկե, որպես բացառություն, պետք է դիտարկել անբարեխիղճ օգտագործողի գործողությունը կամ անգործությունը՝ կապված ապրանքային նշանի կեղծման հետ:

ԱՄՆ իրավական համակարգում առկա է «անհրաժեշտ ինֆրակառուցվածք» մոտեցումը՝ համաձայն որի, գերիշխող դիրք ունեցող ձեռնարկությունն օգտվում է մենաշնորհից՝ հաճախ մերժելով նաև որոշակի ծախսերի մատուցումն առավել թույլ ձեռնարկությունների կողմից: Հաճախ ԵՄ դատարանը կոնկրետ գործ քննելիս՝ օգտվում է հենց այս մոտեցումից: Հարկ ենք համարում նշել, որ այս հարցում մենք առավել հակված ենք ԱՄՆ իրավական համակարգին, որտեղ պատասխանատվություն է սահմանվում հենց գերիշխող դիրք զբաղեցնելու համար՝ անկախ այն չարաշահելու հանգամանքից: Բնականաբար, ԵՄ իրավաբանական կարգում սա դրական մոտեցում է, քանզի

անարդար է պատասխանատվություն սահմանելը հավասար մրցակցության պայմաններում գերիշխող դիրքի հասած ձեռնարկությունների նկատմամբ, քանի որ դա կթուլացնի վերջինիս տնտեսական գործունեությունը: Նմանատիպ պայմաններում նորաստեղծ ձեռնարկությունն ակտիվ չի գործի՝ վախենալով ապագայում կիրառվելիք պատասխանատվությունից: Նորմալ պայմաններում բարեխիղճ մրցակցությունը բնականոն երևույթ է և պատասխանատվության սահմանումն անհիմաստ: Բայց ահա ՀՀ պարագայում դա լրիվ արդարացի է, քանի որ, հանդիսանալով փոքր պետություն, այստեղ բավականին հեշտ է գերիշխող դիրք գրավելը: Դա պայմանավորված է նախ այն հանգամանքով, որ գերիշխող ձեռնարկություններն այստեղ բավական քիչ են և հենց այդ պարագայում էլ հեշտ է նախ համարվել գերիշխող և հետզհետե նաև գերիշխող դիրքը չարաշահող: ԵՄ օրինակը ՀՀ-ում ճիշտ կլինի կիրառել միայն այն դեպքում, երբ մեր պետությունը ևս ուրույն մասնակցություն ցուցաբերի գերիշխող ձեռնարկությունների գործունեությանը՝ իրականացնելով ակտիվ հսկողություն նրանց գործունեության նկատմամբ: Բացի այդ, ձեռնարկությանը գերիշխող ճանաչելու համար անհրաժեշտ չափանիշները բացակայում են ՀՀ օրենսդրությունից: Նախ անհրաժեշտ է այդ բացը լրացնել: Հայաստանյան պայմաններում, առավել ճիշտ կլիներ մրցակցության վերաբերյալ կանոնակարգերի մշակումը, ինչը մեր կարծիքով ժամանակի խնդիր է:

ԵՄ մրցակցային իրավահարաբերություններում բացթողում կարելի է համարել հակամրցակցային օրենսդրության կիրառումն այսպես կոչված “umbrella brand”-ի նկատմամբ, ինչն այնպիսի երևույթ է, երբ հայտնի ապրանքանշանի իրավատերն, օգտվելով իր կարգավիճակից, դուրս է գալիս նաև հարևան շուկաները և հետզհետե դուրս մղում այնտեղ առկա նմանատիպ մրցակիցներին, այս բացը լրացնելու համար առաջարկում ենք հակամրցակցային օրենսդրությունը կարգավորող իրավանորմերի կատարելագործումն ու զարգացումը, որոնք նաև թերի են ՀՀ իրավահամակարգում: Այս իրավիճակն, ըստ երևույթին, պայ-

մանավորված է ոչ թե գերիշխող դիրք ունեցող ձեռնարկության կողմից իր կազավիճակի չարաշահման, որքան առավել օրինաչափ միջոցառումների և իրավանորմերի սահմանման հետ: Եվ երկրորդ, ըստ երևույթին, այս իրավիճակն առկա է, քանի որ ԵՄ-ն ոչ միանշանակ մոտեցում է ցուցաբերել ԵՄ մրցակցային ողջ համակարգն ըստ հավուրպատշաճի կոնսոլիդացնելու գործին՝ այն դուրս մղելով իր գլխավոր նպատակների շարքից, ինչն էլ հենց լրացման կարիք ունեցող բաց է: ԵՄ հակամրցակցային քաղաքականության և համապատասխան կարգադրագրերի զգալի զագացման հետ մեկտեղ, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ԵՄ մրցակցային քաղաքականությունը դասվում է այն ոլորտների շարքերը, որտեղ անդամ պետություններն ունեն բավականին մեծ ազդեցություն և ցուցաբերում են մեծ միջամտություն, ինչով էլ պայմանավորված՝ երբեմն ԵՄ համար ստեղծվում է որոշակի դժվարություններ: ԵՄ մրցակցային քաղաքականությունը բավականին դրական է, որպես չարաշահումների կանխման գրավական՝ ուղղված է մի կողմից տնտեսվարող սուբյեկտների շահերի պաշտպանությանը, իսկ մյուս կողմից՝ սպառողների շահերի պաշտպանությանը՝ որդեգրելով այնպիսի քաղաքականություն, որպեսզի կողմերից և ոչ մեկը չտուժի. ԵՄ-ն փորձում է հավասարակշռություն պահպանել, քանի որ ԵՄ համար բոլոր ձեռնարկությունները գտնվում են միևնույն հարթության վրա:

Նշված խնդիրների առավել օպտիմալ լուծումը և՛ ՀՀ-ում, և՛ ԵՄ-ում կարող է ծառայել որպես մեխանիզմ՝ գերիշխող դիրքի չարաշահման կանխարգելման գործում:

Եզրափակելով խնդրո առարկա հարցի դիտարկումը, կարող ենք մշել միայն, թե որքանով ՀՀ-ում քննարկվող ոլորտում իրականացվող բարեփոխումները կապահովեն արտաքին քաղաքականության արդյունավետությունը, պարզ կդառնա միայն ժամանակի ընթացքում: Նոր կառույցներն ու մեխանիզմները կնպաստեն որոշումների առավել օպերատիվ ընդունմանը՝ իրենց հետ բերելով միայն դրական տեղաշարժ ՀՀ իրավական և տնտեսական համակարգերում:

# ՊԵՏԱԿԱՆ ԻՆՔՆԻՇԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԻՇԻՎԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅՈՒ

Արթուր ԻԿԻԼԻԿՅԱՆ  
Հայցորդ

*Պետականության պատմական գծերից մեկն է ինքնիշխանության և ազգի միջև կապը, կամ, այլ կերպ ասած, ազգային գործունը որպես ինքնիշխան պետության կազմավորման սկզբունք: Այդ կապն ունի սոցիալ-տնտեսական խորը արմատներ: Այն պայմանավորված է կապիտալիզմի զարգացման և ժամանակակից ազգերի ձևավորման միջև եղած հարաբերակցությամբ: Հայտնի է, որ ազգերի ձևավորումը տեղի է ունեցել ավատատիրության քայքայման և կապիտալիզմի ձևավորման շրջանում՝ լինելով այդ գործընթացի ուղղակի հետևանքը:*

Ազգային կապերը ծագել են որպես բուրժուական կապեր: Դա, իհարկե, պետք է հասկանալ այն իմաստով, թե մինչև կապիտալիզմի զարգացումը մարդկանց միջև ընդհանրապես չեն եղել այնպիսի կապեր, որոնք պայմանավորված լինեին ընդհանուր ծագման մասին իրական կամ երևակայական պատկերացումներով, խոսակցական բարբառների, մշակութային ավանդույթների աջակցությամբ և այլ նմանատիպ հանգամանքներով: Ավատատիրության դարաշրջանի այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են «Սասնա ծռեր», «Ասք Իգորի գնդի մասին» կամ «Երգ Ռուլանդի մասին» էպոսները, ստրկատիրական պետության այնպիսի հուշարձան, ինչպիսին է **Էսքիլեսի «Պարսիկներ»** ողբերգությունը, ակնբերաբար հակառակն են ասում: Լեզվի և մշակույթի ազգային ընդհանրությունը դատարկ տեղում չի ծագել: Ազգային լեզուներն ու մշակույթները ձևավորվել են այն լեզվական ու մշակութային նյութի հիմքի վրա, որը հասարակությունը կուտակել էր նախորդ դարաշրջաններում, և միայն դրա շնորհիվ են նրանք կարողացել համապատասխան տնտեսական պայմաններ ստեղծվելուց հետո կատարել իրենց հասարակական ու պատմական խնդիրը՝ հանդես գալով որպես ազգային համախմբման գործոններ:

Իր կողմից հաստատվող տնտեսական ընդհանրության շնորհիվ կապիտալիզմը իր

հայտնաբերած էթնիկական հարաբերությունները վերափոխում է ազգային կապերի՝ դրանով իսկ նպաստելով ազգերի որպես լեզվի, տարածքի, տնտեսական կյանքի, ինչպես նաև մշակույթի ընդհանրության ձևով արտահայտվող հոգեկան կերտվածքի ընդհանրության վրա խարսխվող, պատմականորեն կազմավորված կայուն մարդկային հանրությունների ձևավորմանը:

Այդ հանրությունները ձգտում էին վերածվել քաղաքական հանրությունների: Պետությունը ազգերից հին է երկու պատմական ֆորմացիայով: Էթնիկական գործունը կարող էր դեր խաղալ նաև նախակապիտալիստական ֆորմացիաներում, երբ որոշվում էին պետության սահմանները: Այն հասարակությունը, որում սկզբնապես առաջացել է պետությունը, եղել է տոհմը, կամ ժողովուրդը, որը խոսել է միևնույն լեզվով կամ բարբառով: Սակայն միևնույն լեզվով խոսող և իր էթնիկական ընդհանրությունը գիտակցող ժողովուրդը, կախված պայմաններից, երբեմն ստեղծում էր ոչ թե մի ընդհանուր պետություն (ինչպես Եգիպտոսն էր), այլ մի քանի (ինպես հին Իսրայելը) կամ բազմաթիվ մեկուսի պետություններ (ինչպես Հին Հունաստանը): Մյուս կողմից գավթունների շնորհիվ ստեղծվում էին պետություններ, որոնք ներկայացնում էին ամենատարբեր ցեղերի ու ժողովուրդների խառնակույտ (Ասորեստան, Պարսկաստան):

Եվրոպայում ազգային պետությունների



ստեղծման միտումը նկատելի է դառնում արդեն ավատական-դասային միապետությունների շրջանում: Ձևավորվող ազգը, հանձին նրանում տիրապետության հավակնող դասակարգի, պահանջում էր պետական ձևերի ու սահմանների հարմարեցում իր զարգացման պահանջմունքներին: Արշակունյաց Հայաստանը 3-4-րդ դարերում ազգային պետություն էր, Մոսկովյան պետությունը ռուսական ազգային պետություն էր 15-րդ դարում: Նույնը կարելի է ասել Անգլիայի և փոքր-ինչ պակաս չափով Ֆրանսիայի մասին: Նման միտումը էլ ավելի մեծ թափով երևան եկավ ավելի ուշ շրջանում՝ բացարձակ միապետության ժամանակներում, երբ այդ միապետությունն իրացրեց ավելի բարձր աստիճանի ազգային միասնությունը, որն այդ շրջանում ներկայացված էր ոչ միայն բուրժուազիայով, այլև արքունիքի շուրջ համախմբված ազնվականությամբ: Ձևավորվող ազգային լեզուները դուրս են մղում նախկին մեռած գրական լեզուները: 17-րդ դարում Մոսկովյան Ռուսիայում երեց **Ավակունը** գգուշացնում էր. «...չխորշեք խոսակցական լեզվից, քանզի սիրում են մեր բնական ռուսաց լեզուն»: Եվրոպայի մյուս ծայրում Իսպանիայում **Սերվանտեսը** հիշեցնում է, որ «մեծն Յոմերոսը գրել է ոչ լատիներեն, նա հույն էր... բոլոր հին բանաստեղծները գրել են միայն այն լեզվով, որը յուրացրել են մոր կաթի հետ... և եթե դա այդպես է, ապա խելացի կլիներ այդ սովորույթը տարածել բոլոր ազգերի վրա, որպեսզի գերմանացի բանաստեղծները իրենց համար ամոթալի չհամարեին իրենց լեզվով գրելը...»: **Գյոթեի** պոեմի հերոս դոկտոր Ֆաուստը, միջնադարի հոգևոր կապանքներից ձերբազատվող նոր մարդու այդ կերպարը, զբաղված էր հարազատ գերմաներեն լեզվով Սուրբ Գրքի թարգմանությամբ:

Այս լեզվական ու գրական շարժման մեջ նկատվում են մի շարք բնորոշ միտումներ, որոնք այն մերձեցնում են այդ դարաշրջանի քաղաքական շարժմանը: Նրանում ծագում է բոլոր ժողովուրդների մայրենի լեզվի, հարազատ մշակույթի իրավունքի գաղափարը: Շեշտվում է լեզվի ժողովրդայնության, ժողովրդի, խոսակցական լեզվի հետ նրա կապվածության պահանջը: Այդ է ասել մեծն չեխ **Յոսը**, դեռ 15-րդ դարում, իսկ **Լյութերը** պահանջում էր «նայել հասարակ մարդու բերանին», որպեսզի հասկանալ, թե ինչպես

պետք է խոսել գերմաներեն:

Հռչակավոր հունանիստ **Պետեր Ռամուսը** անդում էր, որ «ժողովուրդն է իր լեզվի ինքնիշխան տերը, նա է տնօրինում այն, ինչպես ալոդի, և պարտավոր չէ ճանաչել որևէ տիրոջ»:

Սակայն ժողովրդայնության պահանջը գուցակցվում է մեկ այլ պահանջի հետ ազգային միասնության և, հետևաբար, լեզվի միօրինակացման, համազգային լեզվի որպես ազգային համախմբման գործիքի ստեղծման համար ժողովրդական բարբառների օգտագործման պահանջը:

Ազգային լեզվի ստեղծման գործում զգալի դեր է խաղացել պետությունը, որին անհրաժեշտ էր միասնական պաշտոնական լեզու, որը հասկանալի կլներ լայն շրջաններին: Պատահական չէ, որ հենց կայսերա-

**«... Ազգային լեզուներն ու մշակույթը ձևավորվել են այն լեզվական ու մշակութային հիմքի վրա, որը հասարակությունը կուտակել էր նախորդ դարաշրջաններում...»**

կան գրասենյակի լեզուն դրվեց **Լութերի** կողմից Սուրբ Գրքի գերմաներեն թարգմանության հիմքում, մի թարգմանություն, որը դարձավ ազգային գրական գերմաներենի նորմ: Դեռ 14-րդ դարում Անգլիայի խորհրդարանը որոշում էր ընդունել, որ բոլոր դատաքնությունները պետք է կատարվեն անգլերեն լեզվով, և խարհրդարանում էլ շրջանառության մեջ է դրվում այդ լեզուն: Ֆրանսիայում 1539 թ. **Վիլիե Կտրեի** հրամանագրով **Ֆրանցիսկոս 1-ն** ամբողջ Ֆրանսիայի տարածքում դատավարության և վարչարարության համար սահմանեց բացառապես ֆրանսերենի օգտագործումը:

Արևելյան Եվրոպայում բացարձակապետությունն ստեղծում է բազմազգ պետություններ, որովհետև պաշտպանության նպատակով մեծ, կենտրոնացված պետությունների ստեղծման պահանջմունքը կապիտալիստական զարգացումից առաջ է անցնում:

Արևմտյան Եվրոպան արդեն բացարձակապետության շրջանում կազմավորում է ազգային պետությունների մի համակարգ՝

Իսպանիա, Պորտուգալիա, Ֆրանսիա, Անգլիա, Յոլանդիա: Դրա հետ մեկտեղ Կենտրոնական Եվրասիայում պահպանվում է Գերմանիայի և Իտալիայի ազգային մասնատվածությունը:

Սակայն Արևմտյան Եվրոպայում էլ կալվածատիրական հողատիրության շահերին ծառայող բացարձակապետությունն անկարող եղավ լուծելու բուն իմաստով ազգային պետություն ստեղծելու խնդիրը: Դա կարելի է լուսաբանել այնպիսի դասական բացարձակապետական պետության օրինակով, ինչպիսին Ֆրանսիան է: Թեև Ֆրանսիան իր քաղաքական միավորման գործընթացն ավարտին էր հասցրել դեռ 16-րդ դարում, սակայն ընդհուպ մինչև 1789թ. տարբեր նահագներում պահպանվել էին կառավարման ու իրավունքի որոշ տարբերություններ, անգամ լրիվ ծավալով չէր իրացվել միասնական ազգային լեզվի ստեղծման խնդիրը: Բնութագրական է այն փաստը, որ ինտենդանտները երբեմն արգելում էին համաֆրանսիական լեզվի դասավանդումը գյուղական դպրոցներում, քանի որ ֆրանսերեն գրել ու կարդալ սովորած գյուղացիները հեռանում էին գյուղերից և տեղափոխվում քաղաք՝ արհեստանոցներում, մանուֆակտուրաներում աշխատելու համար, ինչը վնաս էր պատճառում կալվածատերերին: Ազգային միավորման ավարտման խնդիրը բաժին հասավ ֆրանսիական բուրժուական հեղափոխությանը, որի լեզվաքաղաքականությունը պետության բուրժուական կենտրոնացման քաղաքականության մի մասն էր: Այդ քաղաքականությունն իր արտահայտությունն ստացավ **Քարերի** հռչակագրում. «Դաշնայնությունն ու սնապաշտությունը խոսում են գերմաներեն, հակահեղափոխությունը խոսում է իտալերեն, մոլեռանդությունը խոսում է բասկերեն: Ջարդուփշուր անենք վնասի ու մոլորության այդ գործիքները: Միապետությունը հիմքեր ուներ նմանվելու բարելոնյան աշտարակին, իսկ ժողովրդավարության պայմաններում թողնել, որ քաղաքացիները չտիրապետեն ազգային լեզվին, ունակ չլինեն վերահսկելու իշխանությանը, կնշանա-

կի դավաճանել հայրենիքին: Ազատ ժողովրդի դեպքում լեզուն պետք է բոլորի համար նույնը լինի»<sup>1</sup>: Այստեղ մի առանձնակի հստակությամբ ի հայտ է գալիս, մի կողմից, ազգային լեզվաքաղաքականության ու ազգային պետության պահանջների և, մյուս կողմից, ժողովրդավարության ու ժողովրդական ինքնիշխանության գաղափարների միջև կապը:

Կենտրոնական Եվրոպայում անգամ քաղաքական միավորումը, տեղի ունեցավ արդեն 19-րդ դարի բուրժուական հեղափոխության ընթացքում:

Ազգը մարմնավորվում է պետական ձևերի մեջ, պետությունը դառնում է ազգային, դա է բուրժուական դեմոկրատական պետությունների կազմավորման առանձնահատկություններից մեկը:

Ըստ **Յերցի**, ազգը «ընդհանրության կամք է»<sup>2</sup>, իսկ **Ռեդսլոբը** սահմանում է, որ ազգը «ընդհանուր ոգու գիտակցություն է, մի զգացմունք, որը առաջ է բերում քաղաքական միավորման կամք»<sup>3</sup>: Այս սահմանումներն ի վիճակի չեն բացահայտելու, թե ինչու է ազգային ընդհանրությունը հիմք դառնում քաղաքական ընդհանրության, պետության ստեղծման համար:

Պետությունը ազգային հիմունքներով կառուցելու անհրաժեշտությունն իր արտահայտությունն է ստացել 19-րդ դարում, որը ձևակերպել ու հիմնավորել են **Մանչինին**, **Ռենանը**, **Գրադոսկին** և ուրիշներ: Ազգության սկզբունքը, որին հաճախ հաղորդվում է ազգերի ինքնորոշման պահանջի բնույթ, իր բովանդակությամբ ու նշանակությամբ կտրուկ տարբերվում է ազգերի ինքնորոշման իրավունքի հանրաճանաչ սկզբունքից: Ազգության սկզբունքը ձևակերպվում է որպես ցանկացած հանգամանքներում միաազգ պետության նպատակահարմարության վերաբերյալ մի վերացական դոգմ: «Մեկ ժողովուրդ՝ մեկ պետություն» սկզբունքը հռչակվում է հավերժական ճշմարտություն: Հատկանշական է, որ **Մանչինին** ազգության սկզբունքը մեկնաբանում է անձի անօտարելի և անկապտելի իրավունքների մասին ուսմունքի նմանությամբ՝ ազ-

<sup>1</sup> Տե՛ս Johennet. Le principe des nationalities. 1929.

<sup>2</sup> Տե՛ս Nation u. Nationalitat. Karlsruhe, 1927.

<sup>3</sup> Տե՛ս Redslob. Le principe des nationalites, 1930.

գությունը դիտելով որպես մի յուրատիպ անձնավորություն: Ազգության սկզբունքը ազգի հավերժական, անօտարելի և անկապտելի իրավունքն է:

Բուրժուաժողովրդավարական հեղափոխությունների շրջանում ազգության սկզբունքն ուղղված էր ընդդեմ պետական սահմանների, որոնք բացարձակապետության կողմից հաստատվել էին համաձայն օրինականության սկզբունքների (ավատադինաստիական շահերի արտահայտում) կամ հավասարակշռության սկզբունքի (այսպես կոչված պետական շահի արտահայտում) և այլն: Դա ավատաբացարձակապետական պետականությունը բուրժուականի փոխակերպվելու, ավատատիրական պետությունից բուրժուականի անցնելու գործընթացի բաղադրյալ գործոնն էր ժողովրդական ինքնիշխանության սկզբունքի հետ հարաբերակցվելով որպես նրանից ուղղակի արտածում:

Այդ սկզբունքը նույնպիսի նշանակություն է ունեցել նաև 19-րդ դարի սկզբից մինչև 20-րդ դարի սկիզբը Կենտրոնական Եվրոպայում տեղի ունեցած բուրժուական պատերազմների ու հեղափոխությունների շրջանում, թուրքիայի լծից ազատվելու համար բալկանյան ժողովուրդների վարած պատերազմների ու շարժումների շրջանում, ինչպես նաև «Ասիայի գարթոնքը» նշանավորող արևելյան հեղափոխություններում, որոնք տեղի էին ունենում 20-րդ դարի սկզբում:

Արդի դարաշրջանում ազգության սկզբունքը, որը ձևակերպված է որպես ազգային-ազատագրական շարժումների կողմից առաջ քաշվող ազգային ինքնորոշման սկզբունք, օբյեկտիվորեն ուղղված է իմպերիալիստական բազմազգ պետության դեմ, որին հակադրում է ազգային պետությունների ստեղծման պահանջը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում «նոր կարգերի» ու «եվրոպական» տարածության հիստերիայան գաղափարախոսները, որոնց գլխավորում էր Զիտլերն ինքը, պնդում էին, թե «փոքր պետությունների դարձնում են ազգային պետությունները, որոնք հիմնականում վերջին տարիներին ելնում էր հիմնականում ազգային պետության հայեցակարգից, մի պետություն, որը հիմնվում է ազգային սկզբունքի վրա, որի սահմանները համընկնում են ազգային սահմանների հետ: Սակայն այն պահանջը, որ յուրաքանչյուր ժողովուրդ ունենա իր անկախ պետությունը, արդեն չի համապատասխանում եվրոպական տարածությունը

**«... Ազգը միավորվում է պետական ձևերի մեջ, պետությունը դառնում է ազգային, դա է բուրժուական դեմոկրատական պետությունների կազմավորման առանձնահատկություններից մեկը...»**

մի խոշոր տարածական կազմավորման վերածելու անհրաժեշտությանը, մի այնպիսի կազմավորման, որտեղ առաջատար ազգերին պետք է պատկանա այլ տեղ, քան այդ տարածական կարգում ներառված փոքր ժողովուրդներին: Եկել է այն պահը, երբ պետք է կրկին մեծացվի պետական ձևի ինքնուրույն նշանակությունը առաջատար ազգի ազգային միջուկի սահմաններից դուրս եկող իշխանության համալիրի կառուցման համար»<sup>4</sup>: Հատկանշական է, որ հենց այդ ժամանակ ավստրիական սոցիալ-ժողովրդավար **Պուլակը**, գտնվելով վտարանդիության մեջ, գրել է. «փոքր պետությունների ժամանակներն անցել են, քանի որ նրանց տնտեսական անկախությունը բացարձակապես անհնար է դարձել, և նրանց քաղաքական ինքնիշխանության վերականգնումը կնշանակեր պատմության մեջ մեկ քայլ հետ կատարել»<sup>5</sup>:

Որոշ գաղափարախոսներ ապացուցում էին, թե ազգային պետությունները դատապարտված են արդեն իսկ այն տնտեսական

<sup>4</sup> Zeitschrift fur die gesamme Staatswissenschaft, 1941. B. 101. H. 2, էջ. 264

<sup>5</sup> Новое время. 1947. N 42. с. 8.

օրենքի հատկանքով, որով կանխորոշվում է մեծ ձեռնարկության հետ փոքր ձեռնարկության մրցակցության անհնարինությունը<sup>6</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Եվրոպայում ու Ասիայում ստեղծվեցին նոր ազգային պետություններ: Դա ազգային ազատագրման այն ուղու մի փուլն էր, որն անցան սլավոնական ժողովուրդները գերմանական լծից, արաբ ժողովուրդը Թուրքիայի լծից ազատվելու համար և այլն: Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքը եղավ ազգային սկզբունքի կենսունակության նոր հզոր հաստատումը, որն արտահայտվեց հիտլերյան Գերմանիայի, ճապոնական իմպերիալիզմի և իտալական ֆաշիզմի կողմից ստրկացված ժողովուրդների (Ալբանիա, Յաբեշտան) անկախության վերականգնման, ազգային լեհական պետության ստեղծման, ազգային սկզբունքին Ուկրաինայի և Բելոռուսի արեմտյան սահմանների համապատասխանեցման, պետությունների ազգային կազմի ավելի մեծ համասեռության ապահովման նպատակով ձեռնարկված մի շարք միջոցառումների իրականացման և այլ ձևերով: Պատերազմից հետո հզոր ազգային-ազատագրական շարժում ծավալվեց գաղութային երկրներում: Այդ շարժումը, հանգեցրեց ազգային պետականության հիմքերի ստեղծմանը Ինդոնեզիայում, Յնդոնիայում, Յնդոնիայում, Բիրմայում, Ֆիլիպիններում, Պաղեստինում, ազգային անկախության տարրերի աճմանը Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում: ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն խնամակալության վարչակարգը, որպես իր վերջնական նպատակներից մեկը, նախատեսում է խնամարկյալ պետությունների անկախությունը:

Դարեր շարունակ, ընդհուպ մինչև ներկայիս օրերը, ազգային շարժումները, որոնք ընթանում էին հանուն ինքնորոշման մղվող պայքարի կարգախոսով, առաջադիմական դեր էին խաղում սկզբում ավատատիրական բացարձակապետության դեմ մղված պայքարում, ապա իմպերիալիզմի ինչպես ավազակաբարո գերմանական ծավալապաշտության, այնպես էլ հետպատերազմյան շրջանում հետադիմության ու ծավալապաշտության դեմ: Այդ պայքարն իր արտահայտությունն էր ստանում ինքնիշ-

խանության սկզբունքի հետ այդ ազգային շարժումների սերտ կապի միջոցով:

Ազգության սկզբունքի երեան գալու հետ ինքնիշխանությունը ձեռք է բերում ևս մեկ գործոն՝ ազգայինը: Դասակարգի տիրապետությունն արտահայտվում է ոչ միայն պետական ինքնիշխանության, ձևական «ժողովրդական ինքնիշխանության», այլև ազգային ինքնիշխանության ձևով:

Պետության լիիշխանությունը, անկախությունը, միասնականությունը, ժողովրդական ներկայացուցչության հաստատությունները, այդ ամենը արտահայտում են նաև ազգային ընդհանրությունը, ազգային զարգացման և քաղաքական ինքնիշխանությունը կրող դասակարգի հովանու ներքո տեղի ունեցող ազգային համախմբման շահերը:

Այժմ ինքնիշխանության միջոցով իրենց իրավաբանական արտահայտումն ու իրավական պաշտպանությունն են ստանում ազգը, ազգային զարգացման ազատությունը, ազգային անկախությունը:

Ազգային գործոնը որոշակի դեր է խաղացել նաև բացարձակապետական ինքնիշխանության ձևավորման գործում, բացարձակ միապետությունը լուծեց մեծ ազգերի քաղաքական միավորման ու նրանց անկախության հաստատման խնդիրը: Սակայն այդ ինքնիշխանության իրավաբանական ձևը բավականին անհամապատասխան կերպով էր արտահայտում ազգային գործոնը, և հաճախ նույնիսկ նրանց միջև ծագում էին սուր հակասություններ, դինաստիական շահը հետին պլան էր մղում ազգային շահը:

Արդյունաբերական կապիտալիզմի դարաշրջանի բուրժուական պետությունների կողմից ստեղծված նոր իրավաբանական ձևերը, արտահայտելով բուրժուազիայի դասակարգային տիրապետությունը, միևնույն ժամանակ նաև ավելի համապատասխան ձևով էին արտահայտում ազգային գործոնը: Այդ շրջանում բուրժուական պետությունը կազմավորվել էր որպես ոչ թե դինաստիական, այլ ազգային պետություն: Ինքնիշխանության սկզբունքն ավելի խոր ու ավելի հաստատուն հիմք էր ստանում հանձին ազգի որպես բուրժուական հասարակության համար ավելի օրինաչափ ձևի

<sup>6</sup> Moffat. Nationalism and economic theory // Souraal of Political Economy. August, 1928

հանրության, որը համապատասխանում էր հասարակության զարգացման ու պատմական առաջընթացի շահերին: Եթե բացարձակապետության պայմաններում ինքնիշխանության սկզբունքն ուղղված էր կայսեր, Պապի և խոշոր ավատատերերի հավակնությունների դեմ, ապա նրան փոխարինման եկած բուրժուական հասարակության պայմաններում ինքնիշխանության, որպես ազգի ինքնիշխանության, սկզբունքն ստանում է նոր ուղղվածություն: Բուրժուական հեղափոխությունների ու պատերազմների ժամանակաշրջանում այն առաջ էր քաշվում ընդդեմ ավատաբացարձակապետական դինաստիական պետության, որը հավերժացրել էր, մի կողմից, ազգերի մասնատումը (Գերմանիա, Իտալիա) և, մյուս կողմից, բազմացրել պետական կազմավորումները (Ավստրո-Յունգարիա): Իմպերիալիզմի դարաշրջանում այդ սկզբունքն ուղղված էր իմպերիալիստական բազմազգ պետությունների, գաղութային ճնշման համակարգի դեմ և միավորվում էր ժողովրդավարության ու առաջադիմության համաշխարհային ուժերի հետ: Ազգային գործոնը նոր կենսական ուժ էր տալիս ինքնիշխանության սկզբունքին, այն կապելով նոր ժամանակի կարևորագույն ու առաջադիմական միտումներից մեկի՝ ժողովուրդների ազգային ինքնորոշման միտման հետ:

Իսկ ինչպե՞ս են հարաբերակցվում ազգի ինքնորոշման իրավունքը և ինքնիշխանությունը: Միսլ կլիներ պարզապես նույնացնել այդ հասկացությունները: Ինքնիշխանությունը պետության իրավաբանորեն իրացված անկախությունն է, իսկ ինքնորոշման իրավունքը կարելի է պատկերացնել նաև որպես ո՛չ իրավաբանորեն, ո՛չ էլ փաստացի ձևով դեռ չիրացված իրավունք:

Ինքնորոշման իրավունքը ծագել է որպես իրավաբանական իմաստով «իրավունք», միջազգային իրավունքում այն դարձել է ազգերի՝ որպես իրավաբանական իմաստով համընդհանուր ճանաչում ստացած սուբյեկտիվ իրավունք: Արդի միջազգային իրավունքն ընդունում է, որ արդեն գոյություն ունեցող պետությունն ունի ինքնորոշման իրավունք, և այդ իմաստով (քանի որ խոսքը վերաբերում է ազգային պետության իրավունքին) այն իրոք համընկնում է ինքնիշխանության հետ, քանի որ այս դեպքում ինքնորոշման իրավունքն արդեն իրացված է: Գործող միջազգային իրավունք-

ընդունում է, որ կարող է իր պետությունը կազմավորելու իրավաբանական իրավունք ունենալ այնպիսի ժողովուրդ, որը չունի պետություն:

Իսկ ո՞րն է ազգի ինքնորոշման իրավունքի էությունը: Այն բավականաչափ բարդ է: **Նախ**, դա բարոյաբաղաբական պահանջ է, այսինքն ժամանակակից հասարակության կյանքի ու զարգացման օբյեկտիվ իրավիճակով պայմանավորված նորմ: Այդ պահանջն արտացոլում է որոշակի պատմական փաստը, այն է՝ առանձնահատուկ, կայուն մարդկային հանրությունների ամուր տնտեսական, տարածքային, լեզվական ու մշակութաօգբանական կապերով բնութագրվող ազգային ընդհանրությունների ձևավորման ռեալ փաստը: **Եվ հետո**, մարդկային հասարակության զարգացման պահանջումների բերումով այդ հանրությունները պետք է դառնան քաղաքական հանրույթներ: Այդ ազգային հանրության ներսում ձևավորվում է նրա անդամների հզոր կոլեկտիվ կամքը ուղղված ինքնուրույն քաղաքական հանրույթի կամ, ընդհանուր ձևով ասած, այն բանին, որ իրենց պետական պատկանելության հարցը իրենք լուծեն: Այդ կամքն արմատավորված է ազգային հանրության բուն էության մեջ: Ազգային ընդհանրությունը ներառում է հասարակական կյանքի կարևորագույն կողմերը՝ տնտեսությունը, մշակույթը, լեզուն, աշխարհագրական միջավայրը: Դա մշակում է, որ էական հասարակական և անձնական արժեքներն ու բարիքները՝ մայրենի լեզուն, հայրենի մշակույթը, տնտեսական կապերը, միջավայրը, անգամ հարազատ բնական պատկերները, ունեն ազգային երանգավորում: Ամեն մի ազգ, միևնույն է մեծ թե փոքր, ունի իր որակական առանձնահատկությունները, իր յուրահատկությունը, որը պատկանում է միայն իրեն, և որը չունի ոչ մի այլ ազգ: Այդ առանձնահատկությունները այն ներդրումն են, որ յուրաքանչյուր ազգ կատարում է համաշխարհային մշակույթի ընդհանուր գանձարանում և լրացնում, հարստացնում է այն:

Ազգերի ինքնորոշման իրավունքը ներառում է ոչ միայն անջատվելու և ինքնուրույն ինքնիշխան պետություն ստեղծելու իրավունքը, այլև ընդհանուր համաձայնությամբ այլ ազգությունների հետ միավորվելու իրավունքը:

# ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՋՄԱՆ ԳԼՈՔԱԼԱՋՄԱՆ ՓՈԽՈՒՄ

Ալֆրեդ ՍԱԴՈՅԱՆ  
Ասպիրանտ

*Իրավունքի ինստիտուտների և ճյուղերի մեջ ներառված իրավական նորմերը, ինչպես նաև դրանց աղբյուրների (ձևերի) և առաջին հերթին նորմատիվ-իրավական ակտերի ամբողջությունը կազմում են իրավունքի այսպես կոչված նորմատիվային բաղադրիչը: Իրավական համակարգում այդ բաղադրիչը գրավում է առաջին տեղերից մեկը: Իրավունքն ու դրա ձևը օրենսդրությունը կարևոր տեղ են զբաղեցնում իրավական համակարգում, ապահովելով նրա բոլոր տարրերի իրավագիտակցության ու իրավական կուլտուրայի, իրավաստեղծության, իրավական հաստատությունների, իրավակիրառման և այլնի համաձայնեցված փոխգործակցությունը<sup>1</sup>:*

Իրավական համակարգի նորմատիվային բաղադրիչը՝ հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման մեխանիզմի առաջնային օղակն է և այդ իսկ պատճառով առաջիններից մեկն, որ աշխարհում կատարվող գործընթացների շնորհիվ փոփոխություններ է կրում:

20-րդ դարի երկրորդ կեսից սկսած համաշխարհային զարգացման գերիշխող միտում է դարձել գլոբալացումը: Այդ ժամանակաշրջանն աչքի է ընկնում մարդկության անվիճելի ձեռքբերումներով գիտատեխնիկական, արտադրական և սոցիալական ոլորտներում: Արագ զարգացող, դինամիկ և ագրեսիվ տեխնածին քաղաքակրթությունը իր ինտենսիվ տնտեսական աճով, բարոյական զարգացման և տեխնոլոգիական առաջընթացի մակարդակների միջև խորացող ճեղքվածքով բնորոշվում է նաև «մարդ-հասարակություն» համակարգում հա-

կասությունների աննախադեպ սրմամբ: Երբեմն քառսային ընթացք ունեցող գլոբալացման տեմպերի արագացումը ի հայտ բերեց այդ գործընթացի նաև բացասական կողմերը: Մարդկանց փոխկապակցության ամրապնդումը, անկայուն աշխարհի պայմաններում, մարդկանց գոյությունը դարձրեց էլ ավելի փխրուն ու խոցելի:

Այս պայմաններում միջազգային հանրության առջև խնդիր է ծառայել կառուցել նոր աշխարհակարգ, որն ունակ կլինի էպես բարձրացնել գլոբալացման պայմաններում միջազգային համակարգի կառավարելիությունը: Ժամանակակից աշխարհի հենց օպտիմալ կազմակերպումից է կախված լինելու մարդկության գոյությունը, նշվում է գլոբալացման վերաբերյալ գրականության մեջ: Հանրությանն անհրաժեշտ է սոցիալական գործընթացների կառավարման ավելի բարձր որակ՝ ինչպես

<sup>1</sup> Տե՛ս Зорькин В.Д. Право в условиях глобальных перемен. М., 2013, с. 92-93:

ազգային, այնպես էլ գլոբալ մակարդակներով<sup>2</sup>:

Հասարակական համակարգի կազմակերպման մակարդակին, նրա կառավարման աստիճանի բարձրացմանը, քաղաքակրթության բուն գոյությանն սպառնացող հիմնահարցերի ու հակասությունների լուծման գործում մեծանում ու կարևորվում է իրավունքի դերը: Հասարակության և ողջ մարդկության կյանքում իրավունքի դերի մեծացման, հասարակության կենսագործունեության կայունացման ապահովումը 20 և 21-րդ դարերում դարձել է սոցիալական այդ երևույթի զարգացման հիմնական միտումներից մեկը:

Ժամանակակից պայմաններում իրավունքի՝ կարգավորիչ այդ ամենահզոր համակարգի առջև ծառայել է ևս մեկ կարևոր խնդիր՝ գլոբալացման գործընթացների կառավարման, դրանց ներդաշնակեցման խնդիրը: Իրավունքը հանդես է գալիս որպես գլոբալացման գործիք և, միաժամանակ, որպես դրա գործընթացների կառավարման միջոց:

Նշված հանգամանքները ենթադրում են ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավունքի խոր փոփոխություններ՝ ներառյալ դրանց փոխգործակցության ոլորտը:

Իրավունքի զարգացման օբյեկտիվ օրինաչափություններից մեկն է՝ միջազգային և ներպետական իրավունքի փոխգործակցության խորացումը, որն արտացոլում է մեկ այլ ընդհանուր օրինաչափություն՝ փոխգործակցության խորացումը ազգային հասարակության և միջազգային հանրության միջև: Միջազգային և ներազգային իրավունքի խորացումը պայմանավորում է այս վերջինի այսպես կոչված միջազգայնացումը կամ հոմոգենիզացիան,

ինչն իրենից ներկայացնում է 21-րդ դարում այդ իրավունքի զարգացման հիմնական միտումներից մեկը<sup>3</sup>: Իրավունքի միջազգայնացման տակ հասկանում են իրավունքի սկզբունքների և ազգային օրենսդրությունների մերձեցում, իրավական տարբեր համակարգերի փոխներազդեցության խորացում: Տնտեսական ու սոցիալական նոր պայմաններում տարբեր պետությունների իրավական համակարգերը պետք է լինեն համատեղելի և համագործակցեն մեկը մյուսի հետ: Դա **առաջին հերթին** հնարավոր է դառնում ներպետական իրավունքի հանդեպ միջազգային իրավունքի գերակայության ճանաչման և, **երկրորդ**՝ միջազգային իրավունքի ներգործությամբ՝ ներպետական իրավունքի ինտենսիվ փոփոխման շնորհիվ:

Ազգային իրավունքի միջազգայնացումը, մասնավորապես, ենթադրում է դրա նորմերի համապատասխանեցում միջազգային իրավական ստանդարտներին: «**Միջազգային իրավական ստանդարտ**» հասկացությունը առաջ է եկել նախորդ դարի կեսերին և ամրապնդվել է իրավաբանական տերմինաբանության մեջ: Իրավունքի ստանդարտացումը հանդիսանում է ժամանակակից հասարակական կյանքի ստանդարտացման իրավաբանական արտացոլումը: Դա ինդուստրիալ քաղաքակրթության ամենաաչքի ընկնող երևույթներից մեկն է, ուսումնասիրված ամերիկացի նշանավոր փիլիսոփա և ֆուտուրոլոգ **Օ.Տոֆֆլերի** կողմից<sup>4</sup>: Ստանդարտացումն ընդգրկել է մարդկանց կյանքի բոլոր բնագավառները, տնտեսական ոլորտում այն դրսևորվել է որպես արտադրության և սպառման ստանդարտացում, սոցիալական ոլորտում՝ որպես այսպես կոչված զանգվածային մշակույթի ձևավորում:

<sup>2</sup> Лукашук И. И. Глобальная ответственность государств и правовая система России в условиях глобализации: Сб. материалов “круглого стола” ИГП РАН. М., 2005, с. 16; Кильюнен К. Управление глобальными процессами // Глобализация. Контурь; XXI века: Рефер. Сб. М., 2004. Ч. 1, с.173.

<sup>3</sup> Лукашук И. И. Взаимодействие международного и внутригосударственного права в условиях глобализации // Журнал российского права. 2002, N 3, с. 115.

<sup>4</sup> Тоффлер О. Третья волна. М., 2002; Toffler A. Future Shock. N.Y., 1970.

**Իրավական ստանդարտացումը դրսևորվում է որպես այս կամ այն հասարակական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ միջազգային կազմակերպությունների շրջանակներում, ինչպես նաև պետական մասշտաբով նվազագույն նորմերի և պահանջների սահմանում:** Իրավական ստանդարտներն ընդգրկում են իրավական կարգավորման ամենատարբեր ոլորտները: Առաջին հերթին դրանք անձի իրավունքների և ազատությունների միջազգային իրավական չափանիշներն են: Խոսվում է նաև արդարադատության իրականացման, ձեռնբերության, ֆինանսական (օրինակ, ֆինանսային հաշվետվության միջազգային ստանդարտների) և այլ ոլորտներում միջազգային ստանդարտների մասին:

Միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների ազդեցության տակ արմատապես վերափոխվել է մարդու իրավունքներին վերաբերվող, ինչպես նաև քաղաքացիական, քրեական, վարչական օրենսդրությունները, ինչպես նաև դատավարական և դատարանակազմության մասին ազգային օրենսդրությունները: Եվրոպայի Խորհրդի, Եվրոպական դատարանի կողմից մի ամբողջ շարք օրինագծերի փորձաքննությունները հաստատեցին դրանց համապատասխանությունը մարդու իրավունքների վերաբերյալ եվրոպական ստանդարտներին:

Ներպետական և միջազգային իրավունքի աճող և խորացող փոխգործակցությունը պայմանավորում ու պահանջում է ազգային օրենսդրության ներդաշնակեցում Մաքսային Միության և Եվրոպայի պետությունների օրենսդրություններին:

ԱՊՀ և Մաքսային Միության երկրների օրենսդրությունների նախևառաջ տնտեսական ու ձեռներեցական մերձեցման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ դրանք գտնվում են ընդհանուր

տնտեսական տարածքում և ունեն ավանդական պատմական, սոցիալական, մշակութային, տնտեսական կապեր: Այդ նպատակին հասնելու համար որպես ամենաօպտիմալ ճանապարհ կարող է դիտվել կողմնորոշումը դեպի Եվրոպական հանրության ձևավորած կամ ձևավորվող իրավական ստանդարտները<sup>5</sup>: ԱՊՀ-ի և Եվրոպայի պետությունների միասնական իրավական տարածքի ստեղծման անհրաժեշտությունը ճանաչվել է 2003 թվականի հունվարի 22-24-ին Մոսկվայում տեղի ունեցած «21-րդ դար. գլոբալացում, պետություն, իրավունք» միջազգային իրավական ֆորումի կողմից<sup>6</sup>: Դա հանդիսանում է նաև Հայաստանի Հանրապետության և ԱՊՀ-ի երկրների օրենսդրությունների զարգացման հայեցակարգային հենքը առաջիկա տարիների համար:

Հասարակական գործընթացների կառավարման բնագավառում իրավունքի դերի աճը դրսևորվում է նաև իրավական կարգավորման ընդլայնման և խորացման տեսքով: Այդ միտումը, պայմանավորված իրավական կարգավորման առարկայի բարդացմամբ, բնորոշ է ինչպես Հայաստանին, այնպես էլ ողջ աշխարհին: Իրավական կարգավորման ոլորտի ընդլայնումը պայմանավորված է ինչպես այն բանով, որ իրավունքի գործողությունը տարածվեց սոցիալական իրականության միանգամայն նոր, վերջերս ձևավորված միջավայրում այնպես էլ դրա տարածմամբ օրենսդրի տեսադաշտից դուրս գտնվող ոլորտների վրա: Առաջացել են իրավունքի և օրենսդրության նոր միջավայրեր, ճյուղեր, ինստիտուտներ, ինչպիսիք են ինֆորմացիոն օրենսդրությունը, շրջակա միջավայրի, գիտության, տեխնիկայի մասին օրենսդրությունը, էներգետիկայի մասին օրենսդրությունը, բժշկական իրավունքը և այլն:

Նշված միտումը զգալի չափով պայմանավորող գործոն է հանդիսանում ողջ քաղաքակրթության գիտատեխնիկական և

<sup>5</sup> **Захаров А.,** Кутафин О. Концепция единого правового пространства Европы, ЕврАзЭС и СНГ // Право и экономика. 2003, N 3, с. 8.

<sup>6</sup> Резолюция Московского юридического форума «Глобализация, государство, право XXI века» // Право и экономика. 2003, N 3, с. 8.



մտավոր զարգացումը: Բացի իրավական կանոնակարգման ընդլայնումից, գիտատեխնիկական առաջընթացը հանգեցնում է ավանդական իրավական ինստիտուտների էվոլյուցիոն զարգացմանը: Մասնավորապես, գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում կարևոր փոփոխություններ է ապրում սեփականության իրավունքի օբյեկտների որակական և քանակական փոփոխման տեսքով: Այսպես, մտավոր սեփականության (գրական, գեղարվեստական, արտադրական) օբյեկտների ի հայտ գալու հետ մեկտեղ, էականորեն ընդլայնվեց ոչ նյութական ունեցվածքի ծավալը: Ձևագան էներգակիրների հաշվին մեծացավ նաև «նյութեղեն» ունեցվածքի վերաբերյալ սեփականության իրավունքի օբյեկտների ցանկը:

Ժամանակակից պետության իրավունքը իր նորմերի համակարգում պետք է հաշվի առնի գիտատեխնիկական հեղափոխության ազդեցությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտների՝ նյութական արտադրության, սոցիալական, քաղաքական հարաբերությունների, հոգևոր բնագավառների վրա: Այս կապակցությամբ գիտատեխնիկական առաջընթացի կառավարման գործում իրավունքի դերը պետք է փոխվի: Շեշտերն այսօր պետք է դնել իրավունքի պահպանիչ գործառույթի և գիտատեխնիկական առաջընթացի վնասակար հետևանքների սահմանափակման կամ այդ առաջընթացի ձեռքբերումների օգտագործման արգելմանն ուղղված իրավունքի պահպանիչ ենթահամակարգի վրա: Դա հատկապես վերաբերվում է ռազմական տեխնոլոգիաներին, ատոմային էներգետիկային, գենետիկական հետազոտություններին, բժշկական կենսաբանությանը, գիտատեխնիկական հեղափոխության սոցիալական հետևանքներին: Օրենսդրությունը պետք է խիստ պետական վերահսկողություն սահմանի սոցիալական կյանքի այն ոլորտների ու գործընթացների նկատ-

մամբ, որոնց ոչ բնականոն գործունեությունը կարող է վտանգ ներկայացնել մարդկանց մեծ խմբերի համար: Ներպետական օրենսդրությունը, այս առումով, ակնհայտորեն հետ է մնում ժամանակի պահանջներից:

**Ս. Վ. Պոլենինայի** կարծիքով, իրավական կարգավորման ոլորտի ընդլայնման հետ մեկտեղ գործում է նաև մեկ այլ միտում՝ իրավաբանական կանոնակարգման կրճատում. հասարակական որոշ հարաբերությունների իրավական կարգավորման փոխարինում կարգավորման այլ, ոչ իրավական ձևերով<sup>7</sup>: Այս պնդումը արդարացի է, բայց՝ միայն իրավական կարգավորման առանձին ոլորտների համար, իսկ ընդհանուր առմամբ իրավունքի համար ժամանակակից պայմաններում բնորոշ է իրավական կարգավորման ընդլայնման միտումը, պայմանավորված մարդկային գործունեության տարածքի ընդլայնմամբ և իրավական կարգավորման բուն առարկայի բարդացմամբ:

Իրավական կարգավորման ոլորտի ընդլայնումը ուղեկցվում է նաև մեկ այլ միտումով, հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման խորացմամբ և դրանց համակողմանի կանոնակարգմամբ: Դեռ 20-րդ դարի երկրորդ կեսին խորհրդային իրավագետները ուշադրություն դարձրեցին իրավական կարգավորման այս ուղղության վրա<sup>8</sup>: Իսկ այսօր, ինչպես նշում է **Ա. Խ. Պիգոլկինը**, ժամանակակից օրենսդրության զարգացման մայրուղին հենց իրավական կարգավորման խորացումն է<sup>9</sup>: Օրենսդրությունը դառնում է ավելի կոնկրետ, հստակ և մանրամասն: Հասարակական հարաբերությունների, իրավական կարգավորման ընդլայնումն ու խորացումը հանգեցրեց ազգային օրենսդրության բոլոր մակարդակներում՝ հանրապետական ու մունիցիպալ, նորմատիվ-իրավական ակտերի քանակի էական աճի:

<sup>7</sup> **Поленина С. В.** Теоретические проблемы системы советского законодательства. М., 1979, с. 141.

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Систематизация законодательства в Российской Федерации / Под ред. **А. С. Пиголкина.**

# ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ԱՃԻ ՍՈՒՐԱԴՅԱՆ

ՀՀ Նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարզևների, և կոչումների վարչության առաջատար մասնագետ

*Ժամանակակից Սահմանադրությունների ձևավորումն ուղեկցվել է երկարատև պատմական զարգացման փուլերով: Այդ զարգացումների կանոնակարգման ձևաչափը հետազոտող Յու. Յուդի-նը, առանձնացնում է չորս հիմնական փուլեր, որոնցից առաջինը կապվում է բուրժուական հասարակության ձևավորման հետ, երկրորդը տոտալիտար հասարակարգի, երրորդը կապվում է Եվրոպական, Ամերիկյան պետություններում գաղութատիրական կարգերի վերացման և նոր պետությունների ձևավորման հետ, և վերջապես չորրորդը՝ պայմանավորված է ժողովրդավարական հասարակարգերի ստեղծմամբ:՝ Պատմության մեջ առաջին Սահմանադրությունների ձևավորումը հաճախ կապվում է բուրժուական հեղափոխությունից հետո ձևավորված բրիտանական գաղութների հետ: Անգլիական գաղութները հիմնեցին իրենց այսպես կոչված «Նահանգները» ամրագրելով սահմանադրական բնույթ կրող «սահմանումներ»:*

Այս իրավիճակը հանգեցրեց Հյուսիսամերիկյան նահանգների և բրիտանական թագավորության միջև բախումների, ապա մարդու բնական իրավունքներն ամրագրող փաստաթղթերի սահմանմանը, անկախության համար մղվող պայքարին, կոնֆեդերացիաների ստեղծմանը, իսկ 1787թ. Սահմանադրության ընդունմանը՝ ԱՄՆ ֆեդերացիային:

1787թ. ընդունվեց առաջին գրված Սահմանադրությունը՝ ԱՄՆ Սահմանադրությունը, իսկ 1791թ. իրավունքների մասին Բիլլը, որը ԱՄՆ Սահմանադրություն մտավ առաջին 10 ուղղումների տեսքով: Նրան հաջորդեցին մարդու իրավունքներն ամ-

րագրող իրավական փաստաթղթերի ընդունումն ու ԱՄՆ իրավական նոր համակարգի ձևավորման գործընթացը:

Ինչպես տեսնում ենք հիշատակված զարգացումների համակարգը բնութագրում է աշխարհի պետությունների սահմանադրական զարգացման առանձնահատկությունները, սակայն, էթե փորձենք խնդիրը դիտարկել ոչ թե հասարակական սոցիալ-քաղաքական փոփոխություններով, այլ պայմանավորված նոր սահմանադրաիրավական ինստիտուտների և սահմանադրական մոդելների ձևավորմամբ, ապա, կարելի է Սահմանադրության ձևավորման այլ դասակարգում իրակա-

<sup>1</sup> Տե՛ս, Сравнительное конституционное право: Учебное пособие. Отв. ред. В. В. Чиркин, М., 2002, ст. 43-49.

նացնել, որը սակայն որևէ առնչություն չունի պետությունների տարածքային տեղակայվածության հետ /օր. Մեծ Բրիտանիայի չգրված Սահմանադրությունն էապես տարբերվում է հարևան Ֆրանսիայի Սահմանադրությունից/, խոսքը վերաբերվում է ոչ թե կառուցվածքային տարբեր դասակարգումներին, իրավաբանական բովանդակությանը, ընդունման եղանակներին, ընդունման և փոփոխման կարգին, այլ պահանջում է առավել խորը ուսումնասիրություն: Սահմանադրության մոդելը մարդկության զարգացման կոնկրետ փուլում ձևավորված և տվյալ ժամանակաշրջանը բնութագրող հատկանիշ է: Այն, որպես կանոն, ձևավորվում է կոնկրետ պետությունում, ապա տարածում է գտնում հարևան պետություններում: Սահմանադրության մոդելը բնութագրվում է հասարակական հարաբերությունների ճշգրիտ սահմանադրական կարգավորման այս կամ այն սահմանադրաիրավական խնդիրների լուծման կապակցությամբ սոցիալ-քաղաքական մոտեցումներով և դրանց կապակցությամբ սահմանադրաիրավական ինստիտուտների ամրագրումով: Սահմանադրության մոդելի մասին տեսական վերլուծությունները վկայում են, որ այս հասկացությունն իր բովանդակությամբ արտահայտում է պետության և հասարակական կառույցների մեխանիզմը, մարդու իրավական կարգավիճակի հիմնադրույթները, պետական կառավարման սահմաններն ու մեթոդները, սահմանադրական հարաբերությունների բովանդակությունը, այդ հարաբերությունների դինամիկան և Սահմանադրության միշտ իրավաբանական բնութագրիչներ: Ընդհանրապես, Սահմանադրությունն արտահայտում է կոնկրետ պատմական ժամանակաշրջանի առանձնահատկությունները, հասարակության իրավագիտակցության մակարդակը, պետության զարգացման սոցիալական և իրավաքաղաքական առանձնահատկությունները: Սահմանադրությունները հենք են ստեղծում պետական և հասարակական կառավարման համար, ընդգծվում է տարբեր կոլեկտիվների և անհատի իրավական կարգավիճակը: Սահմանադրության մոդելն արտահայտում է հասարակության զարգացումը, շեշտադրելով նրա ոչ այնքան ներկա ժամանակաշրջանը որքան՝ ապագան: Ցանկացած նոր Սահմանադրական մոդելի ամրագրումն արտահայտում է հասարակու-

թյան կայունությունը և պայմանավորում հասարակական հարաբերությունների զարգացման նոր մոդելները, որն իր հերթին պահանջում է նոր օրենսդրություն: Առաջին Սահմանադրությունների մոդելները կապվում են նոր ժամանակների մտածողների հայացքների հետ: Նրանց գաղափարների հիմքում ընկած են բացարձակ ֆեոդալիզմի վերացումը, մարդու բնական իրավունքների և ժողովրդավարության ամրագրումը: Բնական իրավունքի վերաբերյալ գաղափարների հանդիպում ենք դեռևս անտիկ մտածողների աշխատություններում: Այն հանդիսանում է ի ծնե մարդուն պատկանող իրավունք, որը, 17-18-րդ դարերում ձևավորվելով եվրոպական երկրներում, դարձել է ժամանակակից Սահմանադրությունների և իրավական պետության բնութագրիչն ու անբաժանելի հատկանիշը: ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվում է երաշխավորվում են մարդու բնական իրավունքները, որից և բխում է պոզիտիվ իրավունքը: Ուստի, բնական իրավունքը պետության կողմից մարդուն չչնորհված իրավունքներն են: **Իշխանություն, մարդու իրավունքներ և սահմանափակ ժողովրդավարություն.** Երևա այս հարցերն էին դրված տվյալ ժամանակաշրջանի Սահմանադրության մոդելի հիմքում: Իշխանության հետ կապված շեշտադրվում է բացարձակ միապետության սահմանափակումը, հասարակության գործերին իշխանության միջամտության արգելքը և այնպիսի գաղափարների ամրագրում, ինչպիսիք են ազատություն, հավասարություն, մասնավոր սեփականություն, մարդու բնական իրավունքներ և այլն: Այս ժամանակաշրջանի Սահմանադրություններում, սակայն, բացակայում էին սոցիալ-տնտեսական և այլ ոլորտների (մշակույթ, կրոն և այլն) իրավունքների վերաբերյալ դրույթները: Բացակայում էին նաև կոլեկտիվ իրավունքների վերաբերյալ դրույթները: Չնայած 19-20-րդ դարերի սկզբին եվրոպական և Լատինական Ամերիկայի միշտ իրավունքներում մարդու իրավունքները և առանձին ժողովրդավարական ինստիտուտներ զարգացում ապրեցին, այդուհանդերձ առաջին սահմանադրական մոդելը հանդիսացավ լիբերալ-կապիտալիստական՝ սահմանափակ ժողովրդավարության բովանդակությամբ. սահմանելով պետական մարմինների փոխհարաբերությունների և գործունեության առանձնա-

հատկությունները: Անհերքելի է նրա դերը սահմանադրականության ձևավորման, պետության, հասարակության, մարդու և քաղաքացու իրավունքների ձևավորման գործում: Ընդհանրապես, խոսելով ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության ձևավորման մասին, հարկ ենք համարում անրադառնալ նրա ծագման արմատներին, որոնք մեզ տանում են հին աշխարհ: Դեռևս հին Հունաստանում **Արիստոտելի** գաղափարներում հանդիպում ենք նմանատիպ բովանդակության եզրահանգումների: Բառացիորեն չօգտագործելով քաղաքացիական հասարակություն եզրույթը, խոսվում էր պետության պոլիսների կառավարման մասին, որոնց կառավարման վերաբերյալ որոշումներն ընդունվում էին քաղաքացիների ժողովրդական ժողովներում: Այս մոտեցումը պահպանվեց նաև նոր ժամանակներում: Բուրժուական հեղափոխության ժամանակաշրջանում **Բեկոնի, Լոկի, Հրոցիսի, Սպինոզայի** և այլ մտածողների աշխատություններում, որոշակի սահմանագիծ ենք տեսնում քաղաքացիական հասարակության և պետության միջև: **Հեգելի** աշխատություններում արդեն «քաղաքացիական հասարակությունը» տեսական գաղափարից փոխակերպվում է սոցիալական իրականության. այն հարաբերությունների և կառուցվածքների միասնություն է, որը ձևավորվեց մինչև պետությունները, ապա նաև նրանց զուգահեռ: Քաղաքացիական հասարակությունը իրավական հիմնարկների միջոցով ապահովում է մասնավոր անձանց շահերը և պաշտպանում է նրանց սեփականությունը, պահպանում է որոշակի հասարակական կարգ: Պետությունում ամբողջովին միաձուլվում են անձնական ազատությունը և արտաքին կարգը:<sup>2</sup>

Առաջին համաշխարհային պատերազմից հետո կապիտալիստական երկրներում և սոցիալիստական տոտալիտար պետություններում ընդունվեցին նոր մոդելի

Սահմանադրություններ, որոնցում հատկապես սոցիալական հարաբերությունների վերաբերյալ դրույթներ էին բովանդակվում: Փոփոխություններ էին նկատվում նաև կարգավորման օբյեկտի առումով (իշխանություն, անձնական և քաղաքական իրավունքներ) և քայլեր էին ձեռնարկվում սոցիալական պետությանը բնորոշ դրույթների սահմանման համար: Այս ժամանակաշրջանի սահմանադրական մտքի զարգացման վրա իր ազդեցությունն ունեցավ ԽՍՀՄ Սահմանադրությունը, որն արդեն սահմանում էր «աշխատավորների» իրավունքների ամրագրման սկզբունքը:

Հարկ է նշել, որ ներկայումս Սահմանադրության հասկացությունն իր իմաստային առումով տարբերվում է նախկինից: Սահմանադրական կարգերը արդյունք են բացարձակ միապետությունների դեմ տարած հաղթանակի և ազգային ազատագրական պայքարի:<sup>3</sup>

Հետաքրքրական է, որ «Հիմնական օրենք» հասկացության բովանդակությունն ընդգրկում է մի շարք փուլեր: Մասնավորապես այն չի կարող կարգավորել հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Այն կարգավորում է այն հասարակական հարաբերությունները, որոնք ունեն հասարակական հնչեղություն և ենթակա են իրավական կարգավորման: Այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք են, օրինակ, կենցաղային, ընտանեկան հարաբերությունները կարգավորվում են բարոյական, սովորության նորմերով և ոչ թե իրավական: Հասարակական հարաբերությունների մեկ այլ խումբ էլ կարգավորվում է ոչ թե սահմանադրական նորմերով, այլ քաղաքացիական իրավական, աշխատանքային, քրեական և իրավունքի այլ ճյուղերին բնորոշ նորմերով: Սահմանադրությամբ են ամրագրվում և ամփոփվում այն հիմնական, էական, սկզբունքային հարաբերությունները, որոնք հենք են հանդիսանում այլ հարաբերությունների զարգացման համար: Այստե-

<sup>2</sup> Տե՛ս, **Ա. Երիցյան, Ա. Բաղդասարյան** Մարդու իրավունքները և դրանց պաշտպանության մեխանիզմները դատական և իրավապահ մարմինների համակարգում /տեսության և պրակտիկայի հիմնահարցեր/ Երևան 2000, էջ 19:

<sup>3</sup> Տե՛ս. **Խաչատրյան Հ. Մ.**, Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությունը, Երևան, 1991, էջ 4:

դից էլ կարող ենք ասել, որ այն ունի կարգավորման հատուկ օբյեկտ: Այդ հարաբերությունների շրջանակը տարբեր պատմական ժամանակաշրջաններում տարբեր է և բոլոր պետություններում միատեսակ չեն ընկալվում: **(Ինչ վերաբերվում է «Հիմնական օրենք» հասկացությանը, ապա կարող ենք ասել, որ Սահմանադրությունն է հանդիսանում բարձրագույն իրավաբանական ուժով օժտված այն իրավական հենքը, որի վրա կառուցվում են այլ իրավական ակտերը, պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեությունը, ձևավորվում է մարդկանց իրավագիտակցության մակարդակը, դատական և այլ իրավակիրառ պրակտիկան):** Օժտված լինելով բարձրագույն իրավաբանական ուժով պարտադրում է, որ բոլոր իրավական ակտերը համապատասխանեն և բխեն Սահմանադրությունից, այլապես «Սահմանադրությանը հակասող իրավական ակտերը չունեն իրավաբանական ուժ» եզրույթն անհերքելիորեն կգործի: Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին: Ահա նման ձևակերպում է սահմանում ՀՀ Սահմանադրության վեցերորդ հոդվածը, որը, ինչպես տեսնում ենք, նախկինում օրենքների չհակասելու դրույթը փոխակերպվել է Սահմանադրությանը համապատասխանելու դրույթով: Որպես պահանջ սահմանելով օրենքների համապատասխանեցումը Սահմանադրությանը, իսկ այլ իրավական ակտերի համապատասխանեցումը Սահմանադրությանը և օրենքներին, արտահայտում է Սահմանադրությանը ամբողջ իրավական համակարգի ներդաշնակ լինելը և հանդիսանում իրավական պետության անտրոհելի սկզբունք: Հողվածի բովանդակությունը ընդգծում է Սահմանադրության գերակայությունը, նրա բարձրագույն

իրավաբանական ուժն ու նորմերի անմիջական գործողությունը:

Անհերքելիորեն կիսում ենք պրոֆեսոր **Գ. Հարությունյանի** տեսակետը. **Սահմանադրության գերակայությունն իրավական պետության այն առանցքն է, որը պայմանավորում է ամբողջ իրավական կառուցվածքը և ներքին տրամաբանությունը: Սահմանադրությունն այն հիմնական օրենքն է, «օրենքների օրենքը», որը կառուցակարգում է ամբողջ պետությունը և դուրս է հանրային իշխանությունների (օրենսդիր, գործադիր, դատական) իրավագործությունից: Սահմանադրությունը պետության համար ունի հիմնադիր գործառույթ, այդ չափով վերապետական և մինչպետական ակտ է: Սահմանադրություն և պետություն փոխհարաբերություններում պետություն ունի երկրորդային բնույթ:** Ասվածը պետք չէ շփոթել իրավունքի և պետության ծագման տարբեր ժամանակագրության հետ: Անգամ արդեն կայացած պետությունը, որն ուներ Սահմանադրություն, վերակազմակերպվում և վերահիմնադրվում է սահմանադիր իշխանության կողմի կամքով, երբ ընդունվում է նոր Սահմանադրություն կամ գործող Սահմանադրությունն էապես փոփոխվում է:<sup>4</sup> Սահմանադրական իրավունքի տեսաբանները խնդիր են համարում այն, որ Սահմանադրությունը ներկայացվում է որպես պետական-քաղաքական համակարգի, այլ ոչ թե քաղաքացիական հասարակության Հիմնական օրենք:<sup>5</sup> Նման հարցադրումն ունի սկզբունքային նշանակություն և բնորոշում է սահմանադրականության զարգացման հիմնական ուղղվածությունը նոր հազարամյակում: Սահմանադրականության ներկա զարգացումների առանցքային հարցերից է Սահմանադրության սոցիալական բնույթի ամրապնդումը, շեշտադրումը պետության Հիմնական օրենքից քաղաքացիական հասարակությանը բնորոշ դաշտ տեղափոխելը: Սահմանադրությունը պետք է ազգային համաձայնության հաստատման հնարա-

<sup>4</sup> Տե՛ս. **Գ. Հարությունյան, Ա. Վաղարշյան** ընդհ.խմբ. ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ 2010թ., էջ 101:

<sup>5</sup> Տե՛ս. Дайджест – Конституционное правосудие в странах СНГ и Балтии. 2004, N 12, ст.103:

վորություններ երաշխավորի, այն ցանկացած բնույթի հասարակական դիմակայության հաղթահարման լուծումներ պետք է բովանդակի: Սահմանադրությունը չի կարող սահմանադրական փակուղիների հանգեցնել, այն քաղաքացիական հասարակության զարգացման ամենագործուն խթանը պետք է լինի: Ձևախեղված քաղաքացիական հասարակության առկայությունը պայմանավորվում է նաև նրանով, որ սահմանադրական ոչ լիարժեք լուծումները դրա համար պարարտ հող են ստեղծում:

Երկրի կյանքում Սահմանադրության նշանակության վերաբերյալ կան տարբեր մոտեցումներ: Սակայն, ընդհանուր կարծիքն այն է, որ իրավական ակտում գրված դրույթները պետք է անխտիր իրականացնել:<sup>6</sup>

Ժամանակակից Սահմանադրության՝ որպես հատուկ բնույթի իրավաբանական ակտի էության բնութագրիչն այն է, որ հանդիսանալով սոցիալական տարբեր խմբերի շահերն արտահայտող նորմատիվ-իրավական ակտ, արտահայտում է հասարակության բարձր իրավագիտակցության վրա հիմնված շահերի պաշտպանությունն ապահովող հիմնական օրենք: Ժամանակակից սոցիալական, իրավական, ժողովրդավարական, տեղեկատվական հասարակության պայմաններում Սահմանադրության էությունն արտահայտվում է համարողային արժեքների վրա հիմնված հասարակական տարբեր խմբերի շահերն արտահայտող իրավաբանական դրսևորումների ամրագրմամբ:

### Ամփոփում

Սահմանադրության ձևավորման և զարգացման առանձնահատկությունները վերտառնությամբ հողվածում ուսումնասիրության է ենթարկված Սահմանադրության ձևավորման, պատմական զարգացման և էության առանձնահատկությունները: Վերլուծության է ենթարկվել հին աշխարհում նրա ձևավորման առանձնահատկությունները և քաղաքացիական հասարակության կայացման խնդրում նրա որպես պետության և ողջ իրավական համակարգի հենք, «օրենքների օրենք» և «Հիմնական օրենք» եզրույթի իրավաբանական նշանակության արդի-ականության կարևորությունը: Ներկայացված են պատմական զարգացման արդյունքում Սահմանադրության էության հիմնական բնութագրիչները, նորմերի համակարգում նրա գերակա դիրքի բնորոշիչները, որոնք ընդգծում են ժամանակակից իրավական պետություններում նրա առանցքային դերը:

### Resume

In the article entitled “Characteristics of Constitution Formation and its Development” the peculiarities of the Constitution formation and its historical development is studied.

The characteristics of the development of the Constitution are analyzed in the ancient world as well as its contemporary judicial importance in the realization of a civil society as a state and a basis of the whole legal system.

The main characteristics of the essence of the Constitution, its prevailing features in the system of legal rules as a result of historical development which underline its pivotal role in modern legal states are inserted in the article.

### Резюме

В статье с заголовком «Особенности формирования и развития Конституции» рассматриваются особенности формирования, исторического развития и сущности Конституции. Проведен анализ особенностей ее формирования и важности актуальности юридического значения терминов «Закон законов» и «Основной закон» как основы государства и всей правовой системы в вопросе становления гражданского общества. Представлены основные признаки сущности конституции в результате исторического развития, характерные черты ее высшего положения в системе норм, что подчеркивает ее главную роль в современных правовых государствах.

**Բանալի բառեր — Սահմանադրություն, Սահմանադրության մոդել, առաջին գրված Սահմանադրություն, սահմանադրականություն, հեղափոխություն, Հիմնական օրենք, քաղաքացիական հասարակություն, բարձրագույն իրավաբանական ուժ, բնական իրավունք:**

<sup>6</sup> Օրինակ՝ Բուլղարիայում, Ռումինիայում կոմունիստական ռեժիմի տարիներին սահմանվում էին այնպիսի իրավունքներ և դրանց իրականացման երաշխիքներ, որոնք նույնիսկ չկային արևմտյան եվրոպայի երկրներում, բայց իրականում դրանք չէին գործում: Տե՛ս. **Չիրկին В.Е.** //Конституционное право зарубежных стран, Юристь, Москва1997:

# ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՆՏՐԱԳԵՆՏԻՆ ԱՉԱՏՈՐԵՆ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՇԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՐՄԱ ՄԱՆԱՍՅԱՆ

ՀՀ փաստաբանական պալատի անդամ

*Անխոս, ժամանակակից քաղաքացիաիրավական հարաբերություններում պայմանագրի դերն ու նշանակությունը արժևորելի է: Ավելին, Հայաստանի Հանրապետությունում ներկայումս ձևավորված շուկայական տնտեսության պայմաններում պայմանագրի ազատությունը քաղաքացիական իրավունքի սուբյեկտների պայմանագրային հարաբերությունների կարգավորման հարցում ձեռք է բերել սկզբունքային նոր նշանակություն: Այն հնարավորություն է տալիս կողմերին լիովին դրսևորել ինքնուրույն նախաձեռնություն, ցուցաբերել ստեղծագործական մոտեցում<sup>1</sup>: Պայմանագրի ազատությունը հնարավորություն է տալիս նաև համընթաց քայլել օբյեկտիվ իրականության հետ, սահմանել այնպիսի նոր հարաբերություններ, որոնք նախատեսված և կարգավորված չեն օրենսդրության կողմից:*

Պայմանագրի ազատության սկզբունքն ուղղակիորեն ամրագրված է ՀՀ քաղ. օր. 437-րդ հոդվածում: Այդ հոդվածի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել պայմանագրի ազատության սկզբունքի երեք դրսևորումներ.

● **Պայմանագրի կնքման ազատություն.** քաղաքացիական իրավունքի սուբյեկտներն իրենց հայեցողությամբ որոշում են կնքել կամ չկնքել տվյալ պայմանագիրը, նրանցից ոչ ոք պարտավոր չէ պայմանագիր կնքել իր կամքին հակառակ: Պայմանագիր կնքելուն հարկադրել չի թույլատրվում բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիր կնքելու պարտականությունը նախատեսված է օրենքով կամ կողմերն իրենք են կամավոր ստանձնել այն:

● **Կնքվող պայմանագրի տեսակն ազատորեն որոշելու իրավունք.** քաղաքացիական շրջանառության սուբյեկտներն իրենք են որոշում, թե ինչպիսի պայմանագիր կնքեն: Նրանք իրավունք ունեն կնքելու ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագրեր: Քաղաքացիական օրենսդրությունը չի նախատեսել պայմանագրերի սպառիչ ցանկ (numerus clauses): Այսինքն, կողմերը կարող են անհրաժեշտության դեպքում ինքնուրույն «ստեղծել» գործող օրենսդրությանը չհակասող պայմանագրի ցանկացած մոդել: Այս իրավունքի ամրագրման կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ շուկայական տնտեսության ձևավորման և զարգացման պայմաններում տնտեսական պահանջներն արագ փոփոխվում են, իսկ իրավական համակարգը շատ հաճախ հետ է մնում դրանից: Մասնավորապես, ներկայումս ֆոնդային, արժույթային, դրամական բորսաների հիման վրա կնքված տարբեր գործարքներն ոչ միշտ են կարգավորվում օրենքով, քանի որ բացակայում է դրանց օրենսդրությամբ ուղղակիորեն ամրագրված «նախատիպը»: Բացի այդ, կողմերը կարող են կնքել օրենքով կամ այլ

քով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագրեր: Քաղաքացիական օրենսդրությունը չի նախատեսել պայմանագրերի սպառիչ ցանկ (numerus clauses): Այսինքն, կողմերը կարող են անհրաժեշտության դեպքում ինքնուրույն «ստեղծել» գործող օրենսդրությանը չհակասող պայմանագրի ցանկացած մոդել: Այս իրավունքի ամրագրման կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ շուկայական տնտեսության ձևավորման և զարգացման պայմաններում տնտեսական պահանջներն արագ փոփոխվում են, իսկ իրավական համակարգը շատ հաճախ հետ է մնում դրանից: Մասնավորապես, ներկայումս ֆոնդային, արժույթային, դրամական բորսաների հիման վրա կնքված տարբեր գործարքներն ոչ միշտ են կարգավորվում օրենքով, քանի որ բացակայում է դրանց օրենսդրությամբ ուղղակիորեն ամրագրված «նախատիպը»: Բացի այդ, կողմերը կարող են կնքել օրենքով կամ այլ

<sup>1</sup> Տե՛ս Шевиченко Л.И., О понятии, сущности и значении договорного регулирования имущественных отношений в условиях рыночной экономики //Государство и права, 2005, N 10, էջ 44:

իրավական ակտերով նախատեսված մի քանի պայմանագրերի տարրեր պարունակող պայմանագիր (հառը պայմանագիր):

● **Պայմանագրի պայմանները (բովանդակությունը) ազատ որոշելու իրավունք.** կողմերն իրենց կամքով սահմանում են կնքվող պայմանագրի բովանդակությունը և սեփական կամահայտնությամբ որոշում տվյալ պայմանագրի պայմանները: Այսպես, ձեռքբերվող ապրանքի զնի մասին պայմանը համաձայնեցվում է հենց մասնակիցների միջև և միայն առանձին ղեպքերում է պայմանագրի գինը որոշվում պետական տարիֆներով, դրույքաչափերով (օրինակ, երբ պայմանագիրը վերաբերում է պետական սեփականության տնօրինմանը):

Ի թիվս այս երեք դրսևորումների՝ ճիշտ կլինեն պայմանագրային ազատությունը դիտարկել նաև չորրորդ՝ **պայմանագրի կոնտրագենտին ազատորեն ընտրելու իրավունքով, քանի որ կողմը,** ի դեմս պայմանագրի տեսակի, պայմանների, պետք է ազատորեն ընտրի նաև այն անձին, ում հետ կնքելու է պայմանագրի տվյալ տեսակը:

Պայմանագրի կոնտրագենտի ընտրության ազատությունը յուրաքանչյուր կողմին իրավունք է ընձեռում որոշելու, թե ում հետ է կնքելու պայմանագիրը: Կոնտրագենտի ընտրությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես, կոնտրագենտի վստահելի, վճարունակ լինելով, գործարար համբավով, համապատասխան գիտելիքներ կամ հմտություններ ունենալով, անձնական բնութագրիչ հատկություններով և այլն: Ընտրելով կնքվելիք պայմանագրի կողմին՝ օֆերենտը նրան է ուղղում պայմանագրի կնքման մասին օֆերտան:

Չնայած այն հանգամանքին, որ իրավաբանական գրականության մեջ արծարծվել են պայմանագրային իրավունքի սկզբունքներին վերաբերող խնդիրները, սակայն միաժամանակ պայմանագրի կոնտրագենտի ընտրության հետ կապված խնդիրներն առայսօր մնում են քիչ ուսումնասիրված: Սակայն կարծում ենք, որ կոնտրագենտի ընտրության ազատության խնդիրն ևս ոչ պակաս կարևորություն ունի, քանի որ պայմանագիր կնքելու համար նախևառաջ անհրաժեշտ է իմանալ, թե ում հետ է պայմանագիրը կնքվելու: Սակայն պայմանագրի կոնտրագենտի ընտրության ազատությունը, ինչպես պայմանագրի ազատության սկզբունքի մյուս դրևորումները, անսահման չէ:

Երբեմն օրենսդրությամբ դիտավորյալ սահմանափակվում է կոնտրագենտի ընտրության ազատությունը ավելի թույլ պաշտպանված սուբյեկտների շահերի ապահովման հա-

մար: Կոնտրագենտին ընտրելու ազատությունը կարող է սահմանափակվել.

● **հրապարակային պայմանագիրը կնքելիս,** երբ առևտրային կազմակերպությունը պարտավոր է կնքել պայմանագիր յուրաքանչյուրի հետ, ով կդիմի իրեն (ՀՀ քաղ. օր. 442-րդ հոդված):

● **պետության և հասարակության շահերի համար կնքվող պայմանագրերի ժամանակ,** օրինակ, պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագրի, պետական կարիքների համար կապալային աշխատանքների կնքման պայմանագրի ժամանակ (ՀՀ քաղ. օր. 540-րդ, 761-րդ հոդվածներ): Տվյալ օրինակներում հստակ որոշված է պայմանագրի սուբյեկտային կազմը:

Այսպես, պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագիրը կնքելիս ՀՀ քաղ. օր. 541-րդ հոդվածը պայմանագրի կնքման պարտականությունը դնում է պետական պատվիրատուի կամ նրա ցուցումով այլ անձի վրա, ով պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պատվեր է ներկայացնում, իսկ մատակարարն էլ պարտավորվում է կատարել այն: Այստեղ, չպարզված է մնացել այն հարցը, թե պարտադիր կարգով կնքվող այս պայմանագիրը հիմք է արդյոք կոնտրագենտի ընտրության ազատության սահմանափակման համար: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պետական կարիքների համար ապրանքների մատակարարման համար կնքվող պայմանագիրը կարգավորող հոդվածների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել պետական կարիքների համար ապրանքների մատակարարման առանձնահատկությունը, որը կայանում է երկու պայմանագրերի տեսակների կիրառմամբ՝ պետական կարիքների մատակարարման համար պետական պայմանագրի և պետական կարիքների համար մատակարարման պայմանագրի կիրառմամբ: Առաջինի բովանդակությունը կայանում է նրանում, որ մի կողմը՝ մատակարարը պարտավոր է մյուս կողմին՝ պետական պատվիրատուին կամ նրա կողմից մատնանշված այլ անձին հանձնել ապրանք, իսկ պատվիրատուն պարտավորվում է ապահովել մատակարարված ապրանքների զնի վճարումը: Այստեղից կարելի է եզրահանգել, որ պետական պատվիրատուն կարող է իրականացնել երկակի գործառույթ՝ կամ հանդես է գալիս գնորդի դերում, կամ էլ ինքն է որոշում, թե ով կարող է հանդես գալ այդ դերում: Այսպես ՀՀ քաղ. օր. 544-րդ հոդվածով ամրագրված է, որ եթե պետական պայմանագրով նախատեսվում է, որ մատակարարը (կատարողը) պետական կարիքների համար ապրանքների մատակարարումն իրականացնում



է պետական պատվիրատուի կողմից որոշված գնորդին, ապա պետական պատվիրատուն, պետական պայմանագիրն ստորագրելու օրվանից ոչ ուշ, քան երեսնօրյա ժամկետում, մատակարարին և գնորդին ծանուցում է վերջինիս տվյալ մատակարարին (կատարողին) կցելու մասին: Պետական պատվիրատուի մատակարարին ուղղված գնորդին կցելու մասին ծանուցումը, մեր կարծիքով, կարելի է զնահատել որպես պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագրի կնքման հիմք՝ անկախ մատակարարի կամքից: Բայց այս դեպքում անհրաժեշտ է, որ պետական պատվիրատուն իր վրա վերցնի վնասները փոխհատուցելու պարտավորությունը, որոնք կարող են ծագել մատակարարի մոտ պետական պայմանագիրը կատարելու հետ կապված: Անհրաժեշտ է նշել, որ գնորդին կցելու մասին ծանուցման իրավական բնույթի մասին քաղաքացիական իրավունքում արտահայտվել են մաս ալ կարծիքներ: Այսպես, **Ն.Ի. Կլեինը**, մեկնաբանելով ՌԴ քաղ. օր. 529-րդ հոդվածը, նշում է, որ պետական պայմանագրով մատակարարին գնորդին կցելու մասին ծանուցումը չի առաջացնում մատակարարի պարտականություն կնքելու մատակարարման պայմանագիր գնորդի հետ, եթե այդ գործարքով նախատեսված չէ պետ.պատվիրատուի իրավունքը նման ծանուցումներ կցելու վերաբերյալ: Այդ հիմքով էլ հեղինակը եզրահանգում է, որ մատակարարի պարտականությունը ծանուցման մեջ նշված գնորդի հետ կնքելու վերաբերյալ, բխում է կամովին ստանձնած պարտավորություններից<sup>2</sup>: Սակայն այս եզրահանգումը հերքվում է հենց քաղաքացիական օրենսգրքով ամրագրված դրույթով, այն է՝ 33 քաղ. օր. 544-րդ հոդվածի 5-րդ կետը (ՌԴ քաղ. օր. 529-րդ հոդված 5-րդ կետ) սահմանում է, որ եթե մատակարարը խուսափում է պետական պայմանագիր կնքելուց, ապա գնորդն իրավունք ունի դիմել դատարան՝ մատակարարին իր նախագծի պայմաններով պայմանագիր կնքելուն պարտադրելու պահանջով: Այսինքն, մատակարարը դատական կարգով կարող է, իր կամքից անկախ, հարկադրվել կնքելու պայմանագիր պատվիրատուի կողմից որոշված գնորդի հետ: Մեր կարծիքով մատակարարի՝ գնորդի հետ պետական կարիքների համար մատակարարման պետական պայմանագիր կնքելու պար-

տավորությամբ սահմանափակվում է նրա կոնտրազենտին ընտրելու ազատությունը:

Պետական կարիքների համար մատակարարման պայմանագիր կնքելիս կարևոր է նաև այն հարցի պարզաբանումը, թե կոնտրազենտի ընտրության ազատության հարցում ո՞վ կարող է սահմանափակվել՝ պետական պատվիրատուն, մատակարարը, թե գնորդը: Ըստ **Մ.Ի.Բրագինսկիի և Վ.Վ.Վիտրյանսկիի**՝ մատակարարը և պետական պատվիրատուն սահմանափակված են կոնտրազենտին ընտրելու հարցում, եթե պետական պայմանագրով նախատեսված է մատակարարման պայմանագրի կնքման պարտականությունը<sup>3</sup>: Կարծում ենք, որ կարելի համաձայնվել այս տեսակետի հետ այն դեպքում, եթե պետական պատվիրատուն մատակարարման պայմանագրի կնքման դեպքում հանդես է գալիս որպես գնորդ: Այն դեպքերում, երբ պետական պատվիրատուն որոշում է գնորդին, մատակարարին այդ գնորդին կցելու մասին ծանուցում է հղում, ապա մատակարարը պարտադիր կարգով կնքում է պայմանագիր պատվիրատուի կողմից որոշված գնորդի հետ: Մնացած դեպքերում հնարավոր է միայն մատարակարարի ընտրության ազատության սահմանափակում:

● **Այդ նույն հիմքով էլ կոնտրազենտի ընտրության ազատության սահմանափակման վրա ազդեցություն են թողնում հրապարակային մրցույթի անցկացման պայմանները:** Դա բխում է 33 քաղ. օր. 1043-րդ հոդվածի իմաստից: Համաձայն այդ հոդվածի՝ աշխատանքի լավագույնս կատարման կամ այլ արդյունքների հասնելու համար դրամական վարձատրություն կամ այլ պարգև տալու մասին հրապարակայնորեն հայտարարություն արած անձը պետք է պայմանավորված պարգևը վճարի մրցույթ անցկացնելու կանոններից համապատասխան հաղթող ճանաչված անձին:

Իր ելքային մրցույթը համարվում է հրապարակայնորեն խոստացած պարգևի տարատեսակ, քանի որ երկու դեպքում էլ տեղ ունի կոնկրետ գործունեության արդյունքների համար պարգևի վճարման հայտարարությունը: Այսպիսի պայմանագրերին հատուկ է հաղթող ճանաչված անձի հետ պայմանագիր կնքելու կազմակերպչի պարտականությունը, որն էլ հիմք է կոնտրազենտի ընտրության ազատության սահմանափակման համար, քանի որ

<sup>2</sup> См. Комментарий к ГК РФ /постатейный/. Ч.2 /Под ред. **О.Н.Садикова**. М., 1998, т.2 105:

<sup>3</sup> См.у Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право, Книга 1, Изд. 3-е, Общие положения, М., 2002, т.2 172:

մրցույթի անցկացման արդյունքով որոշվում է հաղթողը, որի հետ կազմակերպիչը պարտավոր է կնքել համապատասխան պայմանագիր: Այս իրավահարաբերության առանձնահատկությունն նաև այն է, որ ինչպես հաղթողը, այնպես էլ կազմակերպիչը պարտավոր են պայմանագիր կնքել մյուսի հետ: Իսկ կազմակերպիչի կամ նրա կոնտրազենտի կողմից պայմանագիր կնքելուց խուսափելու դեպքում, մյուս կողմն իրավունք ունի դիմել դատարան՝ պայմանագիր կնքելուն հարկադրելու, ինչպես նաև դրա կնքումից անհիմն խուսափելու հետևանքով պատճառված վնասները հատուցելու պահանջով:

● **Կոնտրազենտի ընտրության ազատության սահմանափակման օրինակներին կարելի է դասել նաև այնպիսի դեպքերը, երբ օրենքով սահմանված է այս կամ այն պայմանագիրը կնքելու ինչ-որ մեկի նախապատվության իրավունքը (զննման նախապատվության իրավունքը):** Ճիշտ է, պայմանագրի ազատության սահմանափակումը այդքան վառ արտահայտված չէ, որքան վերը նշված օրինակներում, սակայն պայմանագրի հնարավոր սուբյեկտներից նրանք ունեն նախապատվություն մնացածների նկատմամբ, և նրանց ցանկության դեպքում հենց նրանք են կնքում համապատասխան պայմանագիրը: Պայմանագրի կնքման նախաձեռնություն հայտնող անձն իրավունք չունի իր հերթին, իր հայեցողությամբ ընտրելու իր կոնտրազենտին: Նախապատվության իրավունքով պայմանագրի կնքման կարգը խախտելու դեպքում օրենքը նախատեսում է դրա պաշտպանության համար որոշակի մեխանիզմներ, մասնավորապես, դատական կարգով անձը կարող է պահանջել իրեն փոխանցել վաճառողի իրավունքներն ու պարտականությունները այն գործարքով, որով նա ուներ զննման նախապատվության իրավունք: Եթե անձը, ով ունի զննման նախապատվության իրավունք, չի օգտագործում այդ իրավունքը օրենքով նախատեսված որոշակի ժամանակահատվածում, ապա դադարում է այդ իրավունքի գոյությունը և կոնտրազենտի ընտրության ազատության սահմանափակումը վերացվում է:

**Գնման նախապատվության իրավունքը նախատեսված է հետևյալ դեպքերում.**  
1. «Բաժնետիրական ընկերություն մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրված է ՓԲԸ-ի բաժնետիրոջ այդ ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքը:  
2. ՀՀ քաղ. օր. 195-րդ հոդվածով նախատեսված է ընդհանուր սեփականու-

թյան իրավունքում բաժինը երրորդ անձի վաճառելիս բաժնային սեփականության մնացած մասնակիցների, վաճառքի զնով և այլ հավասար պայմաններով, վաճառվող բաժինը զնելու նախապատվության իրավունքը:  
3. ՀՀ քաղ. օր. 977-րդ հոդվածով նախատեսված է համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության (ֆրանչայզինգ) պայմանագրի ժամկետը լրանալիս իր պարտականությունները պատճառ կատարած օգտագործողի այլ հավասար պայմաններում նոր ժամկետով պայմանագիր կնքելու նախապատվության իրավունքը: Այսինքն, այս պայմանագրում ևս սահմանափակված է իրավատիրոջ կոնտրազենտին (օգտագործողին) ազատորեն ընտրելու իր իրավունքը:

Ի տարբերություն ՌԴ քաղաքացիական օրենսգրքի՝ ՀՀ քաղ. օր. 624-րդ հոդվածը՝ ամրագրելով նոր ժամկետով վարձակալության պայմանագրի կնքման կարգը՝ վարձակալին նոր ժամկետով պայմանագիր կնքելիս նախապատվության իրավունքով չի օժտել: Այսպես, ՌԴ քաղ. օր. 621-րդ հոդվածը ամրագրում է, որ վարձակալը, իր պարտավորությունների պատշաճ կատարման դեպքում, վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտման ժամանակ այլ անձանց հանդեպ ունի վարձակալության պայմանագիրը նոր ժամկետով կնքելու նախապատվության իրավունք, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ վարձակալության պայմանագրով: Վարձակալը պարտավոր է գրավոր ձևով պայմանագրի կնքման վերաբերյալ իր ցանկության մասին հայտնել վարձատուին՝ պայմանագրում նշված ժամկետում, իսկ եթե պայմանագրում նման ժամկետ նշված չէ, ապա ողջամիտ ժամկետում մինչև պայմանագրի գործողության ավարտը:

ՀՀ քաղ. օր. 624-րդ հոդվածը պարզապես ամրագրում է նոր ժամկետով վարձակալության պայմանագիր կնքելիս դրա պայմանները կողմերի համաձայնությամբ փոփոխելու մասին: Այսինքն, ՀՀ-ում վարձատուն, վարձակալության ժամկետի ավարտից հետո, իր ցանկությամբ կարող է պայմանագիր կնքել մեկ այլ անձի հետ, այն դեպքում, երբ ՌԴ օրենսդիրը պարտադրում է վարձատուին կնքելու պայմանագիր նույն վարձակալի հետ, քանի որ վերջինս ունի պայմանագրի կնքելու նախապատվության իրավունք՝ այդ կերպ սահմանափակելով վարձատուի կոնտրազենտին ընտրելու ազատությունը: Այսինքն, ՀՀ օրենսդրի այս դիրքորոշումը տվյալ պարագայում ավելի մոտ է ՀՀ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին, մասնավորապես, մասնակիցների

հավասարության, կամքի ինքավարության, պայմանագրի ազատության սկզբունքներին:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարող ենք նշել, որ կոնտրագենտին ընտրելու ազատության իրականացման շնորհիվ է, որ անձը կարող է ամբողջությամբ իրագործել իր սեփական պահանջները՝ հաշվի առնելով անձնական շահերը: Այն քաղաքացիաիրավահարաբերությանը մասնակցող սուբյեկտի ազատ կամահայտնության կարևորագույն երաշխիքներից մեկն է: Իր էությամբ վերջինս սերտորեն կապված է պայմանագրի կնքելու ազատության հետ, քանի որ պարտադիր կարգով կնքվող պայմանագրի դեպքում անձը գրեթե միշտ զրկված է կոնտրագենտին ընտրելու ազատությունից, քանզի հարկադրանքը վերաբերում է ոչ միայն սուբյեկտի՝ պայմանագրի կնքման կամքի սահմանափակմանը, այլև այն հարցին, թե ում հետ է կնքվելու պայմանագիրը, չէ որ անհնար է հարկադրել կնքել պայմանագրի վերացական սուբյեկտի հետ:

Ամփոփելով վերը նշվածը և հաշվի առնե-

լով պայմանագրի կոնտրագենտին ընտրելու ազատության իրականացման կարևորությունը, կարծում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ քաղ. օր. 437-րդ հոդվածը ավելացնել ևս մեկ՝ 3.1 կետով հետևյալ խմբագրությամբ<sup>4</sup>. «**3.1. Պայմանագրի կնքելիս կողմերը կարող են իրենց հայեցողությամբ ընտրել միմյանց, բացի այն դեպքերից, երբ սովյալ պայմանագրի կողմը որոշված է սույն օրենսգրքով կամ այլ իրավական ակտերով**»:

Այս դրույթն անհրաժեշտ է, որպեսզի պահպանվի պայմանագրի ազատության սկզբունքի դրսևորումների հավասարակշռության մեխանիզմը, պայմանագրի ազատության սկզբունքն իր ողջ էությամբ արտահայտվի քաղաքացիաիրավական հարաբերություններում և, վերջապես, որպեսզի պայմանագրի կոնտրագենտին ընտրելու ազատությունը և դրա պահպանման երաշխիքները ևս ուղղակիորեն նախատեսված լինեն օրենքով, ինչպես պայմանագրի ազատության սկզբունքի մյուս դրսևորումները:

**Резюме**

**"Особенности реализации права свободного выбора контрагента по договору"**

В данной статье сделано попытка исследовать одно из элементов принципа свободы договора: свобода определения контрагента. По мнению автора свобода договора выражается также в возможности лица свободно выбирать себе партнера в будущем договорном связи. В статье представлены примеры ограничения свободы выбора контрагента, а также проанализирована статья 437 ГК РА, выявлена и обоснована ее недостатки, сделано соответствующие выводы. На основе проведенного исследования автором предлагается сделать изменения законодательного характера и редактировать статью 437 ГК РА, в частности, дополнить 3.1 пунктом об свободе выбора контрагента .

**Resume**

**of the research article "The features of the implementation of the right of the free choice of the contractor by the agreement"**

In the current article an attempt to study one of the elements of the principle of the freedom of the agreement: freedom of the determination of the contractor. On the author's opinion the freedom of the agreement is expressed also by the chance of the person to freely choose a partner for himself in the future contractual connection. In the article there are presented examples of the limitation of the freedom of the choice of the contractor, also the article 437 of the CC of RA is analyzed, its flaws are identified and justified, appropriate conclusions are made. On the base of the carried research it is offered by the author to make changes of the legislative nature and to edit the article 437 of the CC of RA, in particular, to complete 3.1 by an item on the freedom of the contractor.

**Գիմնաբաներ՝**

պայմանագրի ազատության սկզբունք, պայմանագրի ազատության սկզբունքի դրսևորումներ, պայմանագրի կոնտրագենտին ազատորեն ընտրելու իրավունք, կոնտրագենտին ընտրելու իրավունքի սահմանափակում:

The principle of freedom of contract, the limited principle of freedom of contract, the elements of the principle of freedom of contract, the right of free choice of the contractor to the contract, the limited on the right choice of the contractor.

Принцип свободы договора, элементы принципа свободы договора, права свободного выбора контрагента по договору, ограничения права выбора контрагента.

<sup>4</sup> Առաջարկվում է վերոգրյալ դրույթը շարադրել 3.1 կետով, որպեսզի պահպանվեն պայմանագրի ազատության սկզբունքի դրսևորումների հաջորդականությունը:

# ՇԱՐԻԱԹԸ ԵՎ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

## Ալի ՇԱՐԻՆԻ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

*Ժամանակակից եվրոպական իրավական գիտությունը մուսուլմանական իրավունքը սովորաբար դիտարկում է որպես շարիաթի հոմանիշ, իսկ շարիաթն իր հերթին՝ որպես ունիվերսալ մի համակարգ, որում կրոնական Էությունը սկզբունքորեն անջատված չէ իրավական սկզբից: Սակայն տվյալ հիմնահարցի խորացված վերլուծությունը թույլ է տալիս բավականին հետևողականորեն տարանջատել շարիաթի և մուսուլմանական իրավունքի հասկացությունները:*

Շարիաթ հասկացությունը՝ տվյալ տերմինի օգտագործման հետ մեկտեղ իսլամական ավանդությունը կապում է **Ալլահի** նախանշած ճանապարհը նշելու հետ. ընթանալով այդ ճանապարհով, ուղղափառ մահմեդականը կհասնի կատարելության, աշխարհիկ բարօրության և կարող է ընկնել դրախտ: Այսպես, **Ալլահը** դիմում է մարդուն. «Մենք տեղավորեցինք քեզ հրամանքի ուղիղ ճամփու վրա: Արդ, հետևիր նրան...» [45: 17/18]: «**Ուղիղ ճամփա**» արտահայտությունը արաբերենում համապատասխանում է «**շարիաթ**» բառին: Տվյալ հասկացության ընդհանուր իմաստն ավելի հասկանալի է դառնում, եթե հաշվի առնենք նրա ծագումը «շա-րա-ա» արմատից, որը բազմիցս հանդիպում է **Ղուրանում** «օրինականացնել», «որպես պարտադիր բան ինչ-որ հրահանգ տալ», «կարգադրել» իմաստներով [տես, օրինակ, 42: 10/13, 20/21]: Այստեղից հետևություն է արվում, որ շարիաթի աղբյուրներ են հանդիսանում **Ղուրանն** ու սուննան՝ հադիսների (ավանդությունների) ժողովածուն: Դրանք մարգարե **Մուհամեդի** ասույթներն են. որոնցում մարմնավորված է աստվածային հայտնությունը: Միաժամանակ իսլամական գրականության մեջ հաստատվել է շարի-

աթի ընդհանուր բնորոշումը, շարիաթն Ալլահի կողմից պարտադրված և մարգարեի միջոցով մարդկանց փոխանցված կարգադրություններն են:

Այստեղ, սակայն, հարց է ծագում, կոնկրետ ի՞նչ կարգադրություններ են հասկացվում շարիաթի տակ: Խոսքը բացառապես կրոնակա՞ն ոլորտի մասին է, թե՞ շարիաթն ավելի ընդգրկում բան է: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է ելնել իսլամի ընդհանուր բնույթից, որի վերաբերյալ **Վ. Վ. Բարտոլդը** ժամանակին շատ ճիշտ նկատել է. «**Իր հավատքի պահանջները կատարելու համար քրիստոնյան պետք է մոռանա իրեն՝ հանուն Աստծո և մերձավորների, իսկ մահմեդականից նրա օրենքը պահանջում է, որպեսզի նա իր գործերի շաքում չմոռանա նաև Աստծուն, ժամանակին կատարի աղոթքի արարողությունը և իր ունեցվածքի մի մասը հատկացնի աղքատներին**»: Եթե այս մեջբերման մեջ «իր գործերի շաքում» հատուկ առանձնացնենք, իսկ «օրենք» բառը փոխարինենք շարիաթով, ապա կստանանք վերջինիս բավականին ընդգրկուն բնութագիրը:

Եվ իսկապես, շարիաթը երբեք չի սպառել մահմեդական մարդու ներքին աշ-

խարհը նրա կրոնական խիղճը կանխորոշող դոգմատիկ և պաշտամունքային հարցերով: Ոչ պակաս, իսկ գուցե շատ ավելի մեծ նշանակություն ունեն նրանում առօրյա կյանքի հարցերին, մահմեդականների վարքին՝ իրենց միջև իշխանությունների և այլադավան մարդկանց հետ փոխհարաբերություններում:

Այդուհանդերձ, շարիաթի բովանդակությունը տարբեր ձևով՝ ընկալվում է իսլամական մտքի տարբեր ուղղությունների և մուսուլմանական-իրավական դպրոցների կողմից: Գերակշռում է այն տեսակետը, որ շարիաթը ներառում է երեք հիմնական մասեր. կրոնական դոգմատիկան, իսլամական էթիկան և այսպես կոչված պրակտիկ նորմերը: Այս վերջինները, իրենց հերթին, բաժանվում են կրոնական պարտականությունների կատարման կարգը սահմանող պաշտամունքային նորմերի և մահմեդականների վարքի մյուս բոլոր կողմերը և աշխարհիկ փոխհարաբերությունները կարգավորող նորմերի: Հարկ է շեշտել, որ նորմատիվային կողմը ոչ թե ինչ-ինչ հավելում է իսլամական դոգմատիկային և էթիկային, այլ գործնական առումով՝ նրա կարևորագույն մասը, յուրատեսակ առանցքը: Պատահական չէ, որ որոշ հեղինակավոր հետազոտողներ համարում են, որ բուն աստվածաբանությունը շարիաթում ստորադաս վիճակում է իրավունքի հանդեպ, կամ էլ ընդհանրապես շարիաթին են վերագրում այն հրահանգավորումները, որոնք կարգավորում են մարդու արտաքին վարքը և ուղղակիորեն չեն առնչվում նրա կրոնական խղճին և արարքների ներքին շարժառիթներին:

Շարիաթի՝ որպես նորմատիվային համակարգի դիտարկումը, ենթադրում է սկզբունքային մի հարցի պարզաբանում, արդյո՞ք շարիաթը պարունակում է կյանքի բոլոր դեպքերի համար պիտանի պատրաստի նորմեր, արդյո՞ք այն նախատեսում է ցանկացած առիթներում մահմեդական մարդու վարքի հստակ ու միանշանակ կանոններ: Տվյալ հիմնախնդրի վերաբերյալ բազում մոտեցումներից առանձնացվում են երկու հիմնականը: Համաձայն դրանցից **առաջինի՝** շարիաթում կան բոլոր հարցերի պատասխանները, կենսական բոլոր իրավիճակների համար վարքի պատրաստի կանոններ: Հետևաբար, շարիաթն իրենից ներկայաց-

նում է ունիվերսալ, բացերից զուրկ նորմերի համակարգ, որն մանրամասնորեն կարգավորում է մահմեդականների կենսածնը: Նշենք, որ մուսուլմանական տարածաշրջաններում շարիաթն ընկալվում է հենց որպես այդպիսի համընդգրկուն մուսուլմանական իրավունք: Նույն իմաստն ունի նաև հաճախակի հանդիպող «շարիաթի օրենքներ» արտահայտությունը:

Ընդհանրապես իսլամագիտության մեջ լայն տարածում է ստացել այն կարծիքը, որ իբր շարիաթը իրենից ներկայացնում է կյանքի բոլոր ոլորտները ներթափանցած, վարքի կանոնների աներևակայելիորեն մանրամասնված համակարգ, որը կանոնակարգում է մահմեդականի յուրաքանչյուր քայլը, նախօրոք կանխորոշում է նրա ողջ կյանքը, չթողնելով նրան ընտրության ոչ մի ազատություն:

Սակայն բոլորը չէ, որ կիսում էին այդ կարծիքը: Ընդհակառակը՝ շարիաթին մվիրված մուսուլմանական հեղինակավոր գիտնականների աշխատություններում գերակշռում է մեկ այլ մոտեցում: Համաձայն նրա՝ շարիաթի նորմատիվային կողմը կազմվում է մի քանի տեսակի հրահանգավորումներից: Առաջին տեսակը կազմում են **Ղուրանի** և սուննայի միանշանակ հասկացվող և պարզ ու հստակ իմաստ ունեցող դրույթները: Դրանց շարքում կարելի է գտնել մահմեդականների կողմից իրենց կրոնական պարտականությունների կատարման բոլոր կոնկրետ կանոնները, իսկ մարդկանց փոխհարաբերությունները կարգավորող ստույգ նորմերը շատ քիչ են (զգալի բացառություն են հանդիսանում միայն ընտանիքի, ամուսնության և ժառանգման հարցերը): Այդ կանոնները կրում են անմիջական կրթական բնույթ և դրանցից շատերի կատարումը մահմեդականի համար պարտադիր է և հանդիսանում է նրանց կրոնական կարգավիճակի մի մասը: Պատահական չէ, որ մի շարք երկրներում կրոնի ազատությունը մահմեդականի համար պարտադիր է և հանդիսանում է նրանց կրոնական կարգավիճակի մի մասը: Պատահական չէ, որ մի շարք երկրներում կրոնի ազատությունը մահմեդականի համար մեկնվում է ոչ միայն որպես իրենց կրոնական արարողությունների անարգել կատարման իրավունք, այլ որպես շարիաթի պահանջների կատարում՝ ամուսնական-ընտանեկան հարաբերություններում:

Կրոնական բնույթ ունեն նաև **Ղուրանի** և սուննայի զանազան իմաստներ կրող այն հրահանգավորումները, որոնք կոնկ-

րետ հարցերով նախատեսում են ոչ թե վարքի ստույգ կանոններ ցանկացած դեպքում, այլ միայն ընդհանուր շրջանակներն ու կողմնորոշիչները, ընդ որում՝ նշված աղբյուրներում մարդկանց փոխհարաբերությունների վերաբերյալ նման բազմանշանակ դրույթները ակնհայտորեն գերակշռում են: Շարիաթի նորմերի այս խմբի տարբերությունը նրանում է, որ դրանք տարբեր կերպ են մեկնվում իսլամական մտքի զանազան իրավական դպրոցների կողմից:

Շարիաթի նորմատիվային հրահանգավորումների հետ սերտորեն կապված են, այսպես կոչված, ֆիկհի արմատները («ֆիկհ» տերմինը նշնակում է ինչպես մուսուլմանական իրավունքի դոկտրինը, այնպես էլ նրա նորմը), որոնք կատարում են վարքի իսլամական կանոնների աղբյուրների դեր: Դրանցից ոմանք համարվում են աստվածային հայտնությունն արտահայտող և, հետևաբար, սրբազան, մյուսները՝ զուտ ռացիոնալ: Պարզ է, որ առաջինների թվին են պատկանում Դուրանն ու սուննան, իսկ երկրորդների՝ մուսուլմանական իրավագետների կողմից մշակված՝ այդ աղբյուրների ոչ միանշանակ հրահանգավորումների մեկնման խելամիտ եղանակները և գլխավորը՝ այն հարցերի լուծումը, որոնց մասին այդ աղբյուրներն ընդհանրապես լռում են: Առանց մարդկանց վարքի գնահատման ռացիոնալ, խելամիտ եղանակների իսլամական կենսակերպն ընդհանրապես անհնարին է: Պատահական չէ, որ հեղինակավոր շատ մտածողներ դիտարկվում են որպես շարիաթի կարևոր տարր:

**Ղուրանի** և սուննայի ամենաընդհանուր կամ չափազանց բազմանշանակ դրույթների խելամիտ մեկնման հիման վրա վարքի կանոնների որոնումները, ինչպես նաև այդ աղբյուրներում բացերի պարագայում ընդունելի որոշումների ձևակերպումը ստացել է **իջթիհադ** անվանումը (բառացիորեն՝ ջանք, ջանասիրություն, ջանադրություն): Դրա հիման վրա են ձևակերպվում մարդկանց փոխհարաբերությունները կարգավորող նորմերը: Անշուշտ, աշխարհիկ հիմնախնդիրները «ըստ իր հայեցողության» ազատորեն գնահատելու ազատությունը բացարձակ չէ և տրվում է ամենևին ոչ բոլորին:

Իջթիհադի իմաստը կայանում է հենց

նրանում, որ նա օգնում է պատասխան գտնել պատրաստի լուծում չունեցող հարցին, ընդ որում՝ շարիաթին համապատասխանող պատասխան: Այդ իսկ պատճառով մուսուլմանական իրավագետները կարծում են, որ **մուջթահիդը**՝ իջթիհադի իրավունքով օժտված շարիաթի քաջ գիտակը, ոչ թե ստեղծում է վարքի նոր կանոն, այլ միայն որոնում է և «դուրս է բերում», հայտնաբերում է այն շարիաթում, որտեղ այդ որոշումը պարունակվում էր իսկզբանե՝ եթե ոչ նրա ճշտիվ և տեսանելի դրույթներում, ապա նրա բազմանշանակ հրահանգավորումներում կամ զոնե ելակետային սկզբունքներում և նախադրույթներում:

Շարիաթի նշված նպատակներն ու կողմնորոշիչները ընկած են կարծես թե կրոնի, բարոյականության և իրավունքի միջև: Դրանք վկայում են, որ շարիաթը ոչ միայն կրոնական երևույթ է, այլև բավականին ճկուն համակարգ՝ միտված երկրային խնդիրներին, իրական կյանքին: Օրինաչափ է հետևաբար, որ զուտ աշխարհիկ հարցերի լուծման ժամանակ կրոնա-էթիկական սկզբունքները, որպես կանոն, փոխգործակցում են բուն իրավական սկզբունքների հետ, որոնց վերլուծումն առանձնապես կարևոր է մուսուլմանական իրավունքի հետ շարիաթի հարաբերակցության մեջ ճիշտ բնույթը հասկանալու համար:

Բանն այն է, որ եթե շարիաթը վերցնենք, ինչպես դա ընդունված է, որպես ամբողջականություն, ապա նրանում կհայտնաբերենք իրավական բնույթի համեմատաբար քիչ դրույթներ, այն էլ հիմնականում ամուսնական-ընտանեկան ու ժառանգական հարաբերություններին վերաբերող:

Այս շրջանակներից դուրս շարիաթն իր ճշտի և բուն սեփական հասկացմամբ պարունակում է իրավունքի աղբյուր լինելու միայն պոտենցիալ հնարավորություն: Նման հնարավորությունը իրականություն է դառնում միայն այն ժամանակ, երբ **Ղուրանի** տողերը (այսթները) կամ ավանդույթները (հադիսները) ստանուն են իրավական մեկնաբանություն:

Շարիաթի նման մեկնիչի դերն ստանձնել է մուսուլմանական-իրավական դոկտրինը (ֆիկհ): Որպես շարիաթական գիտություններից մեկը, այն ունի արտա-

հայտված կրոնական ուղղվածություն, ինչն անդրադառնում է նաև մուսուլմանական իրավունքի բնույթի վրա: Կրոնի, ֆիլիհի և իրավունքի փոխկապակցությունն օրինաչափ է: Մուսուլմանական աշխարհում կրոնական աշխարհահայեցողության գերիշխման պայմաններում մուսուլմանական-իրավական դոկտրինի ուղղվածությունը դեպի իսլամի հիմնարար դոգմաները անխուսափելի էր: Դոկտրինի հետ մեկտեղ կրոնի հետ սերտ կապակցության մեջ հայտնվեց նաև բուն մուսուլմանական իրավունքը: Չէ, որ դարերի ընթացքում նրա հիմնական աղբյուրը (արտաքին ձևը) հանդիսանում է դոկտրինը, ինչը նույնպես օբյեկտիվորեն պայմանավորված էր. հենց դոկտրինը դարձավ այն ամենաընդունելի ձևը, որի շրջանակներում կրոնական գաղափարը կարող է գործակցել իրավական սկզբունքի հետ:

Այդուհանդերձ դոկտրինի՝ որպես իր ելակետային կանխադրույթներով կրոնական երևույթի ընկալումն ու գնահատումը, պահանջում է որոշակի պարզաբանումներ: Բանն այն է, որ բացահայտ կրոնական ուղղվածությունը բնորոշ է դրա ամենաբարձր մակարդակին, որը կարելի է անվանել մուսուլմանական իրավունքի ելային սկզբները աստվածային հայտնության նրանց տրվածությամբ: Մասնավորապես, իսլամական իրավահասկացումը ելնում է այն բանից, որ իրավունքը սկզբունքորեն ոչ թե մարդու կամ պետության ստեղծածն է, այլ հանդիսանում է **Ալլահի** կամքի արտահայտություն: Մարդիկ ի վիճակի են միայն իրավական որոշումներ գտնել շարիաթի ընդհանուր շրջանակներում: Ըստ էության խոսքը ոչ թե բուն իմաստով իրավաստեղծության, այլ կանոնակարգիչ լիազորությունների մասին է, որոնցով ղեկավարվում են մուսուլմանական իրավագետները՝ շարիաթի գիտակները:

Մուսուլմանական իրավագիտակցության նման յուրահատկությունը արտաքուստ կրոնական բնույթ էր հաղորդում նաև բուն մուսուլմանական իրավունքին, որի ուղղվածությունը շարիաթին հանդիսանում էր դրա լեգիտիմության պարտադիր պայմանը: Կապվածությունը շարիաթին կրոնական հիմնավորումը ապահովում են մուսուլմանական իրավունքի հե-

ղինակությունը մահմեդականի մոտ, որն ընկալում է այդ իրավունքը որպես աստվածային լուսի արտացոլանք և իր հավատքի սկզբունքների մարմնավորում: Եթե իրավունքը չունենար այդ հատկանիշները, այն չէր կարող գործել իսլամական հասարակության մեջ, այն էլ ամենաթափանց սոցիալ-կրոնական վերահսկողության պայմաններում:

Ինչպես և ցանկացած իրավական համակարգի, այնպես էլ մուսուլմանական իրավունքի համար բնորոշ է իրավունքի երեք դրսևորումների՝ նորմի, իրավագիտակցության և վարքի փոխկապակցվածությունների առանձնահատկությունը: Մուսուլմանական իրավունքն աչքի է ընկնում նրանց մերձեցման ավելի մեծ աստիճանով, երբ իրավական նորմն ընկալվում է հավատացյալների կողմից որպես պարտի և արդարի մասին իրենց պատկերացումների դրսևորում, ինչը նախապայմանավորում է նաև նրանց պատրաստակամությունը ենթարկել իրենց վարքը տվյալ կանոնին: Ամենայն հավանականությամբ, այս եռամիասնության մեջ կենտրոնական դերը պատկանում է հենց իրավագիտությանը, դրա գերագույն մակարդակը մարմնավորող դոկտրինը ոչ միայն հանդիսանում է իրավունքի առաջատար աղբյուր, այլև ապահովում է նրա համապատասխանությունը իշխող զանգվածային իրավագիտակցությանը:

Դրա հետ մեկտեղ, մուսուլմանական իրավունքի լեգիտիմությունն ապահովող իսլամական իրավունքի փիլիսոփայության և ընդհանրապես իրավագիտակցության կրոնական բնույթի մասին եզրկացությունը չպետք է անվերապահորեն տարածել հենց իր վրա: Կրոնի հետ սերտ փոխգործակցությունը բնորոշում է ոչ այնքան մուսուլմանական իրավունքի սեփական բնույթը, որքան նրա ընկալման առանձնահատկությունը, գործողության արդյունավետությունը, գաղափարական հատուկ դերը: Այդ պատճառով էլ սխալ կլինի շարիաթը շփոթել մուսուլմանական իրավունքի հետ: Շարիաթը, որին հաճախ անվանում են «աստվածային օրենք», ընդհանուր առմամբ կրոնական, այլ ոչ իրավական երևույթ է: Այն ընդհանուր աշխարհահայեցողական հիմք է հանդիսանում մուսուլմանական իրավունքի՝ որպես

համենատաքար ինքնուրույն երևույթի համար, որը կապված է կրոնի հետ՝ առաջին հերթին իսլամական իրավագիտակցության միջոցով: Սխեմատիկ կերպով կրոնի, դոկտրինի և իրավունքի փոխկապակցվածությունը իսլամում կարելի է պատկերացնել հետևյալ կերպ. **Ղուրանն** ու սուննան, այսինքն կրոնական հրահանգավորումները կազմում են բովանդակությունն ու աղբյուրը շարիաթի, որն իր հերթին, հիմք է հանդիսանում մուսուլմանական իրավունքի առաջատար աղբյուր հանդիսացող դոկտրինի (ֆիկհի) համար:

Սակայն մուսուլմանական իրավունքի բնույթը կայանում է ոչ թե աստվածային հայտնությանը նրա ստորադասության, այլ նախևառաջ նրանում իրավունքի գաղափարի արտացոլման մեջ: Միայն դոկտրինի կողմից արտաքնապես ձևակերպված նորմերը, սկզբունքներն ու կառուցվածքներն են համարվում շարիաթից՝ **Ղուրանից** և սուննայից «դուրս բերված»: Սակայն գործնականում դրանք բավականին հաճախ զգալիորեն հեռանում են սրբազան տեքստերի սկզբնական իմաստից: Ֆիկհը կաշկանդված չէ դրանց բառացի ձևակերպումներով: Իրավական դոկտրինի կողմից իմաստավորման շնորհիվ շարիաթի հրահանգավորումների կարծես թե առանձնացումն է նրա ընդհանուր բովանդակությունից, դառնում են համենատաքար ինքնուրույն և ձեռք են բերում իրավական գծեր: Ավելի ստույգ ասած, **Ղուրանի** որոշ այաթների և սուննայի հադիսների մեջ դոկտրինը ներդնում է իրավական իմաստ, իսկ մյուսները նրա համար դառնում են հիմք, աղբյուր, ելակետ իրավական եզրահանգումներ անելու համար: Շարիաթի իրավական իմաստավորման գործում դոկտրինի որոշիչ դերը առավել ցցուն կերպով դրսևորվում է դեռ միջնադարում ձևակերպված իրավունքի ընդհանուր սկիզբներում: Դրանց հեղինակությունը ակնառու արտահայտվեց նրանում, որ դրանցից 99-ը պաշտոնապես ներառվեցին այսպես կոչված **Մաջալլայի**՝ 1869-1876 թվականներին Օսմանյան կայսրությունում ընդունված քաղաքացիական ու դատական իրավունքի հարցերով մուսուլմանա-իրավական նորմերի ժողովածուի մեջ:

Բերենք միայն մի քանիսը շարիաթի իրավական սկզբունքներից, որոնցից շա-

տերը արտացոլում ու իրավաբանական լեզվի են «թարգմանում» շարիաթի կրոնական կանխադրույթները: Այսպես, օրինակ, շարիաթի համար բնորոշ ձգտումը մարդուն չճանրաբեռնել չափազանց կոշտ և ավելորդ պարտավորություններով իր դրսևորումն է գտնում իրավական այնպիսի սկզբունքներում, ինչպիսիք են **«դժվարեցումը բերում է թեթևացում»** կամ **«անհրաժեշտությունն արգելվածը դարձնում է թույլատրելի»**: Մի շարք սկզբունքներում նկատելի է վնաս հասցնելը բացառելու կամ ըստ ամենայնի նվազեցնելու ցանկություն. **«վնասը պետք է փոխհատուցվի»**, **«վնասը չի կարող հատուցվել վնաս հասցնելով»**, **«թույլատրվում է մասնակի վնասի հասցնում՝ ընդհանուր վնասը կանխելու նպատակով»**, **«երկու չարիքներից ընտրվում է նվազագույնը»**, **«փչացման կանխարգելումը օգուտից գերադասելի է»**: Անհատական շահերի և իրավունքների, հատկապես սեփականության՝ որպես շարիաթի կողմից պահպանվող արժեքի ապահովման հանդեպ ուշադրությունն է ընկած «ուրիշի ունեցվածքի տնօրինման մասին հրամանն անվավեր է», **«ոչ ոք չի կարող տնօրինել մեկ այլ անձի սեփականությունը առանց նրա թույլատվության»** և **«ոչ ոք չի կարող սեփականացնել ուրիշի ունեցվածքը առանց իրավական հիմնավորման»** սկզբունքների հիմքում:

Արդարության դուրանական գաղափարը կոնկրետացվում է իրավական սկզբունքներով, որոնք, ըստ էության, հիմնավորում են անմեղության կանխավարկածը. **«ելային է համարվում ունեցվածքային պարտավորությունների բացակայության մասին ենթադրությունը»**, **«ապացուցման պարտականությունը դրված է հայցվորի վրա, իսկ պատասխանողին բավական է երդվել»**: Ի դեպ երդումը դատարանում պարզ կերպով արտացոլում է կրոնական և իրավական սկզբունքների փոխգործակցությունը իրավաբանական հարցերի լուծման ժամանակ: Համանման մոտեցում է նկատվում նաև իրավական այն սկզբունքների վերաբերյալ, որոնցում արտացոլվում է մարդու վարքի գնահատականի կախվածությունը նրա ներքին մղումներից. **«Գործերը գնահատվում**



են՝ ըստ դրանցով հետապնդվող նպատակների», «գործարքների բովանդակությունը կախված է ոչ թե բառերից, այլ որոշվում են այն նպատակներով, որոնք հետապնդվում են դրանց կայացման ժամանակ, և այն իմաստով, որը ներդրվում է դրանց մեջ»: Հետաքրքիր է համեմատել նման տեսակետը հակառակ շեշտադրման հետ, որը վերաբերվում է վարքի ձևական առումներին և ամրագրված է հայտնի հադիսում. **«Մենք դատում ենք գործի արտաքին, տեսանելի կողմի համաձայն, իսկ դրա թաքուն իմաստը գիտի միայն Ալլահը»**: Նշված սկզբունքները մուսուլմանական իրավագետները ձևակերպել են մուսուլմանական իրավունքի բոլոր աղբյուրների և այդ իրավունքի գործողության բազմադարյա պրակտիկայի խելամիտ իմաստավորման արդյունքում: Դրանց մշակումը մուսուլմանական իրավաբանության զգալի ավանդ է շարիաթի զարգացման գործում և միաժամանակ՝ համաշխարհային իրավական մշակույթի սպեղանին: Տվյալ սկզբունքները ունեն իրավական բնույթ և կրոնական էություն չեն կրում: Հատկանշական է, որ դրանց թվում չկա **Դուրանի** ոչ մի այսպիսի, իսկ որոշ հադիսներին տրվել է զուտ իրավական իմաստ: Մուսուլմանական-իրավական դոկտրինը դիտարկում է իրավունքի ընդհանուր սկզբունքները որպես ելային պահանջներ, չափանիշներ և կողմնորոշիչներ, որոնց պետք է համապատասխանի իրավական ցանկացած գնահատական: Դրանք չեն կարող անմիջականորեն կիրառվել դատարանի կողմից, սակայն օգտագործվում են դատարանում դոկտրինի կողմից առաջարկվող բազմաթիվ եզրահանգումներից կոնկրետ

իրավական որոշում որոնելու և գտնելու համար: Հենց այդ սկզբունքներն է առաջին հերթին մշմարում մուսուլմանական իրավունքի իրավաբանական բնույթը, որը նման հասկացմամբ հանդիսանում է բնական իրավունքի տարբերակ, սակայն կարող է այդպիսին կոչվել ոչ այն պատճառով, որ նրանում մարմնավորվում է աստվածային հայտնությունը, այլ դրա ընդհանուր սկզբունքի բնույթի հիման վրա: Սրանք բնական-իրավական բնույթը կայանում է նրանում, որ դրանք ոչ միայն արտահայտում են իրավական սկիզբը, այլև պաշտոնապես դիտարկվում են որպես օրենսդրին ուղղված պարտադիր պահանջներ:

Միաժամանակ մուսուլմանական իրավունքը հանդես է գալիս որպես պոզիտիվ իրավունք՝ այն չափով, որքանով դոկտրինի կողմից մշակված դրա նորմերն ու սկզբունքներն իրագործվում են պրակտիկայում: Ընդ որում՝ հարյուրամյակների ընթացքում բուն դոկտրինն անմիջականորեն հանդիսանում է մուսուլմանական պոզիտիվ իրավունքի առաջնային աղբյուր: 19-րդ դարից սկսած այդ նորմերն ու սկզբունքներն ավելի ու ավելի հաճախ են ընդգրկվում օրենսդրության մեջ և սկսվում է դրանց կոդավորման գործընթացը: Ժամանակակից աշխարհում մուսուլմանական իրավունքը գոյատևում և սերտորեն համագործակցում է իրավական այլ մշակույթների հետ: Նրա այդպիսի համատեղելիությունը, իր նորմերի և սկզբունքների ներառումը եվրոպական օրինակների վրա՝ հիմնված պոզիտիվ օրենսդրության վրա, պայմանավորվում է մուսուլմանական իրավունքի մշված դրույթների հենց իրավական բնույթով:



# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 83 2014

## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԶԳ դատախազության պատվիրակության այցը ԼՂՀ ..... 2
- Ասուլիս ԶԳ գլխավոր դատախազությունում ..... 3
- Նախաքննական տվյալների հրապարակումը քրեորեն պատիժելի է ..... 4
- Միջազգային կապեր ..... 5
- Վետերանների պարգևատրում ..... 6
- Նշանակումներ ԶԳ դատախազության համակարգում ..... 7
- Կորուստ ..... 7

### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

- Միեր ԶԱԿՈՔԱՆ Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու համար դատավորին քրեական պատասխանատվության ենթարկելու օրենսդրական կարգավորման հիմնախնդիրներն ու չափորոշիչներն ..... 8

### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

- Արևհատ ԶՈՎԶԱՆՆԻՍՅԱՆ Մարդու իրավունքների հայեցակարգի համապարփակության հիմնախնդիրները ..... 16

### ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՈՒՆՔՆԵՐ

- Վաղարշակ ՂԱԶԱՐՅԱՆ Դատարանը և արդարադատությունը ընդհանուր իրավունքի համակարգում ..... 23

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

- Լիանա ՄԿՐՏՁՅԱՆ Միջազգային իրավունքի դերը սահմանադրական արդարադատությունում ..... 26

### ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Ստեփան ԴՈՒՇՉՅԱՆ Գերիշխող դիրքի չարաշահման դրսևորումները ..... 31

### ՊԵՏՈՒԹՅՈՒ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

- Արթուր ԻԿԻԼԻԿՅԱՆ Պետական ինքնիշխանության և ազգային ինքնիշխանության հարաբերակցության հիմնահարցերը ..... 38

### ԱՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

- Ալֆրեդ ՍԱԴՈՅԱՆ Իրավունքի դերն ու նշանակությունը հասարակության զարգացման գլոբալացման փուլում ..... 44

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Անի ՄՈՒՐԱԴՅԱՆ Սահմանադրությունների ձևավորման և պատմական զարգացման առանձնահատկությունները ..... 48

### ՔԱՂԱՔՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Աննա ՄԱՍՍՅԱՆ Կնքվող պայմանագրի կոնտրագենտին ազատորեն ընտրելու իրավունքի իրականացման առանձնահատկությունները ..... 53

### ԳԼՈՔՈՒՍ

- Ալի ԶԻՆԻ Շարիաթը և մուսուլմանական-իրավական մշակույթը ..... 58